

# ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ



ՄԵՆՔ

ԸՆՏՐՈՒՄ ԵՆՔ

ԱՊԱԳԱՆ



# ՀՀ նախագահի ՀՅԴ թեկնածուն Վահան Հովհաննիսյանն է



1990-ականների սկզբից մինչ օրս իշխանությունից իշխանություն, կառավարությունից կառավարություն ժառանգաբար փոխանցվող ազատական գաղափարների ծայրահեղական ընկալումների կիրառումը, ազատ շուկայի կարգավորման գործում պետության դերի խեղաթյուրումը հանգեցրել են ներկա տնտեսական կարգին, երբեկիրը կառավարվում է իշխանություն ունեցող տնտեսական խմբավորումների միջոցով: Այդ խմբավորումները մենաշնորհել են տնտեսության առավել շահութաբեր ճյուղերը՝ ձեռավորելով ազատ մրցակցությունից գրեթե զուրկ միջավայր:

Արմատ առնելով տնտեսությունից եւ սերտաձելով իշխանության հետ՝ մենաշնորհները վաղուց դադարել են միայն տնտեսական երեւոյթ լինելուց: Դրանք որոշիչ ազդեցություն ունեն հասարակության կենսագործունեության բոլոր կողմերի վրա՝ սկսած պետական-սահմանադրական կարգից մինչեւ հասարակության արժեքային համակարգը, մշակույթը եւ բարոյական ոլորտը: Ծախսելով զգալի միջոցներ եւ գործի դնելով իր տրամադրության տակ եղած վարչական հսկայական ռեսուրսը՝ այդ խավը պարբերաբար վերարտադրում է ինքն իրեն՝ արգելակելով քաղաքական համակարգի կայացման գործընթացը:


Իշխանություն ունեցող դրամատերերի խմբավորումները հաճախ իրենց վեր են դասում օրինականությունից եւ երկրի պետական կարգից, արհամարհում են մարդկային ազատությունների ընդունված նորմերը, արգելակում են ժողովրդավարական մշակույթի ձեռավորումը՝ ընտրությունների ժամանակ գնելով տնտեսապես անազատ ընտրողների քվեները: Ծահագրգռված չլինելով տնտեսավարման արդյունավետ մեթոդների ներդրմամբ՝ իրենց անվերահսկելի տնտեսական գործունեությամբ վտանգավոր չափերի են հասցնում սոցիալական բեւեռացումը՝ բացառելով հասարակական համերաշխության հասնելու որեւէ հնարավորություն:

Ումի՞ց սպասենք, ումի՞ց պահանջենք անհրաժեշտ համակարգային փոփոխությունները: Այսօր նորից ակտիվացած երեկվա իշխանությունների՞ց: Բացառված է: Նրանց հիշում ենք, դեռ չենք մոռացել: Այսօրվա իշխանությունների՞ց: Փորձել ենք:

Եւ ինչու՞ պետք է ընտրություն կատարենք անպայման անցյալի եւ ներկայի միջեւ: Բավական է: Մենք ընտրում ենք ապագան: Բավական է: Մենք ընդունակ ենք եւ պատրաստ ենք ինքներս իրականացնել համակարգային փոփոխություններ:

Վահան Հովհաննիսյան







# ԴՐՕՇԱԿ

Հ.Յ.Գ. ԲԻՒՐՈՅԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
A.R.F. BURO  
LIBRARY

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ



“Դրօշակ” ամենամսյա պաշտոնաթերթ  
Հայ Հեղափոխական Դաշնակցություն:  
Հիմնադիր՝ ՀՅԴ  
Գլխավոր խմբագիր՝ Ռուբեն Հովսեփյան  
Խմբագիր՝ Կ. Խանլարյան  
Համակարգչային շարվածքը՝ Ս. Խաչատրյանի  
Ձեռավորումը՝ Մ. Հովսեփյանի  
Գրանցման վկայական 897  
Երևան, 375010, Միեր Մկրտչյան 12/1  
Հեռ. 521 876  
Էլ. փոստ. droshak@arf.am  
Տպագրությունը՝ «Գևորգ-Հրայր» ՍՊԸ-ի

“Droshak” monthly, ARF dashnaktsoutian  
publication  
12/1 Mher Mkrtchian, Yerevan, 375010  
Tel. 521 876  
e.mail: droshak@arf.am  
Editor-in-Chief: Rouben Hovsepien

## Համազործակցություն

4 ՀՅԴ-ՌԱԿ միջկուսակցական համաժողովի  
հայտարարություն

## Սոցիալ-տնտեսական

7 Տնտեսական միջերևույթի և իրական տնտեսություն

## Տեսակետ

15 Հակամարտությունների լուծման նոր  
տրամաբանություն և չփոփոխվող քաղաքականություն

## Միջազգային կյանք

18 Չինական «փափուկ ուժի» ծագումը

## Պատմա-մշակութային

24 Հասարակական երեսույթների  
մշակութային-խորհրդանիշային տեսանկյունը

## Հնադարյան

33 Խրիմյան Հայրիկ-Շենրի Ֆինիս Բլոս Լինչ

## Նամականի

36 Արշալույս Աստվածատրյանի նամակները Միմոն  
Վրացյանին

## Խմբագրի անկյուն

47 Հերակլեսի 5-րդ սխրագործությունը

## Թերթեկով “Դրօշակ” - ի Էջերը

49 Ի՞նչ է գրել «Դրօշակը» 100 տարի առաջ

## Նոր գրքեր

51 Նյութեր ՀՅ Դաշնակցության պատմության համար

## “Դրօշակ” - ի պատկերասրահ

52 Մոնի Հովսեփյան





# 117 - ԱՄՅԱ

## ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

**Դ**աշնակցությունը ստեղծվեց ե՛ւ հայ ժողովրդի անմիջական շահերը պաշտպանելու ու նրա առօրյա հոգսերը փարատելու համար, ե՛ւ նրա գերագույն իղծերն ու իղեալները ձեւավորելու, մարմնավորելու համար:

Խանասորում ու Խաստուրում, բանկ Օտոմանում ու Սամաթիայի ռմբային ակտում, Վանի, Ուրֆայի ու Շապին-Գարահիսարի ինքնապաշտպանություններում, Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերում, Լիսաբոնյան սխրանքում, Շուշիի, Կրկժանի, Մարտակերտի ու ամբողջ Արցախի ազատագրական գործողություններում նա իր կենսափորձով ապացուցեց իր անմնացորդ նվիրումը, իր ամենաբարձրագույնը զոհասեղանին նվիրաբերելու պատրաստակամությունը եւ նվաճեց ծնող ժողովրդի վստահությունը:

Պատմության վիթխարի գլանը իր հուժկու թավալումների տակ չկարողացավ հարթել Դաշնակցության էությունից բխած նրա սկզբունքայնության, գաղափարականության եւ զոհաբերության ցցուն հատկանիշները: Ժամանակի հոսքը միայն սատարեց նրան՝ թոթափելու փտածն ու մաշվածը, անպետքականն ու ժամանակա-

վրեպը: Դաշնակցության էությունը, սակայն, մնաց անփոփոխ:

Ահա Դաշնակցությունը նույն ազգայնության գաղափարներով է դիմագրավում հայ ազգի ինքնության դեմ ծառացող, մեկ կողմից, աշխարհաքաղաքացիական գլոբալիզացիայի տարածած սպառողական մշակույթի եւ միսիոներական այլանդակությունների սպառնալիքները, իսկ մյուս կողմից՝ արտաքուստ ազգային համեմներով մատուցվող, բայց խորքում մեծապետական նպատակներին ծառայող ցեղապաշտության, ազգայնամոլության եւ կեղծ ազգայնական սնապարծության ալիքները:

Դաշնակցությունը նույն սոցիալիստական գաղափարներով է ըմբոստանում կապիտալիստական մտածողության, հասարակական եւ մարդկային անարդարության դրսեւորումների, շահագործման երեւույթների, արտատնտեսական, կլանական վնասակար տարրերի դեմ:

Դաշնակցությունը նույն ժողովրդավարական գաղափարներով է մարտնչում ազատ մարդու եւ ազատ քաղաքացու լիարժեք ազատության ու կամքի անկաշկանդ արտահայտության համար, հայաստանյան քաղաքական դաշտը տոգորելով հաստատութենականության,



անոխակալության եւ հավաքական ղեկավարման ու պատասխանատվության մշակույթով:

Դաշնակցությունը նույն հեղափոխականության ոգով է շարունակում պայքարել մարդկային, ազգային եւ հասարակական անարդարության, Հայ դատի արդար լուծման, Լեռնային Ղարաբաղի լիակատար անկախության ու ազատագրության ուղղությամբ:

Եվ ահա իր գաղափարականությանն ու պատմությանը հենված, Դաշնակցությունը որոշում է ընդունել սեփական թեկնածուով մասնակցել ՀՀ նախագահական ընտրություններին՝ քաղաքական կյանքում ամբողջական պատասխանատվություն ստանձնելու մտադրությամբ:

Որքան էլ զայրույթի պատրվակ հանդիսանա, որքան էլ աներելույթ սպառնալիքների տեղիք տա այլ-ընտրանքային այս կեցվածքը, այսուհանդերձ դրանից չի հրաժարվելու Դաշնակցությունը, քանզի արժեքային համակարգից բխող նրա սկզբունքայնությունը քաղաքական պահի թելադրանքներից ավելի բարձր է, ավելի խորքային, ավելի երկարատեւ:

Դաշնակցորդությունը վճռել է կտրուկ փոխել երկրի ներկա իրավիճակը...

Նախ ասենք, որ մեր համոզմամբ սոցիալ-տընտեսական անապահով եւ անբարենպաստ կացությունը ազգային անվտանգության հիմնահարց է, եւ ոչ թե հին ու նոր կամ հին ու քիչ ավելի հին հարստահարող ու հարստացող խմբակների մրցակցության խնդիր: Որովհետեւ ժողովրդավարությունը, առանց սոցիալական արդարության, ձեւական կարգի է վերածվում եւ ծառայում խոշոր կապիտալի տերերին, մոնոպոլիզացիայի նախագծողներին, ստվերային տնտեսությանը: Շատ պարզ է, որ սոցիալապես անապահով հասարակություններում ընտրակաշառքների շրջանառությամբ կարելի է դառնում քվե ապահովել նաեւ քաղաքական այն խմբերի համար, որոնք աներաշխիք օրենքների մշակման ճամփով հնարավոր են դարձնում շահագործման եւ հարստահարման ընդհանուր դրության իրականացումը:

Ուրեմն, գտնում ենք, որ շուկայական հարաբերությունների ֆորմացիան ընդամենը միջնափուլ է տոտալիտար, պետական կապիտալիզմից, ժողովրդավարական ճամփով եւ իրավական դաշտի վերափոխությամբ, դեպի արդար եւ լիարժեք ազատ հասարակարգ անցնելու համար:

Ձգտում ենք այս ուղղվածությունից չչեղվի երկիրը: Ուստի հարցի լուծումը չի կայանում պահպանողականներին նոր-ազատականներով, «սափրագլուխներին»՝ «սափրամորուքներով», կամ ներկա իշխանախմբին՝ նախկին իշխանախմբով փոխարինելու մեջ:

Հարցի լուծումը գերազանցապես համակարգային է:

Պատկերացնում ենք, սակայն, որ առաջիկա նախագահական ընտրապայքարի դաշտում մրցակցության մի մասն էլ ընթանալու է նեղ, ճղճիմ ու սոսկ անձնավորված ավազանների մեջ՝ թե հիմա վերստին նավարկելու ում հերթն է հասնում...

Այս կապակցությամբ էլ ուզում ենք շատ պարզ հարցեր տալ. արդյոք կարելի՞ է «ազատ շուկայական» մտակեցվածքներով հակակշռելի դարձնել սանձարձակ շուկան եւ գնագոյացման անկառավարելի կարգը: Արդյոք կարելի՞ է կոռուպցիան նվիրականացրած հին անձնակազմերով ոչնչացնել նորոգված, պրոֆեսիոնալացված կոռուպցիան: Արդյոք կարելի՞ է վաղ կապիտալիստական, խակ լիբերալական գաղափարներով պայքարել արդեն կոշտացած, արմատավորված կապիտալիզմի դեմ... Իհարկե՞ ոչ:

117-ամյա Դաշնակցությունը մասնակցելու է նախագահական ընտրություններին ոչ միայն սեփական թեկնածուով, այլեւ իր ուրույն գաղափարական ընկալումներով եւ, իհարկե, այն համոզմամբ, որ իրավական դաշտի, սոցիալական իրավիճակի, տնտեսական կացության եւ մշակութային, հոգեմտավոր կյանքի ամբողջական բարեփոխմամբ կարելի է քայլել դեպի հզոր Հայաստանի տեսլականը:





# ՀՅԴ ՌԱԿ

## ՄԻՋԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Յ**այ Յեղափոխական Դաշնակցության և Ռամկավար Ազատական Կուսակցության պատվիրակները, 6 նոյեմբեր 2007-ին, համախմբված երեւանի մեջ, քննարկեցին Հայրենիքի և Սփյուռքի մեջ հայ ժողովուրդի դիմագրված հիմնախնդիրները և համաձայնություն գոյացուցին համազգային այդ հարցերու լուծման շուրջ խորացնել միջկուսակցական համագործակցությունը:

### ՀՅԴ-ՌԱԿ միջկուսակցական համաժողովը հաստատեց.

- ա) Հայաստանի Հանրապետությունը համայն հայության հայրենիքն է. անհրաժեշտ է արագացնել համայն հայության Հայաստանի քաղաքացի դառնալու հնարավորություն տվող օրենքի կիրարկումը:
- բ) Հայաստանի Հանրապետության մեջ տիրող ներկա վիճակը թերի է և ոչ-գոհացուցիչ: Հայաստանի Հանրապետության

- պետության զարգացումն ու հզորացումը կենթադրեն. Ժողովրդավարության ամրապնդում:
- Օրենքի գերակայություն և համատարած, ամբողջական արդարություն՝ առանց նվազագույն խտրականության:
- Եռյակ իշխանություններու ամբողջական տարանջատում և հատկապես դատական իշխանության կառույցի արմատական բարեփոխում:
- Միջազգային չափանիշներուն համապատասխանող արդար, ազատ և թափանցիկ ընտրություններ:
- Եղծումե և կաշառակերութենեն զերծ պետական և հասարակական կառույց:
- Պատասխանատու իշխանություն և պատասխանատու ընդդիմություն:
- Արտագաղթը կասեցնելու և հայրենադարձությունը քաջալերելու համար, ծրագրված և հետեւողական միջոցառումներու կիրարկում:
- Տնտեսության զարգացում՝ նոր աշխատատեղեր ստեղծող ներդրումներ խրախուսելու միջոցով: Տնտեսությունը զերծել մենաշնորհային ուժերու տիրապե-



տութենեն:

Չնարավոր դարձնել տնտեսական որակավոր եւ կայուն աճ երկրի կենսոլորտի, բնական հարստություններու, ժողովրդագրության, հոգեւոր եւ մշակութային, ազգային անվտանգության եւ մարդկային իրավանց առողջ նորմերու ապահովումով:

գ) Որպէս արդյունք Սփյուռքի տասնամյակներու պայքարին եւ նորանկախ Հայրենիքի ճիգերուն, Հայոց ցեղասպանությունը պաշտոնական ճանաչում ստացած է բազմաթիվ երկիրներու, միջազգային կազմակերպություններու եւ գիտական ու հասարակական կազմակերպություններու կողմէ: Պետական շրջանակներ եւ միջազգային հասարակական կարծիքը կը քննադատեն Թուրքիան, Հայոց ցեղասպանության հարցով իր վարած ժխտումի քաղաքականության համար:

դ) Թուրքիո պաշտոնական հակահայ քաղաքականությունը կարտահայտվի Հայաստանի եւ հայության նկատմամբ իր թշնամական քայլերով:

ե) Ցեղասպանության ամբողջական ճանաչումը անպայմանորեն կենթադրե նաեւ համապատասխան լիարժեք հատուցում, հայ ժողովուրդի մարդկային հսկայական կորուստին, հայ ժողովուրդէն հափշտակված եւ ավերված մշակութային հարստություններուն եւ հայության կալվածային, ինչքի, ստացվածքներու եւ այլ հարստություններու կորուստներուն դիմաց: Սակայն, հայ ժողովուրդի պահանջատիրությունը պայմանավորող գլխավոր ազդակը անուրանալի կերպով կը հանդիսանա հայապատկան հողատարածքներու վերադարձը իրենց իրավատիրոջ, այսինքն՝ հայ ժողովուրդին, Սեւրի դաշնագիրը եւ իրավական հստակ հիմք ունեցող Վիլսոնյան սահմանները ընդունելով իբրեւ վավերական մեկնակետ: Միջազգային իրավունքով ամրագրված հայ ժողովուրդի այս իրավունքներու ձեռք բերումը կը պահանջե Հայաստանի Հանրապետության եւ համահայկական կուսակցություններուն միջեւ աշխատանքի համադրում: Արտերկրի մէջ համահայկական կուսակցությունները պետք է գլխավորեն եւ համադրեն ցեղասպանության ճանաչման եւ պահանջատիրության առնչությամբ կատարվող աշխատանքները:

զ) Արցախի փաստացի ազատագրումը իրավականորեն (de jure) ամրագրելու համար, անհրաժեշտ է տեսա-

պէս հզորացնել Արցախը: Արցախի հզորացումը կենթադրե սահմանամերձ շրջանները դարձնել անձեռնմխելի, իսկ կենսամակարդակի շոշափելի բարելավումով, ազատագրված Արցախի մէջ բնակությունը դարձնել առավել եւս հրապուրիչ: Արցախի հիմնահարցը առաջնային տեղ պետք է ունենա մեր ժողովուրդի այսօրվան եւ վաղվան բոլոր ծրագիրներուն մէջ:

է) Արցախի հիմնահարցի կարգավորումը պետք է նվիրագործե Արցախի ինքնորոշման իրավունքը եւ երաշխավորե Արցախի եւ Հայաստանի անվտանգությունը:

ը) Ադրբեջան, Թուրքիո հետ համադրաբար, ոճրային եւ այլ քայլերով կը շարունակե իր հակահայ քաղաքականությունը, որոնց հակադարձելու լայն հնարավորություններ ունի հայությունը հատկապէս արտերկրի մէջ:

թ) Հայաբնակ Ջավախքը կենսական նշանակություն ունի Հայաստանի անվտանգության համար: Ջավախքի հայությունը կը դիմագրավե բազմաթիվ դժվարություններ, որոնք կսպառնան երկրամասի ժողովրդագրական պատկերի պահպանումին: Հետեւաբար, անհրաժեշտ է ընկերային, տնտեսական, կրթական, մշակութային եւ այլ բնույթի օժանդակություն փութացնել Ջավախք եւ ամեն ճիգ ի գործ դնել կենսունակ եւ առույգ պահելու համար ազգային ոգին: Անհրաժեշտ է նաեւ նպաստել, որ Ջավախքի հայ երիտասարդությունը ջավախքահայության բոլոր իրավունքներուն մասին իրազեկ ըլլա, եւ քաջալերել, որ ան համարկվի Վրաստանի քաղաքական եւ հասարակական կյանքին մէջ:

ժ) Անհրաժեշտ է նաեւ առավելագույն չափով Սփյուռքը իրազեկ պահել Ջավախքի անցյալին եւ ներկա իրավիճակին մասին, միաժամանակ, ծրագրյալ եւ հետեւողական հանգրվաններով համաշխարհային ուշադրության առարկա դարձնել ջավախքահայության պարագան:

ժա) Սփյուռքը ակներեւորեն կը գորանա, եթե համահայկական կուսակցությունները ազգային միասնականությամբ ներկայանան, ի խնդիր ազգային խարիսխի հզորացման: Սփյուռքի ազգային խարիսխը պայմանավորող գլխավոր գործոնը ազգապահպանումն է, հետեւաբար պետք է ջանալ, որ այդ ուղղությամբ ի գործ դրվող բոլոր ճիգերը ըլլան միաձուլլ եւ կեդրոնաձիգ: Սփյուռքի ազգային խարիսխի հզորացումը ուղղակի-



րեն կենթադրե լայնորեն ընտելանալ Հայրենիքին, մայրենի լեզվին, մշակույթին եւ պատմության, ըլլալու համար հաղորդ ազգային ոգին, զգացումներուն եւ իղձերուն:

ժբ) Կազմակերպ եւ հզոր Սփյուռքի մը բազմաբնույթ օժանդակությունը Հայրենիքին, անտարակույս, կըլլա անհամեմատորեն ավելի արդյունավետ: Սփյուռքը պետք է պահվի կազմակերպված եւ առավելագույն չափով հեռու հատվածականութենէ եւ բաժանումի առաջնորդող այլ ազդակներէ: Սփյուռքի մեջ գործող ազգային բոլոր կառույցներուն ձգտումը պետք է ըլլա տնտեսական եւ քաղաքական հզորանք ձեռք բերել, ընդհանրական միացյալ մեկ ճակատի ներքո:

ժգ) Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները առավել եւս ազդու եւ ներգործոն դարձնելու համար անհրաժեշտ է Հայաստանի մեջ անհապաղ կերպով կյանքի կոչել բացառապէս տվյալ առաքելությունը ունեցող հատուկ նախարարություն մը:

Վերոհիշյալ հաստատումներէն մեկնելով, ՀՀԴ-ՌԱԿ միջկուսակցական համաժողովը որոշեց.

1) Չարկ տալ Հայաստանի Հանրապետության զարգացման եւ հզորացման համազգային ճիգերուն՝ ապահովելով համայն հայության ներուժի արդյունավետ օգտագործումը այդ նպատակին համար:

2) Հետեւողականորեն շարունակել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումի աշխատանքները, որոնց նպատակն է պարտադրել Հայոց ցեղասպանության պատասխանատու Թուրքիայի Հանրապետության՝ ճանչնալ հայության իրավունքները: Համադրված ճիգերով միջազգային հանրության մոտ բարձրացնել անժամանցելիությունը 1920 օգոստոս 10-ի Սեւրի դաշնագրով միջազգային ճանաչում գտած հայկական իրավունքներուն,

որոնց իրավաժառանգորդն է համայն հայության հայրենիք Հայաստանի Հանրապետությունը:

3) Համագործակցիլ Սփյուռքի առավել եւս կազմակերպման ի խնդիր եւ բարձրացնել նոր մարտահրավերները դիմագրավելու անոր կարողականությունը: Այս ուղղությամբ՝ հատկապէս համագործակցիլ Լիբանանի հայության անվտանգության եւ քաղաքական ինքնուրույնության պահպանման համար:

4) Արցախի հզորացումը միշտ պահել որպէս համազգային առաջնահերթ խնդիր եւ նպաստել հիմնահարցի իրավական կարգավորման ճիգերուն: Համակարգված աշխատանքով շարունակել բացահայտել Ադրբեջանի հակահայ քաղաքականությունն ու ոճիրները:

5) Պաշտպանել Ջավախքի հայության քաղաքական ու մարդկային իրավունքները եւ նպաստել անոր ընկերային-տնտեսական եւ մշակութային-հոգեւոր խնդիրներու լուծումին. աջակցիլ Ջավախքի հայության՝ Վրաստանի կազմին մեջ ինքնավարության ձեռք բերման օրինական պահանջներուն:

6) Համատեղ ճիգերով Հայրենիքի եւ Սփյուռքի մեջ զարգացնել հայության բոլոր հատվածներուն միջեւ միասնականությունն ու համերաշխությունը՝ համազգային խնդիրներու լուծման ի խնդիր:

ՀՀԴ-ՌԱԿ միջկուսակցական համաժողովը նաեւ որոշեց կազմել ստորագիր կուսակցություններու Ղեկավարներու խորհուրդ, որ կը համակարգէ միջկուսակցական համագործակցությունը վերոնշյալ առաջնահերթություններուն շուրջ:

**ՀՀԴ ԲՅՈՒՐՈ  
ՌԱԿ ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**  
6 նոյեմբեր 2007, Երեւան





# ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՖԵՐ ԵՎ ԻՐԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Արա Նռանյան

**Պ**ատմաբանների, վերլուծաբանների, բազմաթիվ ուսումնասիրողների կողմից վաղուց փաստված է, որ մարդկության պատմության, քաղաքակրթության զարգացման, պետությունների և կազմակերպությունների գործունեության ապագայի և հետագա առաջընթացի վրա մեծապես ազդում են բազմաթիվ ենթագիտակցական երևույթներ, որոնք մեզ ուղեկցում են մանկուց:

Մարդու ուղեղում առկա են բազմաթիվ պատրաստի մոդելներ և նախապաշարմունքներ, որոնք մարդկության կողմից ընդունվում են անվերապահորեն՝ շատ հաճախ որևէ առնչություն չունենալով իրականության հետ կամ լինելով ոչ միանշանակ ընդունելի և ապացուցված:

Ցանկացած քաղաքացի կարող է խոսել Հին Հռոմի պատմության, հունական մշակույթի, չինական քաղաքակրթության, ացտեկների դամբարանների կամ Ադամ Սմիթի տնտեսագիտական տեսության մասին, առանց այդ ասպարեզներ խոր ներթափանցման, միայն

նախապաշարմունքների և պատրաստի ձևակերպումների օգտագործմամբ: Սակայն ցանկացած խնդրի առաջին իսկ մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր մեր պատկերացումներն ու կարծիքներն այնքան էլ վերջնական և անվերապահ չեն: Եվ աշխարհն ավելի բազմազան ու բազմակողմանի է, քան ներկայացվում է հասարակությանը կամ ժամանակակից մարդուն:

Կարծում եք՝ ժամանակակից աշխարհում, գիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարում, այլևս միջեր չե՞ն առաջանում: Իհարկե առաջանում են, ընդ որում ավելի բազմաբնույթ և ներգործուն, քան նախկինում: Տեղեկատվության մեծ ծավալը թույլ չի տալիս մարդուն կատարել իրական վերլուծություն և ընտրություն, տեղեկատվական այդ վիթխարի հոսքը տարբեր կողմերից խեղդում է քաղաքացուն բազմաթիվ «նորություններով» և «ապացույցներով»: Բազմակողմանիությունը և բազմազանությունը, թվացյալ այլ-ընտրանքների պայմաններում, դառնում է միակ ընդունելի և ճիշտ «ընտրությունը»:



Միջերն ակնհայտ են նաև տնտեսության ապարեզում, դառնալով տնտեսական քաղաքականության ուղենիշը: Հատկապես նման միջերի գոհեր դարձան նորանկախ երկրները (մասնավորապես՝ նախկին խորհրդային հանրապետությունները): Ջերծ չէ դրանցից նաև Հայաստանը և մեր երկրի տնտեսական քաղաքականությունը:

Ստորև ներկայացնենք մի շարք թեզեր, որոնք ընկալվում են հասարակության կողմից որպես անվիճելի հաստատումներ, ներկայացնելով դրանք ոչ անվերապահ ընդունելու հնարավորությունը:

**«Պետությունը վատ կառավարիչ է»**

Հայաստանում ձևավորվել է համատարած մի տեսակետ, համաձայն որի «պետությունը վատ կառավարիչ է»<sup>1</sup>: Այս դրույթն օգտագործվեց ամեն գնով պետական ողջ սեփականությունը մասնավոր հատվածին հանձնելու համար: Ընդ որում այս դրույթը օգտագործվեց նաև շատ մատչելի և պետության համար, ըստ էության, անթույլատրելի պայմաններով պետական սեփականությունը մասնավորին տրամադրելու հիմնավորման համար: Այնինչ՝ մենք առնվազն պետք է պատասխանեինք հետևյալ երկու հարցին.

1. **արդյո՞ք մասնավոր հատվածը ավելի արդյունավետ կառավարիչ է, քան պետությունը,**
2. **ինչպե՞ս է այս խնդիրը կարգավորվում զարգացած երկրներում:**

Հանգամանորեն անդրադառնանք յուրաքանչյուր հարցին:

Հայաստանի Հանրապետությունում մասնավորեցման գործընթացում դժվար է հիշել մի դեպք, երբ մասնավորեցված ընկերության ծառայությունները կամ թողարկվող արտադրանքը դարձել է ավելի մատչելի, ավելի էժան, քան պետական կարգավիճակում գործելուց: Ակնհայտ է, որ մասնավորեցված ընկերությունները ծախսերի նվազեցման քաղաքականություն չեն իրականաց-

րել: Եթե նույնիսկ նկատի ունենանք աշխատակազմի կրճատումները, ապա այս թվացյալ «խնայողությունը» «կոմպենսացվում» էր նոր տերերի այլ շռայլություններով, ինչպես նաև մնացած աշխատակազմի բարձր աշխատավարձերով:

Նշված մասնավորեցված ընկերությունները զերծ չեն երկրի տնտեսությունում առկա բոլոր թերություններից՝ ուռճացնում են իրենց ծախսերը և նվազեցնում հասույթները՝ շահույթը թաքցնելու և հարկերի վճարումից խուսափելու համար: Բացի հանքարդյունաբերության ձեռնարկություններից, մատների վրա կարելի է հաշվել այն ընկերությունների թիվը, որոնց հաշվեկշռային շահույթը աճել է<sup>2</sup>: Պատճառներից մեկն այն է, որ պետությունը հարկերն հավաքում է անուղղակի հարկերի տեսքով, այլ ոչ թե ուղղակի: Պետական բաժնեմասով ընկերությունները, ի տարբերություն ոչ պետական ընկերությունների, մի շարք պատճառներով հակված չեն ստվերային տնտեսական գործունեության:

Հարց է առաջանում, թե ո՞րն է մասնավոր ընկերությունների «արդյունավետության» գաղտնիքը: Համաշխարհային բանկը դեռևս 2004 թվականին, ուսումնասիրելով Ռուսաստանի Դաշնության տնտեսությունը 1300 ընկերությունների օրինակով, հանգել էր հետևյալ, շատերի համար անսպասելի եզրակացության՝ մասնավորեցված ընկերությունների և մեծահարուստների բիզնեսի հաջողությունը ոչ թե լավ կառավարումն է, այլ մենաշնորհային վիճակը: Համաձայն այդ ուսումնասիրության, օրինակ, նավթարդյունաբերության կամ բնական պաշարների շահագործումով զբաղվող ընկերությունների գերշահույթները պայմանավորված են ոչ թե նրանով, որ օլիգարխները շատ ավելի լավ կառավարիչ են, քան պետությունը, այլ իրենց փաստացի մենաշնորհային և արտոնյալ դիրքով: Ավելին, իրենց այդ մենաշնորհային վիճակն է հանգեցրել նրան, որ թե ծախսերի կառավարման, թե կառավարման արդյունավետության բարձրացման կամ մարկետինգի իրականացման մասով նրանք զիջում են փոքր ընկերություններին: Եզրակացությունը հետևյալն էր՝ պետությունը ավելի շատ կորցնում է նման «արդյունավետ» կառավարումից, իսկ մասնավոր այդ ընկերու-



թյունները ոչ թե ավելի լավ կառավարիչ են, քան նախկինում պետության կողմից նշանակված կառավարիչները, այլ ուղղակի օգտվում են իրենց, ըստ էության, մենաշնորհային և «արտոնյալ» կարգավիճակից<sup>3</sup>:

Իսկ հիմա անդրադառնանք միջազգային փորձի օրինակին: Հայաստանում ներկայացվում է, որ ամբողջ աշխարհում պետական կառավարումն իր լծակները հանձնել է մասնավոր կառավարիչներին: Ասում ենք՝ և «Արմենտելը» մասնավորեցնում հունական պետական ընկերությանը: Մենք ամեն ինչ արեցինք վերացնելու «Հայկական ավիաուղիներ» ընկերությունը, այնինչ բոլոր եվրոպական երկրներում ազգային փոխադրողները ոչ միայն գտնվում են մշտական պետական հոգածության և կառավարման տակ, այլև ստանում բարոյական և այլ տիպի պետական աջակցություն: Եթե 20 տարի առաջ Air France ընկերությունը ծաղրուծանակի առարկա էր որպես հավերժորեն վնասաբեր ավիաընկերություն, ապա 1990-ական թվականների կեսերից պետական կառավարիչների նշանակումը և կառավարության ֆինանսական աջակցությունը դարձրեցին ավիաընկերությունը արդյունավետ և ժամանակակից կառույց<sup>4</sup>: Նա միակն էր բոլոր խոշոր ավիաընկերություններից, որ 2001 թվականի սեպտեմբերի 11-ից հետո տարին փակեց շահույթով, իսկ քիչ անց իր վերահսկողության տակ վերցրեց հոլանդական հզոր KLM ընկերությունը: Հիշենք թեկուզ եվրոպական երկրների առանձնահատուկ ուշադրությունը իրենց արդյունաբերության և գյուղատնտեսության նկատմամբ, ինչը թույլ տվեց պահպանել տնտեսական հզորությունները և ունենալ մրցունակ և ուժեղ ընկերություններ:

Կարելի է հիշատակել նաև հարավարևելյան Ասիայի մի շարք երկրների օրինակը: Այսպես, Մալայզիայում մասնավորեցնում էին ոչ թե վնասաբեր, այլ շահութաբեր ընկերությունները. եթե ընկերությունը դառնում էր վնասաբեր և կանգնում փակվելու (սնանկ ճանաչվելու) վտանգի առջև, կառավարությունն ազգայնացնում էր այդ ընկերությունը, արդյունավետ կառավարման և պրոտեկցիայի շնորհիվ դարձնում շահութաբեր ընկերություն, որից հետո նոր մասնավորեցնում:

Օրինակները շատ են և կարող են ներկայաց-

նել փաստեր թե պետական արդյունավետ կառավարման, թե պետական կառավարման փաստացի ձախողման վերաբերյալ: Միանշանակ է մի բան. բոլոր զարգացած երկրներն առաջնորդվում են ոչ թե «աքսիոմներով» կամ քարացած թեզերով, այլ կոնկրետ իրավիճակով: Ոչ ոք հզոր պետություններում չի ասում, թե միանշանակ լավ է մեկ տարբերակը, իսկ մյուսն անընդունելի: Այս առումով նրանք ազատ են պահում իրենց տնտեսական միտքը նման միջերից:

Եթե Հայաստանում պետական սեփականության ոլորտում գտնվող ընկերություններն ունենային այնքան «բոնուսներ», որքան պետական սեփականության նոր տերերը<sup>5</sup>, ապա մենք կունենայինք ժամանակակից մրցունակ և շահութաբեր ընկերություններ, որոնք գտնվում են պետության վերահսկողության տակ և իրագործում են պետության ռազմավարական քաղաքականությունը:

Ի վերջո այս խնդրի մեջ կա նաև պետական առաջնայնությունների և կառավարման արդյունավետ մեթոդների ներդրման խնդիրը: Հայաստանում բացակայում են պետական հատվածի կառավարման չափորոշիչները, ինչպես, ասենք, աշխատատեղերի քանակը, միջին աշխատավարձի չափը, շուկայում տեսակարար կշռի ապահովումը, անհրաժեշտ շահութաբերության մակարդակի ապահովումը և այլն: Անկասկած, նմանատիպ չափորոշիչների սահմանումը և կառավարչի կողմից ապահովումը կձևավորի վերահսկողության և գնահատման համապատասխան համակարգ, ինչը գոյություն ունի զարգացած պետություններում:

Փաստորեն, այս միջի ձևավորումն ընդամենը նպաստեց արագացված տեմպերով պետական սեփականության փոշիացմանը և սեփականաշնորհմանը:

**«Պետական բյուջեի դեֆիցիտը վատ բան է»**

Միջերի ամենահետաքրքիր օրինակներից է պետական բյուջեի դեֆիցիտի խնդիրը: Համաձայն «Բյու-



ջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ Հայաստանում պետական բյուջեի դեֆիցիտի առավելագույն թույլատրելի մակարդակը կազմում է ՀՆԱ-ի հինգ տոկոսը:

Վերջին տարիներին ՀՀ կառավարությունը պետական բյուջեում միշտ ծրագրում է բյուջեի դեֆիցիտի ցածր մակարդակ (երկու տոկոսի շրջակայքում), սակայն արդյունքում տարին փակվում է պրոֆիցիտով: Մի շարք միջազգային փորձագետներ, օտարերկրյա, ինչպես նաև սփյուռքահայ մասնագետներ, իրենց զարմանքն են հայտնում կառավարության նման «խնայողական» գործունեության և պրոֆիցիտով հպարտանալու համար, նշելով, որ բազմաթիվ սոցիալական և այլ պրոբլեմներ ունեցող երկրի համար առնվազն անհասկանալի է նման «սեղմ» բյուջե ծրագրելու հանգամանքը: Անցած տարի ՀՀ կառավարությանը ներկայացվել էր Դաշնակցության մասնագետների՝ 2007 թվականի պետական բյուջեի դեֆիցիտը ՀՆԱ-ի 2,3-ից մինչև 3,0 տոկոս սահմանելու առաջարկությունը: Կառավարությունը և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը շատ թույլ պատճառաբանությամբ մերժեցին առաջարկը: Իսկ արդեն այսօր մենք կարող ենք փաստել, որ 2007 թվականի 9 ամիսների արդյունքում պետական բյուջեն արդեն պրոֆիցիտային է<sup>6</sup>:

Պետական բյուջեի դեֆիցիտի վերաբերյալ ձևավորված միջև հնչում է հետևյալ կերպ՝ «Դեֆիցիտը վատ բան է»: Սակայն որևէ մեկը չի նշում, թե ո՞ր չափի դեֆիցիտի մասին է խոսքը կամ ի՞նչ խնդիրների լուծման համար է անհրաժեշտ այդ դեֆիցիտը:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության երկրների միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ անդամ-պետությունները պետք է ապահովեն 3 տոկոսից ոչ ավելի բյուջետային դեֆիցիտ, սակայն երբ անհրաժեշտություն ծագեց, Ֆրանսիան և Գերմանիան պետական բյուջե էին ձևավորում 4,0-4,5 տոկոս դեֆիցիտով՝ հրատապ տնտեսական խնդիրների լուծումը չզոհաբերելով ինչ-որ ցուցանիշի ապահովման ինքնանպատակ գործողությանը:

Ներկայիս կառավարության գործունեության ծրագրի նախագծում ամրագրված էր դրույթ, համաձայն

որի դեֆիցիտը պետք չէ գերազանցի ՀՆԱ-ի 2,8 տոկոսը: Այս թվի հիմնավորման բացակայության պատճառով կառավարության ներկայացուցիչները ստիպված էին ընդունել այդ դրույթը հանելու առաջարկությունը: Եվ իսկապես, ինչո՞ւ 2,8, այլ ոչ թե 2,9: Արդյո՞ք այսօր ճիշտ է, ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատելով կառավարության ծրագիրը, փաստացի 5 տարով սահմանափակել այն հնարավորությունը, որը տրված է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով:

Ներկայացվել է 2008 թվականի պետական բյուջեն, բյուջեի դեֆիցիտը՝ 2,1 տոկոսի չափով: Ինչո՞ւ: Որովհետև այդպես ապահով է: Սա է բյուջեն ներկայացնողների հիմնավորումը:

### «Սղաճը վատ բան է»

Այս հաստատումը նույն այն դեպքերից է, ինչ նախորդը: Սղաճը, ինչպես և այլ տնտեսական երևույթներ, հանդիսանում են գործիքներ, որոնք պետք է օգտագործել տնտեսական քաղաքականության իրագործման համար: Հայաստանի Հանրապետությունում սղաճի նվազանցումը դարձել է ինքնանպատակ: Ինքնանպատակ, որի ետևում չի երևում իրական տնտեսական քաղաքականությունը (հավանաբար վերջինիս բացակայության պատճառով, չէ՞ որ վաղուց ապացուցված է՝ Հայաստանում տնտեսական քաղաքականությունը փոխարինվել է բացառապես ֆիսկալ քաղաքականությամբ): Իսկ խոսել այնպիսի հասկացության մասին, ինչպիսին է կառավարելի սղաճը, լրիվ ավելորդ է:

Հայաստանում տնտեսական իրական հատվածի զարգացման քաղաքականության իրականացման փոխարեն մակրոտնտեսական ցուցանիշների ապահովման ինքնանպատակ քաղաքականության իրագործումն արդեն ցույց է տալիս ճգնաժամի նշույլներ, որոնք արտահայտվում են վտանգավոր չափերի հասնող դրամի շարունակական արժևորմամբ, գնաճը փաստացի զսպելու անկարողությամբ, ներմուծման գերակշռմամբ և հայրենական արտադրողների լուրջ պրոբլեմներով:



**«Դոտացիան կամ պետական աջակցությունը վատ բան է»**

Այնքան ենք ասել դոտացիան վատ բան է, որ կորցրել ենք բազմաթիվ հնարավորություններ՝ անհրաժեշտ պահերին փրկելու մեր տնտեսական հզորությունները:

Դոտացիաներ տալիս են գրեթե բոլոր երկրներում: Արդեն հիշատակված սեպտեմբերի 11-ից հետո ԱՄՆ-ի կառավարությունը միլիարդավոր դոլարներ տվեց ավիաընկերություններին՝ վնասները հատուցելու համար, եվրոպական երկրները մի շարք ֆինանսավորման ծրագրեր իրականացրին իրենց արդյունաբերական և տրանսպորտային հսկաների առողջացման համար:

Մեծ ուշացումով մենք հասկացանք (հասկացա՞նք արդյոք) օտարերկրացիների կողմից մեզ մշտապես մատուցվող «Դոտացիաներ ոչ մեկին մի տվեք» թեզի սնանկությունը: Աչքի առաջ ունենալով իրենց երկրների օրինակը, միշտ կարող ենք տալ հակահարցը՝ «Իսկ դո՞ւք ինչու եք տալիս»:

Իրենց գյուղատնտեսությանը դոտացիաներ տալիս են թե ԱՄՆ-ում, թե Եվրոպական միությունում:

Առևտրի համաշխարհային կազմակերպության Դոհայի բանակցությունների հերթական փուլի հիմնական հակասությունները կապված էին տնտեսության տարբեր ճյուղերին տրամադրվող պետական աջակցության հետ: Եվրոպական երկրները զարգացող երկրներից պահանջում են ոչ մի ֆինանսական աջակցություն չցուցաբերել ազգային տնտեսություններին, որպեսզի ի վիճակի լինեն վաճառել իրենց արդյունաբերական արտադրանքը զարգացող երկրներում, սակայն իրենք աջակցություն են ցուցաբերում Եվրոպայի գյուղացիներին և սահմանափակումներ մտցնում զարգացող երկրներից Եվրոպական միություն գյուղատնտեսական մթերքների ներկրման դեմ: Այնինչ, միևնույն ժամանակ, զարգացող երկրները, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքներ արտահանող ԱՄՆ-ն ու Կանադան կողմ էին գյուղմթերքների շուկայի ազատականացմանը, ընդդիմանալով Եվ-

րոպական միության երկրներին: Այսինքն զարգացած երկրներում գործում է այլ սկզբունք. որտեղ մրցունակ ենք՝ ազատականացում, իսկ որտեղ ոչ՝ իրականացնենք պրոտեկցիա:

**«Որպեսզի տնտեսությունը զարգանա, պետք է ներգրավենք ներդրումներ»**

Ներդրումներն, իհարկե, շատ լավ են, հատկապես եթե դրանք ուղղվում են տնտեսության իրական հատվածին: Սակայն բիզնեսի էությունն այնպիսին է, որ օտարերկրյա ներդրումները նախ և առաջ ուղղվում են դեպի շահութաբեր և արագ շրջանառություն ապահովող սպասարկման ոլորտներ: Օտարերկրացիները հաճույքով գնում կամ կառուցում են հյուրանոցներ, հիմնադրում զվարճանքի վայրեր, կատարում ներդրումներ բնակարանային շինարարության մեջ, մասնակցում բնական պաշարների արդյունահանմանը: Իրենց ներդրումների զգալի մասն ուղղվում է ներմուծված նյութերի կամ սարքավորումների ձեռք բերմանը:

Օտարերկրյա ներդրումների ներգրավումից բացի, պակաս կարևոր չէ ներքին ներդրումների արդյունավետ կառավարումը. տնտեսական գործունեության ոչ բարենպաստ պայմանները կարող են հանգեցնել նույնիսկ ներքին ռեսուրսների արտահանմանը, ինչի օրինակներն ունենք: Հետևաբար, գերազնահատելով օտարերկրյա ներդրումների նշանակությունը և անիմաստ պայքարելով մի քանի միլիոն դոլար արտերկրից Հայաստան բերելու համար<sup>7</sup>, մենք արդյունավետ չենք կառավարում ներսում առկա միլիարդները:

**«Ազատ շուկան և մրցակցությունը ամեն ինչ կկարգավորեն» կամ «Պետական միջամտությունը վնասում է տնտեսությանը»**

Տնտեսագիտության մեջ այս տեսական թեզը իդեալ է: Սակայն, ցավոք, չկան կատարյալ մրցակցային շուկաներով երկրներ: Առանց պետական միջամտության



և կարգավորման բացառվում է Ադամ Սմիթի տեսության որևէ դրույթի կիրառումը, թեև ինքը՝ Սմիթը հավատում էր ազատ շուկայի հզորությանը: Ազատ շուկայի ջատագով երկրներում (ԱՄՆ, ճապոնիա, Եվրոպական միություն) գործում է պետական կարգավորման լուրջ համակարգ, պետության կարգավորիչ դերը դիտարկվում է տնտեսության բնականոն գործունեության ապահովման կարևորագույն քաղաքիչ: Միանշանակ է, որ առևտրի, արդյունաբերության կամ տրանսպորտի ոլորտների կառավարման պետական մարմիններն այդ երկրներում, իրենց ասպարեզում, ունեն միջամտելու շատ ավելի մեծ լիազորություններ, քան Հայաստանում: Սակայն որևէ մեկը չի համարձակվում անվանել ճապոնիան կամ ԱՄՆ-ը ոչ շուկայական երկիր:

Մյուս կարևորագույն գործառույթը, որ պետք է իրականացնի պետությունը, հենց մրցակցային իրական պայմանների ապահովման համար հակամենաշնորհային քաղաքականությունն է: Կարծում ենք, որ որևէ մեկը չի վիճարկի այն հաստատումը, որ պետության կողմից հակամենաշնորհային քաղաքականության և ազատ մրցակցության պայմանների ապահովման մասով Հայաստանը զիջում է վերը նշված բոլոր պետություններին:

Ի վերջո ներկայացնենք ամենակարևոր տնտեսական միջոց՝ տնտեսական աճի ապահովման քաղաքականության դրույթը, որը ձևակերպենք այսպես՝

**«Տնտեսական աճը լուծում է բոլոր խնդիրները»<sup>8</sup>**

Կցանկանայինք այս խնդրի ուսումնասիրումը ներկայացնել հետևյալ տեսանկյունից՝ «Արդյունաբերական քաղաքականություն, թե՞ տնտեսական աճի ապահովման քաղաքականություն»<sup>9</sup>: Նման երկրներում առջև կանգնել են շատ պետություններ: Ի՞նչ անել: Ապահովել արագ տնտեսական աճ և բյուջեի համալրում, թե՞ հիմքեր ձևավորել հաստատուն, կայուն արդյունաբերական զարգացման համար:

Հայաստանը առաջնորդվելով «Տնտեսական աճը լուծում է բոլոր խնդիրները» միջոցով փաստացի խրա-

խուսում է ներմուծումը, իրականացնում է դրամի արժևորման քաղաքականություն, ամբողջ ռեսուրսներն ուղղում է շատ գրավիչ՝ շինարարության ոլորտ, չի վարում խիստ հակամենաշնորհային քաղաքականություն, փաստորեն տրանսֆերտներով ծածկում է իր առևտրային դեֆիցիտը և այլն: Այս ամենի արդյունքում ունենք լուրջ պրոբլեմների առջև կանգնած արտահանողներ և ներքին շուկայում ներկրված ապրանքների հետ դժվարությամբ մրցակցող ընկերություններ: Առկա է երկնիչ տնտեսական աճ, որն, ըստ էության, ապահովվում է միայն շինարարության ու սպասարկման ոլորտների հաշվին, ունենք անկում կամ առաջընթացի բացակայություն արդյունաբերության և գյուղատնտեսության բնագավառներում: ՀՆԱ-ի աճի պայմաններում առաջանում է համապատասխան հարաբերակցությամբ հարկային մուտքերի ապահովման անհրաժեշտության խնդիր, որի պատճառով ամբողջ հարկային բեռի ծանրությունը ընկնում է միևնույն հարկատուների վրա, քանի որ տնտեսական աճի ապահովման աղբյուրները չեն ապահովում իրենց աճին համահունչ հարկային մուտքեր: Այս պայմաններում չի լուծվում զբաղվածության ապահովման և բնակչության եկամուտների ու կենսամակարդակի բարձրացման խնդիրը: Առավել ևս՝ հզոր արդյունաբերական ու զարգացած երկիր ունենալու գերխնդիրը: Փոխարենն ունենք տնտեսական աճ:

Երբ այս երկրներում դրված էր Եվրոպական հասարակության առջև, նրանք շարժվեցին արդյունաբերական քաղաքականության ճանապարհով: Եվրոպական պետությունները առաջ շարժվեցին դանդաղ, սակայն հաստատուն տեմպերով: Նման ճանապարհ որդեգրեցին նաև արևելյան Ասիայի երկրները (օրինակ՝ Հարավային Կորեան):

Եվրոպայի կողմից իրականացվող արդյունաբերական քաղաքականության և մեր կողմից վարվող տնտեսական աճի ապահովման քաղաքականությունների տարբերությունները լավագույնս կարելի է ներկայացնել տրանսպորտի բնագավառի օրինակով: Երկրորդ աշխարհամարտից հետո Եվրոպական երկրները մեծ գումարներ ծախսեցին ոչ միայն երկաթուղային համակարգի վերականգնման, այլև մեծ ներդրումներ կատարեցին



գերարագ երկաթուղային ցանցի ստեղծման, անհրաժեշտ տեխնոլոգիաների մշակման և նոր շարժակազմերի նախագծման ու արտադրման համար: Գրեթե բոլոր այդ երկրները վարեցին պրոտեկցիոնիստական քաղաքականություն և զգույշ, սակայն հաստատուն քայլերով ստեղծեցին հզոր ազգային օդային փոխադրողներ: Բոլորն ունեցան սեփական բեռնատար ավտոտրանսպորտային հզորություններ և այլն: Նրանք չզնացին միջազգային հանրության կողմից արդեն արտադրված բարիքների օգտագործման և արագորեն իրենց երկրներում ներդրման ճանապարհով, ինչը միանշանակ արագ տեմպերով թույլ կտար ապահովել տնտեսության աշխուժությունը, այլ զնացին սեփական հզորությունների ստեղծման ճանապարհով: Հենց նման քաղաքականության արդյունքներից էր մի քանի եվրոպական երկրների կողմից «Էյրբաս» օդանավաշինական հսկայի հիմնադրումը: «Էյրբասի» ստեղծումը շատ հավակնոտ և քննադատվող ծրագրերից էր, սակայն անցած երեք տասնամյակներն ապացուցեցին նման հավակնությունների հիմնավորվածությունը:

Հայաստանը ձախողեց հզոր ազգային ավիաընկերություն ունենալու իսկապես իրական հնարավորությունը, փոշիացրեց բեռնային և ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտային հզորությունները, որի արդյունքում երկրի ճանապարհները ողողված են թուրքական և իրանական ավտոմեքենաներով, իսկ ինչ վերաբերում է երկաթուղային տրանսպորտի վերաբերյալ մեր ծրագրերին, ապա առաջիկայում այդ ոլորտի վերաբերյալ մեր մոտեցումները կծեկերպեն կամ ռուսաստանյան, կամ հնդկական ընկերությունները:

Արդյունքում՝ պետական բյուջեի փաթեթում ՀՀ կառավարությունը հպարտանում է օտարերկրյա ավիաընկերությունների մուտքով և դրանց կողմից հաճախականությունների ավելացմամբ (որևէ խոսք չկա սեփական ավիաընկերության մասին), բացակայում են դրույթներ ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտի զարգացման վերաբերյալ, իսկ տրանսպորտի և կապի նախարարության ամբողջ գործունեությունը սահմանափակվում է ավտոճանապարհների շինարարությամբ<sup>10</sup>:

Վերը նշված օրինակները բոլորովին նպատակ

չունեն ներկայացնելու միջերով սահմանված դրույթների միանշանակ անընդունելի լինելու հանգամանքը: Սակայն շատ ավելի կարևոր է, որպեսզի դրանց մոտենանք ընդամենը որպես տնտեսական քաղաքականության գործիքների, որոնք ունեն բազմաթիվ այլընտրանքային լուծումներ, իսկ ավելի ճիշտ՝ դրանք պետք է համադրվեն բազմաթիվ այլ գործիքներով և մոտեցումներով:

Մենք չենք ասում, թե բյուջեն պետք է ունենա մեծ դեֆիցիտ, սղաճը չլինի փոքր կամ՝ միանշանակ պետական սեփականությունում ձեռնարկության գտնվելը ավելի լավ է, քան մասնավորում: Ամենևին էլ ոչ: Սակայն յուրաքանչյուր նման քայլ պետք է ծառայի տնտեսական մեծ քաղաքականության իրագործմանը և համապատասխան տնտեսական արդյունքների ապահովմանը: Այնինչ այդ ցուցանիշները կամ դրույթները դարձել են նպատակ:

Այսօր Հայաստանում ցածր սղաճ է, բյուջեն հերոսաբար փակվում է պրոֆիցիտով, պետական հատվածը ջախջախված է և ամբողջ տնտեսական կարողությունները գտնվում են մի քանի անձանց ձեռքում, պետական բյուջեից կապիտալ ներդրումներն ուղղվում են միայն շինարարությանը, խրախուսում ենք ներդրումները, իսկ ամբողջ ունեցվածքը տալիս օտարերկրացիներին, և, ամենակարևորը, մշտապես ապահովվում է երկնիչ տնտեսական աճ: Կարելի է ասել՝ Հայաստանում տնտեսական միջերը իրագործելու մասով բոլոր դրույթներն իրագործվում են, սակայն արդյո՞ք մենք բավարարված ենք մեր տնտեսական քաղաքականությամբ:

Անպայման ուզում են նշել երկու դրույթ, որոնք հերթական միջ դառնալու բոլոր հնարավորություններն ունենալով, բարեբախտաբար, հասարակության կողմից հաղթահարվում են:

1. Առաջին դրույթը, որը բարձրաձայն չէր ասվում, սակայն կուլիսների ետևում նման մտայնություն գոյություն ուներ, ստվերի գոյության և ստվերային տնտեսության դեմ պայքարի նպատակահարմարության խընդիրն էր: Քիչ չէին պետական համակարգում պատասխանատու անձինք, որոնք ստվերային տնտեսության դեմ պայքար չմղելը հիմնավորում էին ստվերային տնտեսության շնորհիվ տնտեսական աճի ապահովմամբ, ինչպես



նաև ստվերային տնտեսության գործունեության շնորհիվ բազմաթիվ այլ խնդիրների լուծման հնարավորությամբ: Նախընտրական շրջանում ստվերային տնտեսության նվազեցման անհրաժեշտության վերաբերյալ ՀՀ-ի մոտեցումների հիմնավորումներն այնքան հստակ էին և անվիճելի, որ այսօր ամբողջ հասարակությունը գիտակցում է, թե մեր տնտեսական զարգացման համար ինչպիսի խոչընդոտ է ստվերային տնտեսությունը:

2. Մյուս միանշանակ անընդունելի դրույթը մենաշնորհների գոյության հիմնավորումն է և դրանք բնականոն երևույթ գնահատելը: Այն թեզը, թե «օլիգարխները շնորհքով մարդիկ են և որքան դրանք շատ լինեն մեր հասարակությունում, այդքան լավ», արդեն դառնում է անցյալ: Բոլորի համար հասկանալի է, թե որքան վտանգավոր է հասարակությունում ունենալ գործարարների արտոնյալ մի փոքր խումբ՝ ի հաշիվ մեր երկրում գործարարությամբ զբաղվող այլ գործարարների և տնտեսվարող սուբյեկտների: Բոլորի համար պարզ է դարձել, թե որքան

է կորցնում հասարակությունը, որքան է սահմանափակվում տնտեսական զարգացումը և անարդյունավետ օգտագործվում ռեսուրսները ոչ մրցակցային պայմաններում:

Ամփոփելով՝ նշենք, որ չենք ուզում այստեղ քննարկման նյութ դարձնել Հայաստանի տնտեսական քաղաքականության ուղու խնդիրը: Այս հոդվածն ունի միայն մեկ նպատակ՝ խնդրել մասնագետներին, քաղաքական գործիչներին և մեր բոլոր քաղաքացիներին՝ հաղթահարել նախապաշարմունքները, հետևողականորեն ուսումնասիրել լավագույն միջազգային փորձը և հիշել, որ տնտեսական քաղաքականության մեջ «աքսիոմներով» և «միֆերով» առաջնորդվելն անընդունելի է և անարդյունավետ: Տնտեսությունը շատ ավելի ճկուն և բազմաշերտ երևույթ է, քան այն քարացած կաղապարները, որոնք խանգարում են մեզ գտնել Հայաստանի տնտեսական զարգացման իրական ուղին:

<sup>1</sup> Այս տեսակետի հիմնական ջատագովներից էր հանրահայտ Ա. Չուբայսը: Այդ արտահայտությունը Հայաստանում շրջանառության մեջ մտավ մեր մի հայտնի պետական պաշտոնյայի թեթև ձեռքով:

<sup>2</sup> Դա էր պատճառներից մեկը, որ ստիպեց ներդնել շահութահարկի կանխավճարային վճարումների համակարգը:

<sup>3</sup> Այս եզրակացությանն ընդդիմացավ նույն Չուբայսը, որն ասեց, թե այնուամենայնիվ մենաշնորհների և խոշոր սեփականատերերի հաջողության գլխավոր պատճառը նրանց՝ պետության համեմատությամբ ավելի լավ կառավարիչ լինելու հանգամանքն է:

<sup>4</sup> Air France ընկերությունը կառավարությունից նյութական աջակցություն էր ստացել 1991 թվականին՝ 570 մլն. ԱՄՆ դոլար, և 1994 թվականին՝ 3700 մլն. ԱՄՆ դոլար:

<sup>5</sup> Օրինակ՝ «Չվարթնոց» օդանավակայանի կառավարիչը:

<sup>6</sup> Պետական բյուջեն ինքնին դարձել է մի մեծ միֆ և կառավարության գործունեության ինքնանպատակ:


<sup>7</sup> Ինքնին շատ վիճելի են օտարերկրյա ներդրումների ծավալների վերաբերյալ ներկայացվող տվյալները: Լուրջ խնդիրներ կան այդ հաշվարկների մեթոդաբանության առումով: Շատ հաճախ արդեն գործող և շահութաբեր ընկերության գործունեության արդյունքում առաջացող գումարների ծախսումը ներկայացվում է որպես ներդրում:

<sup>8</sup> Այս միֆը, փաստորեն, ամփոփում է իր մեջ ներառում է նախորդ դրույթների միջով «կարմիր» թելով անցնող տնտեսական քաղաքականության հիմնական գաղափարախոսությունը:

<sup>9</sup> Սույն խնդիրն այնքան բազմակողմանի է և հետաքրքիր, որ հավանաբար կարիք ունի առանձին ուսումնասիրության:

<sup>10</sup> Այս ամենի պատճառով է, որ «Ինչպե՞ս եք պատկերացնում Հայաստանի միջազգային միջպետական ուղևորատար և բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի զարգացումը» հարցին ՀՀ տրանսպորտի և կապի նախարարը բյուջետային լուծման ժամանակ պատասխանում է, որ այս ոլորտն ամբողջությամբ մասնավորեցված է և պետությունը որևէ անելիք այստեղ չունի:





Արմինե Ամիրյան

**Շ**ուրջ մեկ տարի Կոստվոյի խնդրի շուրջ ընթացող զարգացումները որքան էլ իրենց մեջ հուսադրող տարրեր պարունակեին չկարգավորված հակամարտությունների լուծման համար, Արեւմուտքի դիրքորոշումն այդ հարցում այսուհանդերձ առավել քան կոշտ ու անփոփոխ էր: **Կոստվոն նախադեպ լինել է կարող մյուս հակամարտությունների լուծման համար:** Շատ դեպքերում անհասկանալի ու ինչ-որ չափով նաեւ հասկանալի այս պատճառաբանությունը միանշանակ չի ընկալվում դիվանագիտական ու քաղաքական շրջանակներում: Շուրջ մեկ տարի բանակցող ու վերջնական լուծումներ չգտնող եռյակը՝ ԱՄՆ, ԵՄ, Ռուսաստան, անկախություն պահանջող ալբանացիների եւ նրանց մերժող սերբերի միջեւ փոխզիջումային տարրերակ պետք է գտնի մինչեւ դեկտեմբերի 10-ը: Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Բեռնար Կուշները վերջերս հայտարարեց, որ այս պահին առաջնայինը ԵՄ անդամ երկրների մի-

ջեւ միասնականությունը պահպանելը եւ հավասարակշռված որոշում կայացնելն է, քանի որ այդ որոշումից է կախված ԵՄ արտաքին քաղաքականության համոզիչ լինելը: Կոստվոյի ապագա կարգավիճակի վերաբերյալ քննարկումների վերջին եւ ըստ էության վճռորոշ փուլը կարող է Ռուսաստան-ԱՄՆ հարաբերություններում ոչ միայն խիստ հակասություններ առաջացնել, այլեւ նոր տրամաբանություն առաջ բերել չկարգավորված հակամարտությունների լուծման համար: Եվ հենց այստեղ է, որ գերիզորների դիրքորոշումներն ու շահերը, մեղմ ասած, բախվում են: Եվրոմիությունը իր ողջ կազմով ՄԱԿ-ում պաշտպանեց միջազգային հանրության վերահսկողության ներքո սերբական նահանգի անկախություն նախատեսող Ահիսարիի ծրագիրը, Ռուսաստանն էլ՝ ընդունեց: Սրանից, սակայն, հարցի լուծման քաղաքական տրամաբանությունը չփոխվեց: Պաշտոնական Վաշինգտոնի ուղերձը եղավ երաշխիք նաեւ եվրոպական մի շարք երկրների համար, որոնք, ի



դեմս Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Գերմանիայի, հասկացնել են տալիս, թե ԱՄՆ-ից հետո իրենք եւս կարող են ճանաչել Կոսովոյի անկախությունը, նույնիսկ եթե այդ անկախությունը հռչակվի ՄԱԿ-ի շրջանակներից դուրս: Այս հարցին ի պատասխան, օրեր առաջ, սերբերը շրջանառության մեջ դրեցին «Ղազարոս թագավորի գվարդիան», ինչն, ըստ էության, ռազմական խմբավորում է Կոսովոյում եւ անհրաժեշտության դեպքում կարող է դառնալ հակազդելու հարմար գործիք:

### Ահթիսարիի առաջարկները

Ահթիսարիի առաջարկները պարունակում են բոլոր այն տարրերը, որոնք անհրաժեշտ են Կոսովոյի ապագա կարգավիճակի որոշման համար: Նախագծով Կոսովոն գործնականում անկախություն կստանա, կունենա միջազգային կառույցներին անդամակցելու, արտասահմանում դիվանագիտական առաքելություններ բացելու, զինված ուժեր ունենալու, դրամավարկային անկախ քաղաքականություն վարելու, պետական խորհրդանիշեր ընդունելու իրավունք:

Սերբիան պատրաստ է լուծելու Կոսովոյի խնդիրը բաց երկխոսության եւ արբանական կողմից զիջումների միջոցով: Կոսովոն եւ Մետոխիան շատ նուրբ թեմա են Սերբիայի համար, քանի որ կազմում են Սերբիայի տարածքի 15 տոկոսը: «Մենք լիիրավ ենք պահպանելու Սերբիայի տարածքային ամբողջականությունը», - ասել է սերբ դիվանագետներից մեկը: Ռուսաստանն էլ հայտարարում է, թե կընդունի որեւէ նախագիծ միայն այն դեպքում, եթե ընդունելի համարեն երկու հակամարտող կողմերը՝ Սերբիան եւ Կոսովոն: Պաշտոնական Մոսկվայից քաղաքագետ-



ները սպասում են նաեւ առավել կտրուկ մոտեցումներ, որոնք կարող են այս դեպքում անկանխատեսելի հետեւանքներ ունենալ: Կասկածներից վեր է այն հանգամանքը, որ բոլոր դեպքերում Կոսովոյի անկախությունը կճանաչվի, եթե անգամ Ռուսաստանը դեմ լինի, պարզապես այս դեպքում լարվածությունը ողջ աշխարհում եւ, մասնավորապես, հակամարտությունների գոտիներում, կմեծանա: Ստեղծված փակուղային վիճակին, որն առաջացել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ռուսական վետոյի սպառնալիքի պատճառով, դիվանագիտական որոշ շրջանակներ համոզված են, որ ներկայիս բանակցությունները կօգնեն միջազգային հանրությանը միասնական դիրքորոշում մշակելու, ինչն էլ թույլ կտա գործընթացը հաջողությամբ ավարտել մինչեւ տարեվերջ: Նրանք համոզված են, որ Ֆիլանդիայի նախկին նախագահ, ներկայումս ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հանձնակատար Մարտի Ահթիսարիի ծրագիրը հրատապ է որպես գործուն փոխզիջումային սխեմա, ինչը թույլ է տալիս Բալկանյան տարածաշրջանին առաջ ընթանալ: Կոսովոյի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ հավանություն է տվել ծրագրին: Եվ պատգամավորները համոզված են, որ աշխատելով Սերբիայի հետ հակամարտության հետեւանքների հաղթահարման ուղղությամբ, միաժամանակ պետք է զբաղվել մի շարք գործնական հարցերով, որոնք վերաբերում են արեւմտաբալկանյան բոլոր պետություններին. պայքար ընդդեմ միջսահմանային հանցագործության եւ թրաֆիկինգի, տնտեսական համագործակցության զարգացում, մարդկանց եւ ապրանքների անխոչընդոտ տեղափոխում: Ասել է թե՛ գործնականում մոտենալ «բաց սահմաններ» եվրոպական մոդելին: Իսկ մինչ այդ ֆրանսիացիները ստանձ-

նրը սպասում են նաեւ առավել կտրուկ մոտեցումներ, որոնք կարող են այս դեպքում անկանխատեսելի հետեւանքներ ունենալ: Կասկածներից վեր է այն հանգամանքը, որ բոլոր դեպքերում Կոսովոյի անկախությունը կճանաչվի, եթե անգամ Ռուսաստանը դեմ լինի, պարզապես այս դեպքում լարվածությունը ողջ աշխարհում եւ, մասնավորապես, հակամարտությունների գոտիներում, կմեծանա: Ստեղծված փակուղային վիճակին, որն առաջացել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ռուսական վետոյի սպառնալիքի պատճառով, դիվանագիտական որոշ շրջանակներ համոզված են, որ ներկայիս բանակցությունները կօգնեն միջազգային հանրությանը միասնական դիրքորոշում մշակելու, ինչն էլ թույլ կտա գործընթացը հաջողությամբ ավարտել մինչեւ տարեվերջ: Նրանք համոզված են, որ Ֆիլանդիայի նախկին նախագահ, ներկայումս ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հանձնակատար Մարտի Ահթիսարիի ծրագիրը հրատապ է որպես գործուն փոխզիջումային սխեմա, ինչը թույլ է տալիս Բալկանյան տարածաշրջանին առաջ ընթանալ: Կոսովոյի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ հավանություն է տվել ծրագրին: Եվ պատգամավորները համոզված են, որ աշխատելով Սերբիայի հետ հակամարտության հետեւանքների հաղթահարման ուղղությամբ, միաժամանակ պետք է զբաղվել մի շարք գործնական հարցերով, որոնք վերաբերում են արեւմտաբալկանյան բոլոր պետություններին. պայքար ընդդեմ միջսահմանային հանցագործության եւ թրաֆիկինգի, տնտեսական համագործակցության զարգացում, մարդկանց եւ ապրանքների անխոչընդոտ տեղափոխում: Ասել է թե՛ գործնականում մոտենալ «բաց սահմաններ» եվրոպական մոդելին: Իսկ մինչ այդ ֆրանսիացիները ստանձ-

նրը հրատապ է որպես գործուն փոխզիջումային սխեմա, ինչը թույլ է տալիս Բալկանյան տարածաշրջանին առաջ ընթանալ: Կոսովոյի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ հավանություն է տվել ծրագրին: Եվ պատգամավորները համոզված են, որ աշխատելով Սերբիայի հետ հակամարտության հետեւանքների հաղթահարման ուղղությամբ, միաժամանակ պետք է զբաղվել մի շարք գործնական հարցերով, որոնք վերաբերում են արեւմտաբալկանյան բոլոր պետություններին. պայքար ընդդեմ միջսահմանային հանցագործության եւ թրաֆիկինգի, տնտեսական համագործակցության զարգացում, մարդկանց եւ ապրանքների անխոչընդոտ տեղափոխում: Ասել է թե՛ գործնականում մոտենալ «բաց սահմաններ» եվրոպական մոդելին: Իսկ մինչ այդ ֆրանսիացիները ստանձ-

նրը սպասում են նաեւ առավել կտրուկ մոտեցումներ, որոնք կարող են այս դեպքում անկանխատեսելի հետեւանքներ ունենալ: Կասկածներից վեր է այն հանգամանքը, որ բոլոր դեպքերում Կոսովոյի անկախությունը կճանաչվի, եթե անգամ Ռուսաստանը դեմ լինի, պարզապես այս դեպքում լարվածությունը ողջ աշխարհում եւ, մասնավորապես, հակամարտությունների գոտիներում, կմեծանա: Ստեղծված փակուղային վիճակին, որն առաջացել է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում ռուսական վետոյի սպառնալիքի պատճառով, դիվանագիտական որոշ շրջանակներ համոզված են, որ ներկայիս բանակցությունները կօգնեն միջազգային հանրությանը միասնական դիրքորոշում մշակելու, ինչն էլ թույլ կտա գործընթացը հաջողությամբ ավարտել մինչեւ տարեվերջ: Նրանք համոզված են, որ Ֆիլանդիայի նախկին նախագահ, ներկայումս ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հանձնակատար Մարտի Ահթիսարիի ծրագիրը հրատապ է որպես գործուն փոխզիջումային սխեմա, ինչը թույլ է տալիս Բալկանյան տարածաշրջանին առաջ ընթանալ: Կոսովոյի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ հավանություն է տվել ծրագրին: Եվ պատգամավորները համոզված են, որ աշխատելով Սերբիայի հետ հակամարտության հետեւանքների հաղթահարման ուղղությամբ, միաժամանակ պետք է զբաղվել մի շարք գործնական հարցերով, որոնք վերաբերում են արեւմտաբալկանյան բոլոր պետություններին. պայքար ընդդեմ միջսահմանային հանցագործության եւ թրաֆիկինգի, տնտեսական համագործակցության զարգացում, մարդկանց եւ ապրանքների անխոչընդոտ տեղափոխում: Ասել է թե՛ գործնականում մոտենալ «բաց սահմաններ» եվրոպական մոդելին: Իսկ մինչ այդ ֆրանսիացիները ստանձ-



նեցին Կոսովոյում տեղակայված ՆԱՏՕ-ի զորախմբի հրամանատարությունը: 20-հազարանոց զորախմբի հրամանատարությունը նրանք ընդունեցին գերմանացիներից:

## ԼՂՀ-Կոսովո.

### Նախադեպ, թե՞ արեւմտյան խաղեր

Լեռնային Ղարաբաղում վերջերս անցկացված նախագահական ընտրությունները կարելուք իրադարձություն էին չճանաչված հանրապետության պատմության մեջ, առավել եւս այն դեպքում, երբ դրանք բնորոշվեցին որպես միջազգային չափանիշներին համապատասխանող՝ ազատ եւ արդար: Որոշ դիտորդների կարծիքով՝ ընտրությունները կարելուք քայլ էին միջազգային ճանաչման երկար ճանապարհին: Սակայն վերլուծաբանների մեծ մասի համոզմամբ, այս հարցում նույնքան կարելուք գործոն կարող են դառնալ Կոսովոյի հակամարտության կարգավորման սկզբունքները: Պաշտոնական Երեւանի համար Կոսովոյի օրինակը ոգեշնչող է: Արեւմտյան դիվանագետները պետք է բացատրեն, թե ինչու Կոսովոն կարող է անկախ լինել, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ ոչ, թեւեւ վերջինս անկախության ձգտելու ավելի շատ հիմքեր ունի, քան Կոսովոն: Հենց այս մոտեցումն են ամենից հաճախ հնչեցնում քաղաքական վերլուծաբանները Հայաստանում: Պաշտոնական Բաքուն անշուշտ այս հարցից տագնապած է. նրանք կարծում են, որ Կոսովոյին փաստացի անկախություն տալը կարող է Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը սպառնացող նախադեպ դառնալ: Մեկ բան հստակ է, որ հակամարտող երկրները այժմ ուշի-ուշով հետեւում են Կոսովոյի շուրջ ընթացող բանակցություններին: ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահը այն համոզմանն է, որ համընդհանուր նախադեպ բոլոր հակամարտությունների համար

չկա. «սա հասկանում են նաեւ հակամարտող երկրների իշխանությունները», - ասում է Բրայզան:

Կոսովոն չի փոխի հակամարտությունների լուծման տրամաբանությունը: Ամեն հակամարտություն եզակի է: Ոմանք հարցը դիտարկում են տարածքային ամբողջականության տեսանկյունից, իսկ ոմանք էլ անկախության տրամադրման: Բայց եւ այնպես, Կոսովոն չի կարող կանխորոշել ցանկացած բանակցային գործընթաց, որն իր մեջ ներառում է տարածքային ամբողջականության կամ ինքնորոշման, ինչպես նաեւ ուժ չկիրառելու սկզբունքները: ԼՂՀ լուծման համար կա այսպես ասած «ֆորմուլա», որը «թույլ է տալիս պատասխաններ տալ հիմնական մոտեցումներին», - նշում է Բրայզան: Ամերիկացի դիվանագետի խոսքերով՝ իրենց պարտականությունն է, որպես բանակցային գործընթացի մասնակից, գտնել փոխզիջումային այնպիսի լուծում, որը հիմնված կլինի Յեւսիսկյան ակտով նախատեսված սկզբունքների վրա: ԼՂՀ-ն ավելի մոտ է այս տարբերակով լուծմանը, քան այլ հակամարտություններ: Իսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահը նշել է, որ դա նախադեպ կստեղծի, քանի որ առաջին անգամ եվրոպական տարածքում խոսք է գնում նախկին ինքնավարության մասին: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թերրի Դեյվիսն էլ գըտնում է, որ Կոսովոյին, ԼՂՀ-ին, Կիպրոսին, Մերձդնեստրին եւ այլ տարածքներին անկախություն շնորհելու կամ չշնորհելու հարցը պետք է որոշի ՄԱԿ-ը:

Այնուամենայնիվ, բանակցությունների վերջին եւ վճռական փուլը դեռ առջեւում է. միջազգային հանրությունը ցանկանա թե ոչ, Կոսովոյի նախադեպը համաշխարհային դիվանագիտության մեջ շատ բան է փոխելու, որոնցից գլխավորը հակամարտությունների լուծման քաղաքական մոտեցումների հիմնական շեշտադրումներն են: Եվ այսպես թե այնպես, հարցը դիտարկվելու է նախադեպի համատեքստում:

Հ.Յ.Դ. ԲԻԲՈՅԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
A.R.F. BURO  
LIBRARY



# ՁԻՆԱԿԱՆ



Մաթյու Թրամբլեյ



## «ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ» ՇԱԳՈՒՄԸ

### «Փափուկ ուժի» տեսությունը և կոնցեպցիան

«Փափուկ ուժի» կոնցեպցիայի կիրառումը միջազգային հարաբերություններում առաջին անգամ առաջ է քաշել ու զարգացրել Հարվարդի համալսարանի դասախոս Ժոզեֆ Նիյը: Ուսումնասիրություններում Նիյը փորձում է սառը պատերազմից հետո ձգարտել պետությունների հզորության սահմանումը և դրանց ազդեցությունը միջազգային համակարգում: Ըստ Նիյի՝ հզորությունը մի պետության կարողությունն է՝ ազդելու այլ պետությունների վրա, և ենթակա թույլ պետությունը պետք է որ իրեն համապատասխանեցնի հզորի շահերին: Դրան հասնելու համար հզոր պետությունները կարող են դիմել հիմնա-

կանում երկու տեսակի ուժի՝ «բիրտ ուժի» և «փափուկ ուժի»: Բիրտ ուժի պարագայում կիրառվում են դասական միջոցները՝ հարկադրանքի տակ դնել, սպառնալ, ռազմական ծնշումների ենթարկել, տնտեսական և կամ ֆինանսական ոլորտներում ծնշում գործադրել: «Փափուկ ուժը» նույն արդյունքին հասնում է մշակույթի, գաղափարաբանության, քաղաքականության և դիվանագիտության գրավչության միջոցով: Եվ որովհետև գայթակղված երկրները ընկալվում են որպես ոչ բռնազրավված, լեգիտիմ, «փափուկ ուժ» կիրառող պետության փափուկ ուժն էլ, այսինքն՝ հեղինակությունը, հետզհետե ավելանում է: Նորագույն տեխնոլոգիայի և կապի զարգացման արդի պայմաններում «փափուկ ուժի» կարևորությունն աճում է և նպաստում միջազգային ասպարեզում առավել մեծ դեր ունեցող երկրների շա-



հերի առավել համալրմանը կամ գոնե շահերի ընկալմանը:

### **Ինչո՞ւ է Չինաստանը կիրառում «փափուկ ուժը»**

Գերուժ դառնալու Չինաստանի ղեկավարության ամբիցիաները գնահատելու համար նախ անհրաժեշտ է սահմանել այս երկրի արտաքին քաղաքականության ռազմավարական նպատակները: Չինաստանի հեռահար հիմնական նպատակներից է՝ փարատել չինական սպառնալիքի առասպելը:

Սպառնացող Չինաստանի կերպարը ընկալվում է թե՛ անմիջական հարևանների կողմից, թե՛ ամբողջ աշխարհում: Նորագույն այս ուժը ամբողջ աշխարհի տընտեսությունում առաջացրել է խառնաշփոթ վիճակ, ինչը Արևմուտքի երկրներում երկյուղ է հարուցում:

Այս տնտեսական գերուժը նպատակ է դրել դառնալ նաև ռազմական գերուժ: Չինաստանի պետական բյուջեում մեծ տեղ է հատկացվել պաշտպանության նախարարությանը: Ռազմական ծախսերի առումով թափանցիկության բացակայությունը և այդ երկրի կոշտ դիրքորոշումը Տայվանի նկատմամբ մտահոգություն է հարուցել թե՛ անմիջական հարևանների շրջանում և թե՛ Արևմուտքում: Այս առումով «փափուկ ուժի» կիրառումը գալիս է փարատելու այդ ընկալումը և նպատակ ունի միջազգային հանրությանը համոզել, որ որդեգրված քաղաքականությունը խաղաղասիրական բնույթ ունի: Ծատ վերլուծաբաններ այն կարծիքին են, որ չինական «փափուկ ուժը» արդյունք է գիտակցված քայլի. Չինաստանը ռազմական և տնտեսական ոլորտներում ԱՄՆ-ի նկատմամբ գնահատվում է ոչ մրցունակ: Ռազմական և տեխնոլոգիայի, սարքավորումների տարածվածության առումով ԱՄՆ-ը առաջատար է, և Չինաստանը ի զորու չէ մրցակցելու: Չինացիները ընտրելով առավելագույն էժան տարբերակ և շատ արդյունավետ մի գործելաձև, այն է՝ «փափուկ ուժը», ներդրում կատարեցին մի այնպիսի շուկայում, որտեղ, թվում է, ԱՄՆ-ն ակնհայտորեն զիջել է, թեև երկար ժամանակ հենց ինքն է եղել «փափուկ ուժի» հիմնական կիրառողը: ԱՄՆ-ը մի անվիճելի ներդրում է կատարել՝ ժողովրդական մշակույթի (պոպ երաժշտություն, կինո), ժողովրդավարության գաղափարաբանության, մարդկային իրավունքների և անհա-

տի ազատության ոլորտներում բերելով անվիճելի ազդեցության կապիտալ, ամբողջացնելով ռազմական և տնտեսական լծակները, որ ձեռք էր բերել Երկրորդ համաշխարհային պատերազմում: Այս երրորդ ուժի բացակայությամբ ԱՄՆ-ը ի զորու չէր ազդեցությունը տարածել աշխարհի բոլոր անկյուններում: Սակայն Իրաքի վերջին պատերազմը և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի շրջանցումը պատճառ դարձան ԱՄՆ-ի «փափուկ ուժի» անկմանը միջազգային թատերաբեմում: Իրականում՝ որոշակիորեն շնորհագուրկ և քաղաքակիրթ չափանիշներին ոչ համապատասխան միջոցառումները, օրինակ՝ միջազգային հակատեռորիստական պայքարի շրջանակներում (Գուանտանամոյի, Աբու Ղարիբի իրադարձությունները) հեղինակազրկեցին Բուշի վարչակազմը՝ մեծ վնաս հասցնելով երկրի հեղինակությանը: Ամերիկայի ներկայիս դիվանագիտության գործելաձևը, մի շարք երկրներում մարդու իրավունքների, ժողովրդավարության անվան ներքո, բռնի ուժի միջոցով վարչակարգեր փոխելը, միանգամայն հեղինակազրկել է այս երկիրը: Այս պայմաններում բազմաթիվ զարգացող պետություններ Չինաստանը համարում են որպես վերջին հույս և ուժ ընդդեմ ԱՄՆ-ի, որը հակաժողովրդավարականի վերածվելու ուղղությամբ է ընթանում: Ճշգրիտ հաշվարկի շնորհիվ՝ չինացիները լավագույնս օգտվում են այս իրավիճակից:

### **Չինական գաղափարաբանությունը և դիվանագիտությունը**

Դենգ Խիյոփոնգի իշխանությունից և սառը պատերազմից սկսած, շատ ավելի արագընթաց կերպով Չինաստանը միջազգային թատերաբեմում խորքային առումով փոխել է իր դիվանագիտությունը, գաղափարաբանությունը և գործելաձևը: Եվ այս իրողությունը նրա գործակիցներին պարտադրում է վերանայելու իրենց կեցվածքը Չինաստանի նկատմամբ: 1960-1970 թթ. տասնամյակից սկսած, շարունակական գաղափարական պատերազմից հետո, չինացիները փոխել են իրենց արտաքին քաղաքականությունը՝ դառնալով առավել պրագմատիկ, նաև թափանցիկ: Ծարունակելով անդամակցել բազմաթիվ ինստիտուտների, այդ թվում՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության



նը, մասնակցելով ՄԱԿ-ի կողմից հանձնարարված խաղաղապահական աշխատանքներին, Չինաստանը հանձնառու է եղել միջազգային հիմնական պայմանավորվածություններին, վերջ է դրել մաոիստական քաղաքականությանը (տարբեր երկրների վարչակարգերի ապակայունացմանը և կոմունիստական հեղափոխություններին սատարելուն): Այս իրողությունը նկատելի է նախ և առաջ միջազգային բեմերում չինացիների վերլուծական բնույթի ելույթներում:

### **Չինացիների ելույթները**

Ըստ Նոեի՝ դիվանագիտության ռազմավարությունը լավագույն կերպով առաջ տանելու և համապատասխան գաղափարներ տարածելու համար միջազգային թատերաբեմում պետք է ընտրվեն և զարգացվեն մի խումբ պարզ և ընդգրկուն թեմաներ: Այս տեսակետից՝ բարձր պաշտոնյաների կողմից բազմակողմանի հանդիպումների ընթացքում հնչած վերլուծական ելույթներում չինացիները փորձում են առաջ քաշել նվազագույն պայմաններ, որպեսզի դյուրին լինի գաղափարների և կոնցեպցիաների համապատասխանեցումը, և, միևնույն ժամանակ, անհանգստություն չպատճառել այլոց: Նախ և առաջ իրենց բոլոր բանակցություններում խաղաղասիրությունը կարգախոս դարձնելով՝ փորձում են ցրել նոր գերուժի նկատմամբ մտահոգությունը, միևնույն ժամանակ առաջ են քաշում բազմակենտրոն տիպի ղեկավարման աշխարհընկալումը: Իրականում սա նշանակում է, որ Չինաստանը հետամուտ է միջազգային այնպիսի իրողության, ուր ոչ թե մի գերուժ (միաբևեռ) կամ երկու բլոկի հակադրություններ (երկբևեռ) են, այլ տարածաշրջանային, բազմակենտրոն, միմյանց հետ համագործակցող երկրների միջև փոխհարաբերություններ: Բազմակողմ փոխհարաբերություններն ինքնըստինքյան հակադրվում են ամերիկյան հեգեմոնիային և համակրություն ստանում նույն կերպ մտածող շատ երկրներում՝ ի դեմս Ֆրանսիայի, Ռուսաստանի, Հնդկաստանի և մի շարք զարգացող երկրների: Սկսած 1990 թ.՝ Չինաստանի ղեկավարները, որպես չեզոքացման հակաքայլ և պատասխան Արևմուտքի մի շարք երկրներին, մարդկային իրավունքի պաշտպանության հարցի առնչությամբ խնդիր բարձրացրին:

Չինացիները բոլորովին վերջերս հանդես եկան նաև անվտանգության նոր համակարգի ստեղծման առաջարկությամբ: Ըստ այս կոնցեպցիայի՝ միջազգային հակամարտություններն անհրաժեշտ է կարգավորել բանակցությունների (նախընտրաբար՝ բազմակողմ) միջոցով, որոնցում պետք է պահպանվեն ավանդական նորմերը (ինքնիշխանությունը և պետությունների ներքին գործերին չմիջամտելու հանգամանքը): Այս կոնցեպցիան ընդունվել է լայն սպեկտր ընդգրկող ոչ զարգացած պետությունների կողմից, որոնք առկա իրավիճակում բավականին մտահոգ են իրենց միջազգային իրավունքների անձեռնմխելիության և պահպանման կապակցությամբ և, վերջապես, օգտվում են Ամերիկայի միաբևեռ կառավարման (որը չի ընկալվում մի շարք պետությունների կողմից) խոցելի կողմերից: Առիթից օգտվելով՝ Չինաստանը տարածաշրջանային և միջազգային հարթությունում իրեն ներկայացնում է որպես բազմաբևեռության դրոշակակիր: Եվ որպես օրինակ, բազմակողմ բանակցությունների տարբերակով, ղեկավարել ու կարգավորել է տարածքային տարածայնությունները Հարավարևելյան և Չինական ծովում: Ավելին, 2003 թ. այս երկիրը եղավ Հյուսիսային Կորեայի ատոմային ծրագրի կապակցությամբ վեցնյակի ձևաչափով բանակցություններ սկսելու նախաձեռնողը: Մյուս կողմից, Չինաստանը զարգացրեց համագործակցությունը իր գործընկերների հետ: 2000-ին ստեղծել է բազմաթիվ, տարածաշրջանային առումով կարևորագույն ինստիտուտներ՝ ՍՅՈ (Կենտրոնական Ասիա), «Ասիական գումարած մեկ» և «Ասիական գումարած երեք» (Հարավարևելյան Ասիա), «Չին-աֆրիկյան գագաթնաժողով», «Չին-լատինամերիկյան գագաթնաժողով» և այլն: Այսպիսի քաղաքականությունը նպաստում է Չինաստանի այլընտրանքային գործոն դառնալու ընկալմանը: Նա սկսել է առանձնանալ միաբևեռ կամ նույնիսկ նախկին երկբևեռ ղեկավարման մեթոդից՝ հատկապես Ասիայի և Աֆրիկայի երկրների հետ հարաբերություններում:

### **Չինաստանը որպես բնորոշ**

Չինաստանի տնտեսության կայուն աճի տեմպը որպես բնորոշ է ծառայում աշխարհի մի շարք երկրների ղեկավարների համար: Չինաստանը բացահայտորեն



գովազդում է իր զարգացումը մյուս գործընկերների շրջանում: Այս նպատակով պետությունն իր երկրի ինստիտուտներ է հրավիրել մեծ թվով գործընկերների. խրախուսում է նրանց, մղում յուրացնելու իրենց փորձը:

Միջազգային ասպարեզում Չինաստանը հանդես է գալիս նոր աշխարհաքաղաքական մոտեցումներով՝ որպես կատարելագործված քաղաքական վարչակարգ, տնտեսական, ֆինանսական, մարդու իրավունքների և ժողովրդավարության առումով հակադրվելով Արևմուտքի կողմից պահպանված կամ առաջ քաշված տարբերակի: Բազմաթիվ վերլուծաբաններ հաստատում են, որ Պեկինի այս աշխարհընկալումը, փաստորեն, առաջ է քաշվել ԱՄՆ-ին հակադրվելու նպատակով, որի համաձայն՝ միայն մարդու իրավունքների, քաղաքական, տնտեսական և ֆինանսական ազատության զուգակցման հիման վրա հնարավոր է ապահովել երաշխավորված տնտեսական զարգացում: Սակայն Պեկինը նախապատվություն է տալիս նորամուծությանը և կառավարելի շուկային, որտեղ առաջնահերթություն չի տրվում ժողովրդավարական վարչակարգի անհրաժեշտությանը: Բոլոր դեպքերում, չինական բնորոշ լայն ժողովրդականություն է ձեռք բերել մի շարք զարգացող պետությունների շրջանում: Արդեն իսկ Մարոկկոն, Նիգերիան և Քենիան ցանկություն են հայտնել կիրառել զարգացման չինական մոդելը:

Շատ հավանական է, որ Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի մյուս պետությունները գնան նույն ուղիով՝ անշուշտ, յուրաքանչյուրը ուրույն կերպով, քանի որ չինական ղեկավարները մեծ հաջողությամբ իրենց ինստիտուտների ծառայությունները տրամադրում են այդ երկրներին:

### Չինական մշակույթի տարածումը

Երկար տարիներ լինելով կոմունիստական գաղափարաբանության ճնշման ներքո՝ դասական ազգային մշակույթն ու չինական մշակութային ստեղծագործությունը վերածննդի ճանապարհին են: Չինական մշակույթը, այս օրերին, արագորեն հասելով սահման-

ները, միահյուսվել է այլ մշակույթների հետ: Չինական խոհանոցը, ասեղնաբուծությունը, ավանդական բժշկությունը միշտ ունեցել են իրենց գրավչությունը, սակայն այսօր մենք ականատեսն ենք չինական նորագույն ժողովրդական մշակույթի տարածմանը: Ասիայի հարավարևելյան տարածաշրջանում կինոն, պոպ երաժշտությունը, ժամանակակից արվեստը և նորաձևությունը մեծ Չինաստանում (ներառյալ Հոնկոնգը, Մակաոն և Տայվանը) լայն ժողովրդականություն են վայելում: 2000-ին, առաջին անգամ, գրականության Նոբելյան մրցանակակիր դարձավ չինացի Գաո Խինգզիյան: Քրուչինգ Տիգերի արտադրությամբ ոչ անգլալեզու կինոնկարը («Թաքնված հրեշ») դարձավ պատմության մեջ ամենաեկամտաբեր արտասահմանյան ֆիլմը: Որոշ պատմաբաններ նշում են, որ եթե այսօր Արևմուտ-



քում երիտասարդությունը չինական հագուստ է հագնում և խաղում չինական խաղալիքներով, անհավանական չէ, որ մոտ ապագայում նրանց երեխաները կամ թոռները նախընտրեն չինական երաժշտությունը և կինոն:

Պետության կողմից խոշոր ներդրումներ են կատարվում լեզուն և մշակույթը տարածելու ուղղությամբ: Հաշվարկը, որ կատարվել է, շատ պարզ է. որքան շատ մարդիկ տիրապետեն չինարեն լեզվին և միևնույն ժամանակ հետաքրքրվեն չինական մշակույթով, այնքան լավ են ընկալելու Չինաստանի այս վերելքը, այն գաղափարաբանությունը, քաղաքականությունը, որը միջազգային թատերաբեմում վարում է միջնադարյան այդ կայսրությունը: Հիմնական միջոցառումներից մեկը, որ



նախաձեռնել է Չինաստանի պետությունը այդ նպատակին հասնելու համար, առանց հապաղելու, մինչև 2020 թ. ամենատարբեր երկրներում հազարավոր ինստիտուտների բացման նախաձեռնումն է: Այս ինստիտուտները աշխատելու են որպես մշակութային կենտրոններ, ինչպես որ Ֆրանսիական այլանսը կամ Անգլիական կոնսիլիումը: Սրանք շղթայի նման, իրար հետ շաղկապված, տարբեր համալսարաններում տարածելու են չինական մշակույթը և քաղաքակրթությունը:



Չնադարյան բարձրագույն դպրոց

2004 թ. նոյեմբերին առաջին ինստիտուտի բացումից երկու տարի անց, ընդարձակվել և այսօր արդեն քսանինը պետություններում բացվել են ութսուն ինստիտուտներ, որոնցում դասավանդում են մեծ թվով չինացի դասախոսներ, իսկ նպատակ կա մինչև 2010 թ. քառապատկել չինական քաղաքակրթությանը և մշակույթին հետևողների թիվը՝ հասցնելով հարյուր միլիոնի:

Ահռելի ներդրումներ են կատարվել տարածելու չինական մշակույթը և արժեքները ճայնասփյուռի միջոցով: Չինական միջազգային ռադիոն օրական մոտավորապես երեք հարյուր ժամ ութսուներեք լեզվով հաղորդումներ է հեռարձակում: Վերջին տարիներին «Ամերիկայի ծայն» ռադիոկայանի եթերաժամերի քանակը տասնինը ժամից նվազել է տասնչորս ժամի, իսկ չինական համարժեք ռադիոն անգլերենով հաղորդումներ է հեռարձակում արդեն քսանչորս ժամ:

Պետությունը ողջունում է ուսանողների և գրասաշրջիկների այցելությունը Չինաստան: Չինաստանը

2004-ին եռապատկել է 110 հազար արտասահմանյան ուսանողների թիվը՝ ուսանողական թոշակներ հատկացնելով զարգացող երկրների, հատկապես Հարավային Ասիայի, Արևելյան Աֆրիկայի ուսանողներին, միաժամանակ բարելավելով համալսարանների որակը: Չուգահեռաբար, արտասահմանյան հարցերի համալսարանի միջնորդությամբ, Չինաստանը արտերկրների (հատկապես աֆրիկյան) դիվանագետներին հրավիրում է եռամսյա դասընթացների՝ հոգալով

ներանց ծախսերը, իսկ դասընթացներին դասավանդում են չինացի դիվանագետներ և դասախոսներ: Այսպես չինական ղեկավարները երաշխավորում և ապահովում են այլ երկրներում ապագա էլիտայի ստեղծումը:

### Հաջողված ծրագրեր կամ ջանքեր

Եթե այս հմայիչ միջոցառման տարողությունն ու հաջողությունը միջազգային է, ապա դրա արդյունքը շոշափելի է հատկապես

չրջապատող երկրներում: Հարավարևելյան Ասիայի երկրներում ամենուրեք ականատեսն ենք չինական փոքրամասնության հեղինակության վերականգնմանը: Չինական սփյուռքը, որ Մաոյի օրոք վարչակարգի նկատմամբ բացասական կեցվածք ուներ, վերանայել է իր դիրքորոշումը. այժմ ավելի հանդուրժողական է, նույնիսկ ներդրումներ է կատարում մայր հայրենիքում: 1990 թ. վերջերից սկսած վստահություն է նկատվում Չինաստանի տնտեսության և կիրառած քաղաքականության նկատմամբ: Իսկ Չինաստանի ղեկավարության դիրքորոշումն աստիճանաբար միջազգային գերուժի տպավորություն է թողնում:

Բի-Բի-Սի-ն 2006-ին Globescan et Program on International Policy Attitudes ընկերությանը հանձնարարել էր կատարել մի քննարկում, որպեսզի գնահատեր տարբեր երկրների վարկանիշը, դրական կամ բացասական ազդեցությունները միջազգային խնդիրների վրա: Երեսուներեք երկրում կատարված ուսումնասի-




րությունը ցույց է տալիս, որ քսան երկրում հաստատում են Չինաստանի դրական ազդեցության առկայությունը, իսկ միայն տասում բացասական կարծիք ունեն Չինաստանի վերելքի վերաբերյալ: Այս ուսումնասիրության միջինը այսպիսին է. հարցվողների քառասունհինգ տոկոսը ի նպաստ է արտահայտվել, քսանյոթը՝ մտահոգություն է հայտնել: Եթե համեմատենք ԱՄՆ-ի հետ, պատկերը հետևյալն է. այս գերուժի ազդեցությունը տասներեք երկրում դրական, իսկ տասնութում բացասական են գնահատել: 2005-ի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների ժամանակահատվածում ինը հզոր երկրների բնակիչներից 10.000 հարցվողների (ներառյալ՝ ԱՄՆ-ի քաղաքացիների) շրջանում կատարված հարցախույզում գերակշռող մասը նախընտրել են միջազգային հարաբերություններում բազմաբևեռ ղեկավարման համակարգը: Սա նշանակում է՝ քառասուներկու տոկոսը կողմ են ՄԱԿ-ի, իսկ երեսունվեց տոկոսը՝ տարածաշրջանային բազմակողմ ուժերի ղեկավարմանը: Խոսուն փաստեր, որ Չինաստանի առաջ քաշած բազմաբևեռ համակարգի ղեկավարման տարբերակը դրական է ընկալվում միջազգային թատերաբեմում:

### Չինական «փափուկ ուժի» սահմանները

Չինական «փափուկ ուժի» սահմանները ներառում են հարևան, ապա՝ Աֆրիկայի և զարգացող երկրները, ընդհուպ մինչև արևմտյան աշխարհամասը:

Բազմաթիվ գաղափարական և քաղաքական տարրեր պատճառ են դառնում, որ բիծ ընկնի Չինաստանի պատկերի վրա: Դրանք հետևյալներն են.

1. կասկածելի դերը ատոմային տեխնոլոգիայի ոլորտում գաղտնագործունեության մեջ,
2. մշտական սպառնալիքը Տայվանի նկատմամբ,
3. խտրականությունը իր երկրի արևմուտքում էթնիկ փոքրամասնության նկատմամբ,
4. մարդկային իրավունքի հիմնահարցի անտեսումը:



Ահա, մոտավորապես, այն հարցերը, որոնք վնասում են Չինաստանի կերպարը համաշխարհային դերակատարություն ունեցող հիմնական ուժերի՝ Ճապոնիայի, Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի ընկալմամբ:

Չարգացող երկրների շրջանում ծագում է այն հարցը, թե ինչ նպատակներ է հետապնդում Չինաստանը: Արդյո՞ք այս երկիրը սահմանափակվելու է չինական ազդեցության ենթակա երկրների իշխող էլիտայի շրջանակներում, թե՞ հասնելու է նաև այդ երկրների բնակչությանը: Առաջին դեպքում չինական «փափուկ ուժի» ազդեցության արդյունքում տվյալ վարչակարգը կշարունակի մնալ իշխանության վրա: Քաղաքական փլուզման դեպքում դժգոհ բնակչությունը, արդյոք, այսպես ասած, լա՛վ աչքով կնայի չինացիներին: Հարավասիական պետությունների դեպքում մենք կարող ենք հաստատել չինական «փափուկ ուժի» մշակույթի աստիճանաբար թափանցումը, սակայն ինչ վերաբերում է Աֆրիկայի, Հարավային Ամերիկայի և Կենտրոնական Ասիայի պետություններին՝ փոքր-ինչ անորոշ է:

Բոլոր դեպքերում, Չինաստանի տնտեսական, ռազմական և վերջերս նաև մշակութային հզորությունը աճում է, ինչը, անշուշտ, լուրջ հետևանքներ կթողնի միջազգային իրադարձությունների վրա: Չնայած Չինաստանը մասնակցություն չի ունեցել ամբողջական օրենքների և նորմերի կազմմանը, բայց և պարտավոր է ընդունել դրանք: Ուրեմն՝ շուտով ականատեսն ենք լի-

նելու նրա ազդեցության հզորացմանը և ակտիվ դերակատարության ստանձնմանը միջազգային նորագույն օրենքների և նորմերի սահմանման գործում, ինչու չէ, նաև միջազգային հարաբերություններում անիրաժեշտ օրենքների և նախագծերի պատրաստման բանակցություններում:

Անգլ. թարգմանեց՝  
Վազրիկ Պետրոսյանը



# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ՄՇԱԿՈՒԹՎՅՒՆ-ԽՈՐՀՐԴԱՆԻՇՎՅՒՆ ՏԵՍԱԿՅՈՒՆԸ

Համլետ Գևորգյան  
ԳԱԱ ակադեմիկոս

Կյանքին վերաբերող որևէ երևույթ հասկանալու համար միշտ հարկավոր է նկատի ունենալ մի շատ կարևոր հանգամանք. հասարակական երևույթները, լինեն դրանք պատմական, գաղափարական, հոգևոր և թե նույնիսկ տնտեսական, քաղաքական և այլն, անպայման ունեն մի կտրվածք, որի մեջ դրանք ներկայանում են խորհրդանիշների լեզվով, ինչպես որ դա հատուկ է մշակույթի երևույթներին առհասարակ:

20-րդ դարի խոշոր փիլիսոփաներից մեկը՝ Էռնստ Կասիրերը, բնութագրելով հասարակական երևույթների համար բնորոշ այդ առանձնահատուկ տեսանկյունը, ասում է. «Մարդը... չունի մի առանձնակի անհատական էություն, նա ապրում է հասարակական կյանքի մեծ ձևերի մեջ՝ լեզվի, կրոնի, արվեստի, քաղաքական հաստատությունների աշխարհում... Նա ստեղծում է լեզվական խորհրդանիշներ, կրոնական խորհրդանիշներ, առասպելական և գեղարվեստական խորհրդապատկերներ, և հենց այդ խորհրդանիշների և խորհրդապատկերների ամբողջության, համակարգի միջոցով է, որ նա ի վիճակի է դառնում ապրելու հասարակական կյանքով, այսինքն՝ կարողանում է հաղորդակցվել ուրիշ մարդկանց հետ և հասկանալի դառնալ ուրիշների համար»<sup>1</sup>:

Հասարակական կյանքի իրողությունների մշակութային-խորհրդանիշային տեսանկյան շուրջ գոյացել է բանավիճային մեծ գրականություն՝ փիլիսոփայական, մշակութաբանական, լեզվաբանական, հնագիտական, ազգագրական-ազգաբանական: Տարբեր են մոտեցումները արժարժվող առանձին հարցերի նկատմամբ, ինչպիսիք են, մասնավորապես, մշակութային-խորհրդանիշային

տարբեր հարացույցներով բնութագրվող հասարակությունների, տարբեր դարաշրջանների, էթնոսների, ժողովուրդների հաղորդակցման, փոխընկալման, փոխհասկացման հնարավորությունների, նրանց միջև պատմական ժառանգորդման հարաբերությունների, այսօրվա տեսանկյունից նրանց մոտենալու-դիտարկելու հարցերը: Ուստի այս երևույթին մշտապես հանդիպում են հնագետը, ազգագրագետը, լեզվաբանը, թարգմանիչը (ինչպես Արևմուտքում ընդհանրացված ձևով կասեին՝ ամեն ոք, ով առնչվում է մշակութային մարդաբանության խնդրակարգին և բնագավառին):

Հասարակական կյանքի իրողությունների մշակութային-խորհրդանիշային տեսանկյունը տարբեր կերպ և տարբեր չափով է դրսևորվում հասարակության տարբեր ոլորտներում: Այն անմիջականորեն տեսանելի չէ տնտեսական, իրավական, քաղաքական ոլորտներում և շատ ավելի ակնհայտ է արվեստի, գրականության, գիտության և նրա պատմության մեջ:

Դրա լավագույն արտահայտությունը մենք գտնում ենք, իհարկե, արվեստի և գրականության մեջ: Արվեստի յուրաքանչյուր տեսակ ունի խորհրդանիշների ու խորհրդապատկերների իր համակարգը, որը կազմում է արվեստի տվյալ տեսակի՝ պոեզիայի, երաժշտության, գեղանկարչության, թատրոնի, ճարտարապետության և այլն, առանձնահատուկ լեզուն, որն էապես պատմական է և էապես անհատական՝ իր ժամանակաշրջանով, մշակույթի կրող ժողովրդով, նրա պատմությամբ ու արժեքներով: Մեկ հատիկ բանաստեղծությունը կարող է ցուցադրել դա.



Եղեգնյա գրչով երգեցի փառքեր.  
- Քեզի ընծա՛ իմ հայրենիք -  
Սոսյաց անտառեն էի զայն կտրեր...

- Քեզի ընծա՛, հին հայրենիք -  
Եղեգնյա գրչով երգեցի քուրմեր.  
Ընդ եղեգան փող լո՛յս ելաներ:  
.....

Հայ պոեզիայի գլուխգործոցներից մեկն է Դանիել Վարուժանի այս բանաստեղծությունը՝ «Ձոն»-ը: Բայց պատմական հիշողության մի ամբողջ հետնախորք ունի այն և մի ամբողջ գաղափարախոսություն է կրում, և դրա իմացությունն ու գեղագիտական ընկալումն են միայն, որ կարող են հնարավոր դարձնել նրա գեղարվեստական արժանիքների լիակատար ըմբռնումը և պոետական ողջ հմայքի հուզական վերապրումը:

Բանաստեղծական ձևի տեսակետից սա տիպական սեքստինա է՝ վեցտողյակ տներով բանաստեղծություն, և այս ձևն արդեն հնարավորություն է տալիս բանաստեղծին իր մտահղացումը և բանաստեղծության բովանդակությունը ծավալելու յուրաքանչյուր հաջորդ վեցտողյակի մեջ նախորդի տողերի կրկնությամբ ու ձևափոխությամբ:

Այդ կերպ, վեցտողյակից վեցտողյակ բանաստեղծը մեզ տանում է Հին Հայաստանից և հեթանոսական տաճարից մինչև իրօրյա պայքարի մարտադաշտերը, «ընդ եղեգան փող լոյս ելաներ»-ից դեպի «ընդ եղեգան փող ո՛ղբ ելաներ», «ընդ եղեգան փող սի՛րտս ելաներ», «ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ», «ընդ եղեգան փող բո՛ց ելաներ»:

Թվում է, թե սեքստինան անավարտ է մնում. ավարտուն սեքստինան վեց վեցտողյակ է ունենում, իսկ Վարուժանի «Ձոնն» ավարտվում է հինգերորդով: Բայց ո՛չ: Ամեն մի հայ մարդ մանկութ զիտե, որ «ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ, ընդ եղեգան փող բո՛ց ելաներ»-ին հաջորդում են վիպասքի՝ Վահագնի ծնունդն ավետող երկու եռատողերը՝ «և ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ. նա հուր հեր ունէր,

բոց ունէր մորուս, և աչկունքն էին արեգակունք»: Ուրեմն, դա նորեն Վահագնի ծնունդն է «հայ մարտիկների», «քաջ մարտիկների» տեսքով... Որովհետև Վահագն դիքը՝ «աստվածն իմ հայրերուս», մարդեղացած է հայոց երվանդյան Տիգրանի դյուցազնական տոհմի մեջ. «Ո՛վ դու Վահագն, աստվածահա՛յր զօրութեան, // Ո՛վ Տիգրանի սերմին մէջ // Դու մարդացած արեգակ...», ասել է Վարուժանը՝ հավատացած լինելով, որ «մեր մայրերուն ծոցին մեջ դյուցազուններ, հանճարներ» նորեն կծնվեն:

Քանի որ Վարուժանի «Ձոն»-ը գրված է Խորենացիով ավանդված վիպասքի կաղապարով, ապա հենց միայն այդ հիմունքով այնքան բնական են թվում «եղեգան գրիչը»,



Դանիել Վարուժան

«եղեգան փողը» և հենց այդ համատեքստում այնքան հարազատ են ընկալվում և ինքնին հասկանալի են թվում «ընդ եղեգան փող ծո՛ւխ ելաներ», «ընդ եղեգան փող բո՛ց ելաներ» պատկերները:

Բայց պատմամշակութային մեկ ուրիշ աշխարհի և ուրիշ ժամանակի մշակութաբանի ու թարգմանչի համար, Խորենացու ընթերցողի համար այս ներգագսողությունն ու ներըմբռնումն արդեն չեն գործում: Ուրեմն, մենք պետք է մի պահ մտովի վերադառնանք հեթանոսական տաճար. ահա Վահագնին զոհ է մատուցվել մի ցուլ, զինին հեղվել է կրակի վրա, խնկամաններում վառվում է խնկեղեգնը, նրա լույսը պատռում է տաճարի բարձր կամարների տակ իշխող կիսախավարը և կայծկլտում է եղեգնախնկի (լավագույնը համարվող խնկի) վեր բարձրացող ծխի մշուշի մեջ: Եվ հնչում է քրմերի հիմներգությունը երկնի, երկրի ու ծովի երկունքից Վահագն աստծու ծնունդի մասին: Եվ այդպես վերստեղծվում, ներկայանում, բեմականանում է տիեզերական միստերիան տաճարական արարողության մեջ:

«Եղեգան գրիչը» ևս այդ նույն եղեգն է. հիշենք, որ «եղեգն» բառը հունարեն «կալամոս»-ն է, որ միաժամանակ հենց «գրիչ» է նշանակում:

«Եղեգան գրիչը» ևս այդ նույն եղեգն է. հիշենք, որ «եղեգն» բառը հունարեն «կալամոս»-ն է, որ միաժամանակ հենց «գրիչ» է նշանակում:

Վերջապես, «Ձոն»-ի մեջ «սօսեաց անտառի» հիշատակությունը ևս վերաբերում է հեթանոսական (Վարուժանի պատկերացմամբ՝ մեր պատմության հերոսական) ժամանակաշրջանին: Ծառապաշտությունը, հատկապես սոսի



ծառի պաշտամունքը հայոց մեջ եղել է անհիշելի ժամանակներից ի վեր: Հայ ժողովրդի պատմության Ուրարտական թագավորության և Այրարատյան թագավորության ժամանակներում տնկվել են սոսիների պուրակներ, որոնք պաշտամունքային նշանակություն են ունեցել: Դրանք վկայված են Խորենացու «Պատմության» մեջ, դրանցում կատարվող պաշտամունքային արարողությունները պատկերված են էրեբունի բերդաքաղաքի որմնանկարներում: Ծառապաշտության տարրերն ավանդաբար հասել են մեր օրերը. հիշենք թեկուզ Ծաղկազարդի-Ծառզարդարի եկեղեցական տոնը: Իսկ սրբազան անտառակները պահպանվել են մինչ օրս Հայոց աշխարհի տարբեր մասերում և, որպես սրբազան մասունքներ, տեղաբնիկների գիտակցության մեջ: Բայց պատմականորեն սոսին որպես սրբազան ծառ խորհրդանիշ է եղել նաև ավելի լայն նշանակությամբ, որ այնքան կարևոր է Վարուժան բանաստեղծի գաղափարախոսության տեսակետից: Սոսիի պատկերը խորհրդանշել է Հայոց աշխարհը՝ նույնքան, որքան և Մասիսների խորհրդապատկերը: Ուստի և սոսին պատկերվել է Հայոց զորաբանակների դրոշներին՝ այդ նույն հեթանոսական ժամանակներում:

Վերադարձը հայոց պատմության հեթանոսական, Վարուժանի պատկերացմամբ՝ հերոսական ժամանակներին, և պատմական հիշողությունն առհասարակ, Վարուժանը հիմքն ու գրավականն էր համարում հայ ժողովրդի գոյատևման համար: Սուլթան-համիդյան ջարդերով սկիզբ էր առել հայոց ցեղասպանության մի նոր ակիբը: Քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ քարտեզի վրայից ջնջվում էր մարդկային քաղաքակրթության օջախներից մեկը, մորթվում էր հնագույն մշակույթի տեր մի ամբողջ ժողովուրդ, որն իր հայրենիքում արդեն առաջադիմում էր դեպի արդիական, եվրոպական քաղաքակրթություն: Նախճիրի սահմնկեցուցիչ տեսարանները Վարուժանի մեջ առաջ էին բերում ոչ թե լացի ու ողբի, այլ ցասման ու վրեժի զգացմունքներ: Նա իրատեսորեն գիտակցում էր, որ հայ ժողովրդին այլ ելք չեն թողել, քան բիրտ, բարբարոս, գազանային ուժի դեմ իր զավակների ինքնամոռաց հերոսությունն ու կորովը մարտադաշտ **հանելը՝ «Ամեն հայու լանջքին տակ // Իր մեկ հին պապն արթնացնել»**, հիշեցնել նրանց **«...Նավասարդները՝ լեցուն // Մարտիկներու վահաններուն կոփյունով»**, տանել նրանց **«Վարդանների ռազմահարդար հետքերով»**, այնպես որ **«Ամեն որ... Ազգին ոգվով հաղորդված // Այնպես վառի, ապստամբի, բորբոքի, որ Թորգոմա Տունն զգա // Թե իր օձախը մարած՝ // Այսօր հրաբուխ է դարձեր»**: Հերոսության, ուժի, քաջ մարտիկների ծնունդի, վրեժի այս գաղափարախոսությանն էր համապատասխանում հին աստվածների պաշտամունքը՝ հայոց Վահագնի և Անահիտի, հելլեն Նեմեսիսի:

Այս գաղափարախոսության բանաստեղծական մոտիվներից մեկը մահացու վիրավոր, բայց թշնամու արյունը հեղած մարտիկի կերպարն է. **«Լուսնին վրկա նայվածքին տակ քանի մ'հեղ // Լեցնելե վերջ ոտխին արյունով // Մեծ սաղավարտը Հայկին՝ // Հոգ չէ, թե ա'յսպես իյնամ»**: Այս մոտիվն է, որ հնչել է 19-րդ դ. հայկական ռոմանտիզմի բանաստեղծության մեջ և հնչել ու դեռ հնչում է Նալբանդյանի **տողերում «...Բայց երանի, որ յուր ազգի // Ազատության կզոհվի...»**:

Հիրավի, հայ ժողովրդին այլ ելք չէին թողել, որովհետև՝

*...Իրենց պինջերը բացած՝  
Ալլահին ամպին մեջե, Սուլթանը ցեխին  
Հոտոտելով փոխն ի փոխ՝  
Կը ժպտին հաշտ իրարու,  
Ու եվրոպան դեմքն իր ետև դարձուցած  
Կոպերը թաց կը շփե -  
Մեր ծուխեն աչքն իր բոզի  
Կըսկըծելուն համար լոկ:*

Կոպի՞տ է ասված: Բայց դա Վարուժանն է գրել՝ իր կըրթությամբ և թե իր մտածելակերպով, իր պոեզիայով և իր անձի էությամբ եվրոպացի՝ Վարուժանը: Եվ գիտե՞ք, նա իրավացի էր: Նա իրավացի էր իր ժամանակին: Ցավո՞ք, նա իրավացի եղավ բազմիցս նաև հետագայում՝ 1918-ին, 1920-21-ին, 1988-1994-ին...

Եվ այսպես, մեկ հատիկ բանաստեղծությունը՝ «Ձոն»-ը, իր գեղարվեստական պատկերներով մեզ տանում է դեպի պատմամշակութային մի լայն կոնտեքստ, մի ամբողջ հետնախորք, որտեղ առաջ են գալիս մտապատկերների յուրովի զուգորդություններ, սովորական բառերն ու արտահայ-



տություններն ստանում են յուրովի իմաստ, և դրա շնորհիվ է միայն, որ հնարավոր են դառնում բանաստեղծության ընկալումը և նրա գեղարվեստական արժանիքների լիակատար ըմբռնումն ու նրա պոետական ողջ հմայքի հուզական վերապրումը:

Ինչպե՞ս թարգմանել ու ներկայացնել «Ձոն»-ը: Կարո՞ղ են արդյոք, և ինչպե՞ս են կարող, որքանո՞վ են կարող պատմամշակութային մեկ ուրիշ աշխարհի և ուրիշ ժամանակի մշակութաբանն ու թարգմանիչն ընկալել և վերապրել, վերարտադրել, վերապատմել և հաղորդել սովորական բառերի այդ անսովոր գործածությունները, անսովոր արտահայտությունները, դրանց հետ կապված մտապատկերների զուգորդությունները:

Սա է տարբեր մշակույթների հաղորդակցման (փոխ-հաղորդակից լինելու), երկխոսության, դիսկուրսի հանգուցային հարցերից մեկը, որի տարբեր լուծումներն են առաջարկել Կանտն ու Յեզեյը, Շլայերմախերն ու Գադամերը, Շպենգլերն ու Կասիրերը, գիտության մեթոդաբանության մեջ՝ Կունը, Ֆոյերբաբենդը, Մակմալինը և ուրիշներ:

Ու չնայած տարբեր լուծումներին, չի վիճարկվում միայն պատմամշակութային իրողությունների իսկապես եզակի, անհատական, ուրույն, անկրկնելի լինելու հանգամանքը, որի հետևանքով դրանք կարող են անհասկանալի դառնալ, արտառոց և նույնիսկ ոչ բանական՝ իռացիոնալ, անհեթեթ թվալ մեկ ուրիշ ժամանակում, մեկ այլ պատմամշակութային իրականության մեջ: Խընդրի մի քանի այդպիսի նրբերանգները կուզենայի ցուցադրել մի հանրահայտ օրինակով:

\*\*\*

Ինչպես և նախորդ դեպքում, սկսեմ պոետիայից՝ Վիկտոր Զյուգոյի «Բարիկադներում» բանաստեղծության Եղիշե Չարենցի թարգմանություն-փոխադրությունից.

*Քաջաբար կռվող կոմունարների  
Արյունով ներկված բարիկադներում  
Բիրտ գինվորները վերցրրին գերի  
Նաև մի տղա՝ տասներկու տարու...*

1871-ի Փարիզյան կոմունային է նվիրված այս բանաստեղծությունը: Բայց մի լայն հետնախորք ունի այն՝ թե՛ Վիկտոր Զյուգոյի բանաստեղծական կենսագրության համատեքստում և թե՛ Եղիշե Չարենցի պոետիայի մեջ արդիական թեմատիկայի գեղագիտական լուծումների տեսակետից:

18-րդ դ. Ֆրանսիական մեծ հեղափոխությունը, 1830-ի Զուլխյան և 1848-ի Փետրվարյան հեղափոխությունները, 1871-ի Փարիզյան կոմունան եղան ոչ միայն Ֆրանսիայի, այլև ամբողջ Եվրոպայի պատմության վճռորոշ, բեկումնային իրադարձությունները:

Յուրովի էր դրանց գեղագիտական ընկալումը արվեստի և գրականության ստեղծագործություններում: Զեղափոխության մեջ՝ արյունալի իրադարձությունների և մարդուն վեհացնող գաղափարների ու իդեալների այդ համաձուլվածքի մեջ, արվեստագետին առինքնում էր հերոսականը՝ միախառնված դրամատիկական հոգեցունց արումների և դեպքերի ողբերգական ընթացքի հետ: Այդ գեղագիտական ընկալումն այնքան համահունչ է Բեթհովենի երաժշտությանը: Գեղանկարչության մեջ այդ իրադարձությունների գեղարվեստական կերպարն ու գեղարվեստական գաղափարը խտացված ձևով ներկայացված են Էժեն Դելակրուայի «Ազատությունը բարիկադների վրա» («Ազատությունը, որ առաջնորդում է ժողովրդին») կտավում, որը ռոմանտիզմի ներկայացուցիչ նկարիչն ստեղծել



Էժեն Դելակրուա «Ազատությունը բարիկադների վրա»

.....



է 1830-ի Հուլիսյան հեղափոխության ազդեցությամբ և որն իսկապես կարող է դիտվել որպես այդ բոլոր հեղափոխությունների խորհրդանիշը: Իսկ գեղարվեստական գրականության մեջ Վիկտոր Հյուգոյի ստեղծագործությունն է մարմնավորում հեղափոխության գեղագիտական ընկալումն ու արտացոլումը ռոմանտիզմի ոգով: Հյուգոն 19-րդ դարի բոլոր հեղափոխությունների ժամանակակիցն ու մասնակիցն էր, և կարելի է նույնիսկ ասել, որ դրանք էին նրա ստեղծագործական կենսագրության փուլերի իրական ժամանակագրական ենթահիմքը:

Այդ նույն իրադարձություններին պարբերաբար անդրադարձել է 20-րդ դարի ֆրանսիական գեղարվեստական գրականությունը՝ յուրովի վերապրելով դրանք Ֆրանսիայի նորագույն պատմության նույնքան դրամատիկական իրադարձությունների ֆոնի վրա: Այստեղ նույնպես մարդուն վեհացնող գաղափարներով ու իդեալներով սնվող հերոսականն է՝ իդեալականացված հերոսականը, ընդդեմ դեպքերի ողբերգական ընթացքի: Հիշենք պատերազմի, օկուպացիայի, համակենտրոնացման ճամբարի փորձություններով և Դիմադրության շարժման բովով անցած Արթյուր Ադամովի «1871-ի գարունը» ողբերգությունը: Հիշենք նաև բոլորովին այլ գաղափարախոսություն դավանող Ռոմեն Ռոլանի «Հեղափոխության թատրոն» վերտառությամբ միավորված ութ դրամաները՝ դրանց ավարտական, հոյակապ բանաստեղծական պաթոսով լեցուն «Ռոբեսպիեր» դրամայով:

Եվ ահա, Ֆրանսիայի պատմության այդ բոլոր նշանակալի իրադարձություններին ուղեկցել է «Հռենոսյան բանակի ռազմերթի երգը»: Այն ուղեկցում է նաև թատերական գործողությունների ծավալմանը Ռոլանի «Ռոբեսպիեր»-ում. սկզբում՝ ութերորդ պատկերում, այն միայն հեռվից է լսվում, երբ գործողության մեջ են մտնում Փարիզյան կոմունային օգնության եկող կամավորականները՝ ֆեդերատները, այնուհետև այդ ռազմերթի երգի բառերն ու տողերը, այս կամ այն պատմական գործողության առիթով, հնչում են դրամայի հերոսների շուրթերից, իսկ վերջին, քսանչորսերորդ պատկերում, մի տեսիլի մեջ, Ռոլանի մտահղացմամբ, նորից կողք-կողքի են կանգնում հեղափոխության բոլոր հերոսները. տերմիդորականները, Բաբ-

յոֆը, Գոշը, Ռենյոն, Բիլլոն ոգեկոչում են սպանվածներին և գիլյոտինով գլխատվածներին՝ Մարատին և Դանտոնին, Սեն-ժյուստին և Ռոբեսպիերին, բոլոր-բոլոր յակոբինականներին, որովհետև՝ «երբ Հանրապետության գլխին սպառնալիք է կախված, մենք մի շարքում կլինենք նրա պաշտպանության համար... Մարտի մեջ նրանք կենդանի են...»: Եվ այստեղ արդեն ամբողջ ուժով թնդում է Մարսելից Փարիզ հասած Հռենոսյան բանակի կոնֆեդերատների «Ռազմերթի երգը», որն այդուհետ հայտնի է բոլորին «Մարսելիեզ» անունով:

1871-ի հեղափոխությունն ընթացավ նույն սցենարով, ինչ և 1789-92-ին. նորից՝ միապետության տապալում և Հանրապետության ու քաղաքացիական ազատությունների հռչակում, Փարիզյան կոմունա՝ դրանց պաշտպանության համար, արտաքին սպառնալիք և օկուպացիա պրուսական բանակի կողմից, կառավարության դավաճանական քաղաքականություն՝ միապետությունը վերականգնելու համար, նրա համագործակցությունը օկուպանտների հետ, կառավարական գործերի «բիրտ զինվորների» կռիվը «քաջաբար կռվող կոմունիստների» դեմ, որոնց շուրթերից հնչում էր միշտ «Հռենոսյան բանակի ռազմերթի երգը»: Ու երբ միապետությունը Ֆրանսիայում վերջնականապես տապալվեց և հռչակվեց Երրորդ հանրապետությունը, «Հռենոսյան բանակի ռազմերթի երգը»՝ նշանավոր «Մարսելիեզը», նույնպես վերջնականապես հռչակվեց Ֆրանսիայի հիմն:

Ռազմերթի երգը որպես հիմն, որպես ազգային օրհներգ: Եվ այն էլ այսպիսի խոսքերով՝

*Եկե՛ք հայրենյաց զավակնե՛ր,  
Մեծ փառքի մեր պահն է հասել.  
Մեր դեմ բռնապետությունն իր  
Արյունոտ դրոշն է պարզել,  
Արյունոտ դրոշն է պարզել...*

*Լսո՞ւմ եք, արծակ դաշտերում  
Բիրտ զինվորներն են ոռնում,  
Որ գալիս են՝ մորթելու մեր գրկում  
Մեր զավակներին  
Եվ մեր կանանց:*



Ի գե՛ն, ո՞վ քաղաքացիներ,  
Կազմե՛ք գումարտակներ,  
Հառա՞ջ, հառա՞ջ,  
Մինչ արյունն անմաքուր  
Հեղվի մեր դաշտերում:

.....

«Մարսելիեզի» հեղինակը Կլոդ ժոզեֆ Ռուժե դը Լիլն է՝ ռազմական ինժեներ, գյուտարար ու նաև՝ բանաստեղծ ու երգահան: 1792-ին Ռուժե դը Լիլը Հռենոսյան բանակի կապիտան էր և բանակի համար «Ռազմերթի երգը» ստեղծեց այն ժամանակ, երբ բանակն արշավի դուրս եկավ միապետական Ավստրիայի վերահաս ինտերվենցիայից Հանրապետությունը պաշտպանելու համար: «Ռազմերթի երգը» իսկույն ճանաչում և լայն տարածում գտավ, 1795-ին հրռչակվեց Հանրապետության հիմն և, ինչպես ասացի, այդուհետ ուղեկցեց ֆրանսիական բոլոր հեղափոխություններին, ...թեև, այսուհանդերձ, Ռուժե դը Լիլի անունը **որպես երգահանի** ոչ միշտ է հիշատակվում ֆրանսիական պոեզիայի և երաժշտության դասական անթոլոգիաներում:

19-րդ դարի ֆրանսիական երաժշտությունը և երգարվեստը, ֆրանսիական պոեզիան հայտնի են իրենց նշանավոր անուններով և կատարյալ ստեղծագործություններով: Բայց ազգային հիմնը լավ կամ վատ չի լինում. այն ուրիշ մակարդակում է և այլ չափումներ ունի: Այնպես որ 1873-ին «Մարսելիեզը» երրորդ հանրապետության ազգային հիմն հռչակվեց հենց այնպես, ինչպես երգվել էր, և հենց ա՛յս խոսքերով: Ֆրանսիական պոեզիայի և երաժշտության դասական ներկայացուցիչներից ոչ մեկի մտքով անգամ չանցավ, և չէր կարող անցնել, «Մարսելիեզին» մի այլընտրանք առաջարկել: Հեղափոխական իրադարձությունների հարուցած դրամատիկական ապրումների ֆոնի վրա դա այնքան բնական ու հասկանալի էր թվում: Բայց դա բնական ու հասկանալի է ֆրանսիացիների՝ պատմական ժողովուրդ լինելու և իրենց որպես պատմական ժողովուրդ գիտակցելու՝ ավելի լայն համատեքստում: Ֆրանսիացու ազգային ինքնության գիտակցության էական բաղադրիչը պատմական հիշողությունն է: Եվ այդպես է (այդպես պետք է լինի) ամեն մի պատմական ժողովրդի համար:

Վիկտոր Հյուգոն 1871-ի հեղափոխական իրադարձություններին արձագանքեց «Ահավոր տարին» ժողովածուի բանաստեղծությունների շարքով, որոնք իրենց գեղարվեստական պատկերներով անմիջական աղերսներ և զուգորդություններ ունեն «Մարսելիեզի» հետ. այստեղ այդ նույն՝ արյունով ներկված բարիկադներն են և... ռոմանտիկական՝ բարոյական առաքինության աստիճանին բարձրացված՝ հերոսականը: «Բարիկադներում»-ի թարգմանիչներն իրենց բանաստեղծական ներքին զգացողությամբ ընկալել, ըմբռնել են գեղարվեստական պատկերների այդ զուգորդությունը: Եվ ահա, բանաստեղծության՝ Չարենցի հայերեն թարգմանության-փոխադրության մեջ մենք գրտնում ենք «Մարսելիեզի» մի ուղղակի արձագանքը: Ֆրանսերեն բնագրի սկզբնատողերն այսպիսին են՝

*Sur une barricade, au milieu des paves  
Souilles d'un sang coupable et d'un sang pur laves,  
Un enfant de douze ans est pris avec des hommes...*

(տողացի թարգմ.՝ **Փողոցի սալահատակի մեջտեղ մի բարիկադում, // Որ թաց էր մեղավորների պիղծ արյունից և մաքուր արյունով լվացված, // Յուրայինների հետ գերվեց մի տղա՝ տասներկու տարու...**), այնինչ հայերեն թարգմանության/փոխադրության մեջ՝ այսպիսին.

*Քաջաբար կռվող կոմունարների  
Արյունով ներկված բարիկադներում  
Բիրտ զինվորները վերցրին գերի  
Նաև մի տղա՝ տասներկու տարու...*

Ֆրանսերեն բնօրինակում այս «բիրտ զինվորները» չկան: Դրանք «Մարսելիեզի» այն «բիրտ զինվորներն են, որ... գալիս են մորթելու մեր զավակներին և մեր կանանց»: Թարգմանիչն է Ռուժե դը Լիլի «Մարսելիեզից» դրանց մեջբերել մեծն Վիկտոր Հյուգոյի բանաստեղծության տեքստ, և դրա արդարացումը, ինչպես ասացի, այդ երկուսի գեղարվեստական պատկերների փոխ-հարազատությունն է, զուգորդությունը: (Այնպես որ Հյուգոն ինքը թերևս «չէր նկատի» այդ միջամտությունը...)



«Մարսելիեզը» այդպես էլ եղավ ու մնաց Ֆրանսիայի Երրորդ, Չորրորդ, Յինգերորդ հանրապետությունների ազգային հիմնը: Իհարկե, «Մարսելիեզի» երաժշտությունը սիրով և հոգեհարազատությամբ գործիքավորվել, խըմբագրվել, երգչախմբային կատարման համար մշակվել է, հաջորդաբար, 2-3 անգամ, և ֆրանսիացիները երախտագիտությամբ են հիշում այդ գործը կատարած երգահան-երաժիշտներին: Բայց «Մարսելիեզը» էլի մնացել է «Մարսելիեզ»:

Ինչպես ամեն մի ազգային հիմն, «Մարսելիեզը» հնչել է պաշտոնական արարողությունների ժամանակ, պատմական ինչ-ինչ պահերին անցել է ընդհատակ և այնտեղից կոչ է արել «Ի զե՛ն, ո՛վ քաղաքացիներ», հնչել է Ֆրանսիայի համար հանդիսավոր պահերին: Առանց «Մարսելիեզի» պատմական ու մշակութային համատեքստի՝ անհնար է պատկերացնել, ռացիոնալ, հասկանալի ու բանական, տրամաբանական բացատրություն գտնել ընդհանրապես հանդիպող-կրկնվող շատ տեսարանների համար: Ահա գեղասահքի մրցումներում մրցանակ չահած, թեթև ու գեղանի, էսմերալդային հիշեցնող մարզուհին, որին իր գուգընկերը մի ձեռքով վեր էր բարձրացնում, հիմա «Մարսելիեզի» հնչյունների տակ, երջանկության արցունքներն աչքերին, մրմնջում է թե՛

*...Սրբի պես սիրված Յայրենի՛ք,  
Ուժ տուր մեր վրեժխնդրությանը  
Եվ մեր բազուկներին...  
.....  
Թո՛ղ քո մեռնող թշնամին  
Քո հաղթանակը և մեր փառքը տեսնի:  
...Որ թշնամու արյունն անմաքուր  
Յեղվի մեր դաշտերում...*

Իսկ ավարտին, հազարավոր հանդիսականները երկար ծափահարությամբ երախտագիտություն են հայտնում իրենց պարզևած գեղագիտական հաճույքի համար:

Եվ կյանք մտնող ամեն մի նոր սերունդ մեծերից ման-

կութ լսում է «Մարսելիեզը» և ներըմբռնողությամբ հասկանում է պահի հանդիսավորության և երգի բառերի խորհրդանշական-փոխաբերական իմաստը:

\* \* \*

1991-ին Երևանի օպերային թատրոնի՝ Ազատության հրապարակում բյուր-հազարավոր ցուցարարների առջև նորից հնչեց «Մեր Յայրենիք»-ը: Դա, հրապարակավ, մեր ժողովրդի ազգային արժանապատվության արտահայտությունն էր՝ հուզաթաթավ դրամատիկական ապրումներով, ի պատասխան իրադարձությունների ողբերգական ընթացքի: Արդեն կատարվել էին Սումգայիթի, Կիովաբադի, Բաքվի նողկալի արյունոտ ոճիրները գորբաչոյյան հանցախմբի հովանավորությունը վայելող և անպատժելիությունից լկտիացած թուրք ազգայնականների ձեռքով: Ո՛չ խորհրդային վերնախավը, ո՛չ նրա ծախու զինվորականությունը և ո՛չ էլ մեծ տերությունների դիվանագետները՝ իրենց չարչիական շահերին հետամուտ, շահագրգռված չէին, որ աշխարհին լսելի դարձնեին նոր ցեղասպանության զոհերի աղեկտուր ծայները և ճշմարտության ծայնն առհասարակ, որոնք խլանում էին կեղծիքը, խաբեությունը, խարդավանքը, ստորությունը դիվանագիտություն դարձրած քարոզիչների բարձրացրած վայնասունի մեջ: Եվ հետագայում ևս, միջազգային հանրությունն այդպես էլ անտեղյակ մնաց Ուտիքի, Գարդմանի, Յյուսիսային Արցախի հայկական հոծ բնակչության զանգվածային տեղահանության ահավոր տեսարաններին, դրանց պաշտպանության համար հայ ազատամարտիկների մղած անհավասար և հերոսական, կենաց ու մահու կռիվներին:

«Մեր Յայրենիք»-ը նորից հրապարակավ հնչեց որպես ահազանգ և որպես հավաստումը այն բանի, որ հայ ժողովուրդը միայն ինքն է կարող և ինքը պետք է աշխարհին ճշմարիտ ներկայացնի իր դատը, և որ էլի հասել է մի պահ, երբ նա, մեն-մենակ մնացած, նորից յուր քաջ որդվոց սուրբ արյունով միայն պետք է փրկի իր Յայրենիքի ևս մի պատառիկը, որի մկրատված քարտեզով արդեն սկսել էին



ծնել մեր ապագան ԱՄՆ-ը, հիմարացված Ռուսաստանը (ինչպես որ միշտ լինում է իր պատմության վճռական պահերին) և նրանց ստվերում թաքնված Թուրքիան...

«Մեր Հայրենիք»-ի մեղեդու ակունքները հասնում են մինչև 19-րդ դ. հայ ինքնապաշտպանական կռիվների և ֆիդայական շարժման ժամանակները: Երաժշտագետների վկայությամբ, «Մեր Հայրենիք»-ը եղել է ամենից սիրված ու տարածված ժողովրդական-ֆիդայական այն մեղեդիներից մեկը, որոնք հավաքել, մշակել և հանրությանն են ներկայացրել 19-րդ դ. մեր ականավոր երաժշտահաններն ու երաժշտահավաքները: Այդ գործի մեծ երախտավորներից Քրիստափոր Կարա-Մուրզան բազմա-



ծայնել է «Մեր Հայրենիք»-ը և նրանով է սկսել ու ավարտել իր նշանավոր երգչախմբային համերգները, որոնք նա տալիս էր 1880-ական թվականներից սկսած Թիֆլիսում և այլուր՝ Անդրկովկասի հայկական մշակույթի կենտրոններում և հայաշատ վայրերում: Լայնորեն տարածվելով՝ «Մեր Հայրենիք»-ը դարձավ 19-րդ դարի վերջի և 20-րդի սկզբի ազգային-ազատագրական կռիվների նշանավոր դրվագների անբաժան ուղեկիցը, կամավորական շարժման և կամավորական խմբերի ու զորամիավորումների մարտական երգը: Իսկ ընդհանրապես, իր մոտիվներով «Մեր Հայրենիք»-ը համահունչ էր 19-րդ դարի ռոմանտիզմի բանաստեղծությանը և երգարվեստին, այն մարմնավորում էր ռոմանտիզմի գեղագիտության հավատամքին հատուկ՝ իդեալականացված հերոսականը, որը սնվում էր ազատության և հայրենասիրության՝ մարդուն վեհացնող գաղափարներով: Այստեղ էր, որ հայ մարդու կյանքին և հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը սպառնացող, նրա ազգային արժանապատվությունը ոտնահարող Օսմանյան կայս-

րության մահասփյուռ քաղաքականությանը ռոմանտիզմը հակադրում էր հայ ժողովրդի՝ պատմակա՝ ն ժողովուրդ լինելու գաղափարը: Ղևոնդ Ալիշանը, Նահապետ Ռուսինյանը, Սկրտիչ Պեշիկթաշյանը, Ռափայել Պատկանյանը դիմում էին հայոց պատմական անցյալի հերոսական դրվագներին, որպեսզի զորացնեն ժողովրդի ինքնապաշտպանության նորոյա հերոսների

մարտական ոգին և լրացնեն նրանց շարքերը նորանոր ուխտյալ քաջորդիներով: Ժամանակի հայ հասարակության մեջ ռոմանտիզմի գեղագիտության հավատամքի և այս ամբողջ գաղափարախոսության լայն տարածումը, դրանց առաջ բերած ոգևորությունը, անշուշտ, մեծապես պայմանավորված էին նաև Տիգրան Չուխաջյանի, Գաբրիել Երանյանի, Մակար Եկմալյանի, Քրիստափոր Կարա-Մուրզայի, իսկ հետո նաև՝ մեծն Կոմիտասի ու նրա աշակերտների՝ այդ նույն գաղափարախոսությունը դավանող երաժշտահանների, երգահանների, երգահավաքների, խմբավարների ստեղծագործությամբ և ծավալած գործունեությամբ: Նրանց շնորհիվ էր, որ ստեղծվեց եվրոպական երաժշտական մշակույթի կատարելությանը բարձրացված, բայց և խորապես ազգային երաժշտական ժառանգություն: Նորից ու նորից ցուցադրվեց, որ, ինչպես որ բոլոր դարաշրջաններում, հայ մշակույթն ընդհանրապես ներքին կարողականություններն ունի ծավալվելու ժամանակի ամբողջ մշակութային տարածության մեջ...

Բայց դեռևս 19-րդ դարի ռոմանտիզմի ներկայացուցիչների ենթագիտակցության մեջ (իսկ որոշ դեպքերում բացահայտորեն գիտակցված ձևով) միշտ կար այն տազնապալի զգացողությունը, որ մեր ժողովրդին մեն-մենակ են թողնելու օսմանյան արյունուշտ բռնակալության դեմահանդիման, և այդ զգացողությամբ է պայմանավորված հայ



մայրերին մեծագույն զոհողության նախապատրաստելու անընդհատ կրկնվող մոտիվը: «Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բազե, // Քո՛ւ երգը գուցե իմ որդին կուզե... // Բազեն որ եկավ՝ որդիս լռոեցավ, // Ռազմի երգերի ծայնով քնեցավ», - ասում է մայրը Ռաֆայել Պատկանյանի «Օրորոցի երգ»-ում, իսկ «Վանեցի մոր երգ»-ում մայրը դիմում է որդուն «Տո՛ւր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուկները արծակեմ, // Ու այդ թուլիկ աջիդ մեջը մի պողպատե սուր դընեմ, // Ըստրուկ գընա՛ արյան դաշտը, վերադարձի՛ր ազատված...»: Ու ամենից ցնցողը, իհարկե, Պեշկեպաշյանի բանաստեղծության մեջ մահացու վիրավոր քաջորդու հորդորն է մորը՝ «Թրքոց մայրեր թող լան, ու դուն // Ուրախ լուրեր տար ի Ձեյթուն», որ, ինչպես վերն ասացի, «Մեր Հայրենիք»-ի «Ամենայն տեղ մահը մի է... // ...Բայց երանի, որ յուր ազգի // Ազատության կզոհվի...»-ի անընդհատ ուժգնացող հանգերգն է, որը Դանիել Վարուժանի մոտ դարձավ արդեն մարտակոչ՝ ծավալվող ցեղասպանության իրողությանը դիմակայելու համար:

...Այս ամբողջ համատեքստում միանգամայն հասկանալի և բնական եղավ այն, որ «Մեր Հայրենիք»-ը՝ կամավորական շարժման և կամավորական խմբերի, զորամիավորումների մարտական երգը, ազգային-ազատագրական կռիվների նշանավոր դրվագների և Հայաստանի անկախության հաստատման ճանապարհը հարթած հերոսամարտերի անբաժան ուղեկիցը, հռչակվեց Հայաստանի Հանրապետության հիմն, նրա ազգային օրհներգը: Դա եղավ 1919-ին, երբ մեծ շուքով նշվեց Հայաստանի Հանրապետության առաջին տարեդարձը: «Մեր Հայրենիք»-ը վերադաշնակել էր և 1919-ին նոտագրեց Կոմիտասի «հինգ սաներից» մեկը՝ Բարսեղ Կանաչյանը, մի մեծատաղանդ

երաժշտահան և խմբավար, որը խոշոր ավանդ ունի հայ երգչախմբային արվեստի զարգացման գործում: Երաժշտագետ Ռոբերտ Աթայանը հատկապես նշում է Կանաչյանի՝ երգչախմբի և ընդհանրապես վոկալի նուրբ զգացողությունը, հայ ժողովրդական երգերի դաշնակումների և հեղինակած մեներգերի մեղեդիական վարպետությունը:

Ժամանակի հայ մտավորականները, այդ թվում և բանաստեղծության ու երաժշտության դասականները, որոնք իրենք անցել էին հայրենիքի անկախության դժվարին ու հերոսական ճանապարհը, մեծ ոգևորությամբ ողջունեցին Հայաստանի Հանրապետության հռչակումը և իրենց մասնակցությունը բերեցին նրա տարեդարձի տոնակատարությանը, և այս դեպքում ևս նրանցից ոչ մեկի մտքով անգամ չանցավ, և չէր կարող անցնել, «Մեր Հայրենիք»-ին մի այլընտրանք առաջարկել: Անկախության ճանապարհի աներևակայելիորեն դաժան և ողբերգական իրադարձությունների հարուցած դրամատիկական ապրումների ֆոնի վրա դա այնքա՞ն բնական ու հասկանալի էր թվում: Բայց այս դեպքում ևս մենք կարող ենք ասել. դա բնական ու հասկանալի էր մի ավելի լայն համատեքստում. չէ՞ որ ասպարեզում հայ մտավորականության այն սերունդն էր, որի ինքնության գիտակցությունը խորապես պատմական էր և որը հայ ժողովրդի մեջ արթնացրել էր պատմական ժողովուրդ լինելու և իրեն որպես պատմական ազգ գիտակցելու համոզմունքը: Պատմական հետնախորք ունենալու շնորհիվ էր, որ «Մեր Հայրենիք»-ն ընկալվում էր ոչ թե իբրև պարզապես պետության պաշտոնական հիմն, այլ իբրև իսկապես ազգային օրհներգ, որ հնչել էր, երգվել ու երգվում էր ազգային կյանքի նշանավոր պահերին: Ներընկալման այս առանձնահատկությունները, ներըմբռնման այս նուրբ տարբերությունները շուտով իրենց զգացնել տվեցին:

(շարունակելի)

1. E. Cassirer. Symbol, Myth, and Culture. New Haven and London: Yale University Press, 1979, p. 137.






1907

թ. նոյեմբերի 9-ին վախճանվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ արք.

Խրիմյանը: Հայոց Հայրիկի մահվան հարյուրամյակի առիթով, ստորև, ընթերցողներին ենք ներկայացնում պատմագիտական տեսակետից հետաքրքրական նամակագրությունը Խրիմյան Հայրիկի և հռչակավոր աշխարհագետ, հայ ժողովրդի բարեկամ Հենրի Ֆինիս Բլոս Լինչի միջև: Նամակները, որ պահպանվում են Խրիմյան Հայրիկի Ֆոնդում, մեզ է տրամադրել Եղիշե Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանը:

«Դրոշակ»



**Խրիմյանի նամակը Հենրի Ֆինիս Բլոս Լինչին**

Ողջոյն և օրհնանք հայոց հայրիկէն, որոյ սրտին մէջ Ձեր ցանկալի անուն և յիշատակ անջնջելի դրոշմուած է:

Ես չգիտեմ պատահո՞ւմ էր, թէ Աստուածային տնօրինութիւն, որ Դուք իմ օժման փառաւոր հանդէսին Սուրբ Էջմիածին գտնուեցաք: Մինչ Մայր տաճարին առաջ օժման արարողութիւն կատարում էր երկոտասներան եպիսկոպոսներով, անշուշտ նորատեսիլ մի շքեղ հանդիսաւորութիւն էր Ձեր աչքին առաջ, և Դուք վեհարանի պատուհանէն լուսանկարիչ արուեստով հանդէսին պատկերը հանում էիք. յետոյ ի Լոնդոն դառնալով երկու մեծադիր օրինակներ նուիրած էիք Մայր Աթոռոյ թանգարանին:

Աւա՛ղ, շուտով անցաւ ծաղկազարդ և հայ ժողովուրդի որոտածայն ովսաննաները «Կեցցէ Հայոց Հայրիկ» և այլն:

Այո, հանգիստ կեցայ մինչև իննսուն և վեց թուականը և ահա սկսեց Թուրքաստանի սոսկալի կոտորածը և այդ կոտորածէն փախուստ տուողները, գրեթէ երեսուն հազարէն աւելի, անցան դէպ Ռուսիա և գունդագունդ հետզհետէ գալով



պաշարեցին Սուրբ Էջմիածնի դուռը: Միթէ կարող է երևակայել, թէ Հայոց Հայրիկ ինչ անտանելի նեղութեան մէջ մնաց: Այլևս ոչ երբեք վիատեցայ, օրհնեալ լինեն Ռուսիոյ բարերար ազգայինք, առատ-առատ փող հասուցին ինձ և ես ոչ միայն գաղթականներ հոգացի մինչև նոքա տեղաւորեցան զանազան քաղաքներ և իրենց համար աշխատութիւն գտան, այլև Պոլսոյ Պատրիարքարան ևս բաւական գումարներ ղրկուեցան:

Թուրքիոյ կոտորածին պատճառներ Ձեզ քաջայայտ է, իսկ ես չկամիմ աստ բացատրել, միայն այսչափ գիտեմ ես, որ սուր տաճիկին ձեռքն էր, բայց թեւ շարժող Ռուսիան էր, այն զոր հայեր կը դաւանէին իբրև միակ պաշտպան Քրիստոնէից: Վասն զի Ռուսիան պահ մը կարծեց մի գուցէ Թուրքաստանի յեղափոխական բոցեր երոպացոյ պաշտպանութեամբ մի նոր ազատ Հայաստան ստեղծեն Թուրքիայում, զոր նա ի սկզբանէ անտի իւր բաժին համարած էր: Պատմում են, Լօպանով իշխան, որ մեռաւ, ասած է «Մեզ Հայաստան պէտք է և ոչ հայեր»: Գաւառներէն ինձ հասած կոտորածի տեղեկագրերը յայտնապէս գրում են, որ հայոց կոտորածի ժամանակ ռուսաց հիւպատոսներ զանազան Թուրքիոյ քաղաքներում մասնակցութիւն ունեցեր են, թուրք փաշաներուն հետ խորհրդակցելով:

Թողունք անցեալ այժմ. Ռուսիոյ տերութիւն մի այլ կոտորած սկսեց, զոր պէտք է կոչել հոգևոր կոտորած. մի նոր օրէնսդրութիւն հրատարակեց, Բարձրագույն հրովարտակով, որով հայոց բովանդակ եկեղեցական կայքեր Էջմիածնէն սկսեալ, նուիրական կտակներ, բոլոր անշարժ կայքեր գրաւել և ինքն պէտք է լինի խնամակալ-մատակարար, այսինքն կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ և այլն: Այս կերպ մը օրէնսդրութեան նպատակը մեզ շատ ի վաղուց անտի յայտնի է և այս է. հայոց անուն ու եկեղեցին ջնջել և միացնել օրթօդոքսին հետ: Իսկ Հայոց անգէն Հայրիկ ի՞նչ միջոց ուներ այս տարօրինակ օրէնսդրութեան դէմ կռուելու, ոչինչ այլ միայն հինգերորդ դարու Արտաշատա ժողով մի կազմել, բոլոր հոգևորական հովիւներ Մայր Աթոռ հրաւիրել և անժխտելի ուխտ կնքել. միաձայն հաւանութեամբ մերժել այս նոր օրէնսդրութիւնը և պատասխան տալ: Երբեք չենք հաւատար, որ մեր պատասխանը Նորին Կայսեր ու Նախարարաց ժողովին առաջ ընդունելութիւն գտնէ: Նա պիտի սկսէ հնարամիտ երկայնամտութեամբ պայքարել և այժմէն իսկ սկսած է եկամտից աղբիւրներուն ակը գոցել: Բոլոր պանքերուն հրաման արձակած է, որ Հայոց եկեղեցական գումարները ի սպառ արգելուին. հաւատալով, որ հոգևորական դասը անօթի մնալով անձնատուր լինի: Հայ ժողովուրդը ողջ է և ջերմեանդ առ իւր եկեղեցին, իւր հոգևորականաց պատիւն կարող է պաշտպանել:


Շատ բան ունէի Ձեր ազնուութեան գրելու, սակայն կը թողում, որ պ. Տոնապետեան բերանով պատմէ: Բայց չեմ մոռանար համառոտ բանիւ յայտնել իմ խորին շնորհակալութիւնը և օրհնութիւնը Ձեր հոյակապ աշխատասիրութեան մասին, որ ամենահաճելին է. մանաւանդ իմ ծննդավայր Վասպուրական աշխարհի նկարագրութեան համար, որ մեծ խնամքով կազմեր էք, ու իբրև այլ երոպացի ճամբորդներ հարևանցի տեսութեամբ չէք անցեր, այլ թափանցեր էք հայ ժողովուրդի հոգեկան աշխարհը և հասկացել, որ ինչպէս դարերով նա կարողացել է պահել իւր գոյութիւնը, որ այնչափ այլազան ազգերու արշաւանաց ենթարկուելով ճմլուեր է, բայց համախմբուեր է և մեր սուրբ հայոց աղօթք պահպաներ է զինք:

Պարտաւոր կը համարիմ ես կրկնակի շնորհակալութիւնս յայտնել Ձեզ, որ չէք մոռացել արձանագրել Վասպուրականի Արծոյն անդուլ տքնութիւնը իւր հայրենեաց յառաջադիմութեան համար:

Ի վերջ գրոյս մի բանի խորհրդական մտքեր յայտնած եմ պ. Տոնապետեանին խոնարհաբար յայտնել Ձեր ազնուութեանը, որոյ համար կանխապէս աղաչում եմ Ձեզ, որ երբեք չմոռանաք Հայոց խնդիր:

Ամմոռաց մտքք միշտ աղօթարար  
Ձեր Հայոց վշտակիր Հայրիկ

Օգոս. 30, 1903, Էջմիածին









# ԱՐՇԱԼՈՒՅՍ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ

## ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԻՆ

Հայաստանի Առաջին Հանրապետության նշանավոր քաղաքական ու կուսակցական գործիչ Արշալույս Աստվածատրյանը վտարանդիության տարիները անց է կացրել Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում, որտեղից նա նամակագրական կապ է պահպանել կուսակցական իր ընկերների հետ: Նամակների սևագրությունների մատյանը, որի մասին խոսք է եղել «Դրօշակի» 2007 թ. օգոստոսի համարում (տե՛ս Վ. Գրիգորյան, Արշալույս Աստվածատրյանի նամակները «Հայրենիքի» խմբագիր Ռուբեն Դարբինյանին), հրաշալի պատկերացում է տալիս այն մասին, թե ո՞ւմ հետ է թղթակցել Ա. Աստվածատրյանը և ի՞նչ հարցեր են շոշափվել այդ նամակներում: Համարյա ամեն ամիս նա նամակներ է գրել իր վաղեմի ընկերոջը՝ Հայաստանի Առաջին Հանրապետության բարձրաստիճան գործիչներից մեկին՝ Սիմոն Վրացյանին (1882-1969 թթ.) և ստացել նրա պատասխանները:

Նամակներից մեկում Ա. Աստվածատրյանը գրում է, որ Ս. Վրացյանի հետ մտերիմ է եղել դեռևս դպրոցական տարիներից: Մտերմությունն ավելի է ամրապնդվել հետագա, հատկապես անցյալ դարի 10-ական թվականների վերջերին: Նրանք միասին են գործել Հանրապետության ստեղծման, ամրապնդման և պաշտպանության դժվարին ժամանակներում, համարյա միասին են բանտարկվել չեկայի բանտում: 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ նրանք ազատվել են բանտից և կրկին լծվել Հանրապետության ամրապնդման աշխատանքներին: Ինչպես հայտնի է, Ս. Վրացյանը Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահն էր, իսկ Ա. Աստվածատրյանը եղել է կոմիտեի անդամ և Երևանի քաղաքագլուխ: Նրանք համատեղ պայքարում են երկրում կարգ ու կանոն ստեղծելու, ժողովրդի, հատկապես գաղթականության վիճակը բարելավելու գործում: Իսկ երբ ռուսական բանակի ճնշման տակ հազարավոր վտարանդիների հետ մի-

ասին նրանք էլ հայտնվեցին Իրանում, որտեղ Ս. Վրացյանը ստեղծեց Հայաստանի վտարանդիների կառավարություն, Ա. Աստվածատրյանը ևս ընդգրկվեց նրա կազմում:

Հետո նրանց ճանապարհները բաժանվեցին: Ս. Վրացյանը մեկնեց Եվրոպա, այնտեղից էլ ԱՄՆ և հետագայում հաստատվեց Բեյրութում: Մինչև կյանքի վերջը նա գլխավորում էր «Փալանջյան» ճեմարանը: Արշալույսը մեկնեց Չեխոսլովակիա: Նա ցանկանում էր ընդունվել Պրագայի համալսարանի գյուղատնտեսության բաժին՝ նպատակ ունենալով գյուղատնտեսի մասնագիտությամբ վերադառնալ Հայաստան: Բայց դա չհաջողվեց, և նա ընդմիշտ հաստատվեց Բելգրադում:

Ա. Աստվածատրյանի նամակների սևագրությունների մատյանում կան Ս. Վրացյանին հասցեագրված 1964 թ. հոկտեմբերի 10-ից մինչև 1966 թ. սեպտեմբերի 11-ը գրած 13 նամակներ: Ս. Վրացյանի պատասխան նամակներն ամենայն հավանականությամբ գտնվում են ՀՀԴ Բեյրութի արխիվում կամ «Փալանջյան» ճեմարանում: Հավանաբար այնտեղ պետք է լինեն նաև նրա այդ նամակների սևագրությունները, եթե Ս. Վրացյանը պահել է դրանք: Նամակների մեջ հիմնականում շոշափված է Հ. Թուրշյանի «Սարդարապատի հերոսամարտը» գրքին համապատասխան պատասխան տալու հարցը: Ա. Աստվածատրյանը սկզբում գտնում էր, որ դա ավելի լավ կարող է անել ինքը՝ Ս. Վրացյանը, բայց վերջինիս ի վերջո հաջողվել է համոզել, որ Հ. Թուրշյանի մասին պետք է և կարող է գրել Արշալույսը: Իսկ ինքն Ա. Աստվածատրյանի գրքի համար գրում է մի հիանալի առաջաբան, որը վերահրատարակված է Ա. Աստվածատրյանի «Սարդարապատի պատմաշինությունը և այլ երկեր» գրքում նաև անգլերեն և ֆրանսերեն թարգմանություններով:

Վարդան ԳՐԻԳՈՐՅԱՆ



\* \* \*

30.10.64

Սիրելի Սիմոն

Պատմեմ, թե հոկտեմբերի 5-ի նամակդ ինչ ճանապարհով հասավ ինձ: Մոտս եկավ մի անծանոթ պարոն՝ ձեռքին բռնած ճմրթված վիճակում նամակդ և պատմեց.

- Պարոն, այս նամակը ստացել եմ մի քանի օր առաջ. ծրարի վրա գրածից ոչինչ չկարողացա հասկանալ. հասկացա միայն, որ սխալմամբ է ինձ հասել: Ցանկանալով իմանալ, թե ո՞ւմ է գրում, բաց արեցի, բայց դարձյալ ոչինչ չհասկացա: Դուրս եկա փողոց, սրան-նրան ցույց տվեցի նամակը՝ հուսալով հասկանալ, թե ո՞ւմ է ուղղված այն: Իզուր աշխատանք: Մի քանի օր հետո իմացա, որ նամակը հայկական հաստատությունից է գրված, ուրեմն որևէ հայի պիտի հարցնեի: Բարեբախտաբար ճանաչում եմ մի հայի, տարա մոտը և նա ուղարկեց Ձեզ մոտ: Ներողամիտ եղեք, որ նամակը բաց եմ արել:

Մնացածը հասկանալի է: Հասցես սխալ ես գրել. մեր տան համարը 35 չէ, այլ 38: Սրանից առաջ գրած նամակները չեմ ստացել, երևի նույն պատճառով: Բարի եղիր, ուրեմն, մյուս անգամ հասցես սխալ չգրել, մի քիչ էլ պարզ գրիր, որ նամակաբերը կարողանա կարդալ:

Որովհետև քեզանից վաղուց ի վեր նամակ չունեի, թեև աչքս միշտ էլ «ճամբիդ է եղել», իսկ ինձ հետաքրքրում էր, թե Վ. Փափազյանի համար քեզ ուղարկած «Նարեկը» տեղ հասե՞լ է, թե ոչ: Ուստի մի 10-15 օր առաջ երկտողով դիմեցի նրան այդ հարցով, գրել եմ ճեմարանի հասցեով:

Գանք նամակիդ հարցերի պատասխանին:

1. Ո՞ր ամսին եղավ Արամի դիկտատորությունը:

- Նրան դիկտատոր ընտրեցին հունվար կամ փետրվար ամսին:

2. Արամից զատ Ալեքսանդրապոլի խորհրդածողովում ո՞վ կար:

Պատասխան. անցյալներում քեզ գրել եմ, որ Արամը այդ խորհրդածողովում չկար. չուզեց գնալ, երևանում իր ներկայությունն այդ օրերին ավելի կարևոր համարեց: Երևանից գնացին Սահակ Թորոսյանը, Թադեոս Տալանը, Եփրեմ Սարգսյանը, Արշալույս Աստվածատրյանը, էլ չեմ հիշում ով:

3. Երևանում անկախություն հայտարարելու փորձ չի՞ եղել:

Պատասխան. ոչ:

Եթե միայն ծիշտ եմ կարդացել գրածդ: Կարդում եմ շատ մեծ դժվարությամբ, այն էլ՝ ոչ բոլորը:

Թվում է, թե դու իմ նամակը չես կարդում, կամ գրածս մոռանում ես: Խնդրել էի, որ եթե հնարավոր է մեքենայագիր նամակ ուղարկես, ինչպես հողվածներդ: Այլապես ահագին ժամանակ եմ գործ դնում նամակների կարդալու համար և դարձյալ լրիվ չեմ կարողանում ջոկել, այն էլ կիսատ-պռատ:

Ա. Աստվածատրյան



\*\*\*

17.08.1965

Միրելի Մինոն

Շտապում եմ պատասխանել Տրոսիայից գրած օգոստոսի 4-ի նամակիդ: Երևում է, որ իմ վերջին նամակը չես ստացել: Ես այստեղ ամեն օր սպասում եմ քո գալու մասին հեռագրին, փոխարենը եկավ այս նամակդ: Եթե քեզ մոտ գալու բոլոր պարագաները նպաստավոր լինեին, դարձյալ չէի կարող գալ՝ արտասահմանի համար անցագիր ստանալու համար այստեղ անհրաժեշտ է 15 օր, այսինքն, եթե այսօր այդ մասին դիմում կատարեմ, անցագիր կստանամ սեպտեմբերի 2-5-ին, այսինքն, երբ դու այլևս այդտեղ չես լինի: Բացի այդ, կան նաև ներքին պատճառներ, որոնք այժմ իմ այստեղից շարժվելը անհնարին են դարձնում, այդ պատճառների մասին կարելի է պատմել, բայց չի կարելի գրել:


Գրում ես, որ շատ ես ուզում հետո տեսնվել, իսկ ես տասնապատիկ ավելի եմ ուզում քեզ տեսնել: Արշալույսներ դու շատ ունես, իսկ Մինոնն ինձ համար մի հատ է: Քեզ տեսնելու հույսս ես դեռ չեմ կորցնում. եթե ոչ Հունաստանում, գոնե Բեյրութում՝ տուրիստի հանգամանքով:

Տիկին Անահիտն ու Յողիկը գալուց ի վեր պատմում են և այդ պատմությունները վերջ չունեն: Ճիշտ է, այդ պատմությունները մեծ մասամբ անձնական բնույթ ունեն, մեր ազգականների մասին են (այնքան շատ են, որ թեև մոտ մի ամիս մնացել են այնտեղ, այնուամենայնիվ, բոլորի հետ չի հաջողվել տեսնվել), բայց ընդհանրապես միշտ լավ են պատմում, ինչը շատ մխիթարական է:

Ցավով կարդացի աչքերիդ մասին, լավ եմ հասկանում քեզ, նույն ձևով տառապում եմ և ես, թեև ոչ քո չափ: Պատահում է, որ օրերով չեմ կարողանում կարդալ. գրելն անհամեմատ հեշտ է:

Ուրեմն շուտով կստանամ «Կյանքիս ուղիներով»-ի հինգերորդ հատորը: Ուղղակի հիանում եմ քո աշխատունակության վրա այդ պայմաններում:

«Ազատ օր»-ի խմբագրության անունով անցյալներում (հուլիսի սկզբներին) մի նամակ էի ուղարկել Վահագն Տատրյանին հանձնելու համար, որը օգոստոսի 20-ին այստեղ պիտի լիներ և որը ցանկություն ուներ երկար ժամանակ ինձ հետ տեսնվելու: Զգիտեմ նամակս տեղ հասել է, թե ոչ: Ստացա օգոստոսի 15-ի նամակդ: Կարդացի ցավով, ցավով էլ պատասխանում եմ, թեև կասկածում եմ, որ այս նամակը Հունաստանում հասնի քեզ:



Արշալույս  
ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Ա. Աստվածատրյան



\* \* \*

1 նոյեմբերի 1965 թ., Բելգրադ

Սիրելի Սիմոն

«Սարդարապատի հերոսամարտը» գիրքը ստացա և կարդացի, կարդացի և անակնկալի եկա: Գրքի բովանդակության նյութը առավելապես այն անցուդարձն է, որ ստեղծվել էր Անդրկովկասում ռուսական հեղափոխությունից հետո ու նաև Սարդարապատի հերոսամարտը: Գիրքը բաղկացած է ութ գլուխներից, որոնցից միայն մեկն է նվիրված «Սարդարապատի ժողովրդական պատերազմին», ապա անցողակի խոսվում է այդ մասին վերջին երկու գլուխներում:

Չգիտեմ՝ այդ գիրքը դու կարդացել ես, թե ոչ: Եթե այո, զարմանում եմ, որ ինձ ես ուղարկում գրախոսական գրելու նրա մասին: Այդ առթիվ ես մի հոդված կգրեմ, սակայն գրախոսական գրելու համար իմ ունեցած տեղեկություններն անբավարար են: Ինչպես հիշեցի, խոսքը (գրքի մեջ) վերաբերում է առավելապես Անդրկովկասում ստեղծված քաղաքական վիճակին՝ ռուսական հեղափոխությունից հետո: Իսկ այդ վիճակին ոչ ոք այնպես իրազեկ է, ինչպես դու, շարունակ եղել ես դեպքերի կենտրոնում, կատարել ես կենտրոնական դեր: Միակ մարդն ես, որ հնարավորություն ունես այդ գրքին պատասխանել արժանավոր կերպով:

Ասացի, որ ես էլ եմ մտածում մի բան գրելու մասին, բայց այդ լինելու է ոչ գրախոսական, ոչ էլ պատասխան ըստ էության: Իսկ այդ մտքով անհրաժեշտ է գրել, որը կարող ես անել միայն դու, և ոչ թե սովորական գրախոսական, այլ շատ ավելի մանրամասն՝ գրքի ծավալով մի գործ: Այս մտքով քեզ չէի գրի, եթե աչքի առաջ ունենալով աչքերիդ վիճակը, չիմանայի, որ նախ տարեկան մի գիրք ես հրատարակում և ապա աշխատակցում ես մեր օրաթերթերին:

Սիրելի Սիմոն, շատ լավ կանես, եթե քո հաջորդ գրքով պատասխանես «Սարդարապատի հերոսամարտին»: Այս խորհուրդը տալով ես ի նկատի ունեմ առավելապես երկրի ընթերցողներին, գլխավորապես երիտասարդ կոմունիստներին: Վստահելի աղբյուրից գիտեմ, որ այդ երիտասարդությունը կարդում է մեր գրածները, իրեն հայ կոմունիստ է համարում և իր ազգային տրամադրություններով ու համակրանքով թեքվում է դեպի մեզ: Անգամ եթե իմ այս տեղեկությունները չափազանցություն են, բայց անկասկած, նրանք անհիմն չեն:

Տասնյակ տարիներ քար լռություն պահելով նախաբուլժնիկյան մեր ազգային կյանքի անցուդարձի մասին, այժմ հատուկ ուսումնասիրություն են հրատարակում այդ մասին, նպատակ ունենալով վարկաբեկել այդ կյանքի գլխավոր դերակատար կուսակցությունը՝ Հ. Յ. Դաշնակցությունը: Ոչ դատարկ խոսքով, ինչպես մինչև օրս, այլ լուրջ կերպով:

Հարցն այսպես է դրված: Կասկած չունեմ, որ այնտեղ՝ Երևանում սպասում են պատասխանի: Այդ պատասխանը, կրկնում եմ, քեզնից բացի ոչ ոք կարող է տալ, որովհետև այնպիսի տեղյակ մարդ գրքում շոշափված դեպքերին ու հարցերին, ինչպես դու ես, չկա: Հավատա, եթե ես ի վիճակի լինեի պատասխանելու, անվարան կգրեի, բայց իմ ունեցած տեղեկություններով անվայել է հրապարակ գալ: Հարցը միայն Սարդարապատին չի վերաբերում, այլ շատ ավելի լայն է:

Նդրում եմ չմոռանաս գրել Բեյրութում լույս տեսնող «Սփյուռք» շաբաթաթերթի ուղղության մասին:

Տրամադրությունս շատ վատ է, ծանր օրեր եմ ապրում, բայց նամակի բան չէ...

Սիրով ու կարոտով՝ Ա. Աստվածատրյան



\*\*\*

12 դեկտեմբերի 65 թ. Բելգրադ

Սիրելի Սիմոն

Նոյեմբերի 29-ին նամակիդ չկարողացա ժամանակին պատասխանել Անահիտի հիվանդության պատճառով: Ամեն անգամ, երբ նա հիվանդանում է, ես, պարզապես, գլուխս կորցնում եմ. սիրտը վատ է և շատ եմ անհանգստանում՝ հետևանքից վախենալով: Ավելի քան հիսուն տարի գեշ-լավ միասին ապրել ենք և այնպես ենք իրար սովորել, որ որևէ մեկիս կորուստը մյուս-մնացողի համար մահից վատ է լինելու: Դեռ ոտքի չի ելել, բայց քիչ լավ է:

Գանք նամակիդ: Իհարկե, Թուրքիանի գրքին միայն դու կարող ես արժանավոր պատասխան տալ: Ցավիլ պիտի, որ այդ բանը չես կարող անել: Տպավորությունս այն է, որ հարցը միայն Սարդարապատին չի վերաբերում, այլ մեր կուսակցության ամբողջ գործունեության մի շատ կարևոր շրջանին, որ ստեղծվել էր Անդրկովկասում ռուս հեղափոխությունից հետո: Այդ գործունեությունը վերեն վար ներկայացված է քաղաքական մուֆ հաշիվներով: Այդ շրջանի մեջ մտնում է նաև Սարդարապատի հերոսամարտը իբր վերջաբան:

Գիրքն առաջին անգամ կարդալուց հետո անմիջապես մի երկտող գրեցի քեզ: Այնուհետև սկսեցի երկրորդ անգամ կարդալ՝ հողվածիս համար, բայց նոր էի սկսել, երբ Անահիտը պառկեց, այնուհետև ամեն ինչ մոռացա, մոռացա նաև Թուրքիանին: Իմ սև բախտից Անահիտի հիվանդանալուց մի քանի օր անց, հիվանդացավ նաև Էմնաս, մեծ աղջիկս, որի հետ գրեթե միասին ենք ապրում (ճաշը նա է պատրաստում), ուրեմն, ընտանիքի (յոթ հոգուց բաղկացած) գրեթե ամբողջ հոգսը ծանրացավ ուսերիս: Բարեբախտաբար, Էմնաս շուտ ոտքի ելավ: Այժմ Անահիտի վիճակն էլ այնպես է, որ կարող եմ զբաղվիլ Հ. Թուրքիանի գրքով:

Իմ տվածը լրիվ պատասխան լինելուց հետո է լինելու: Երբ վերջացնեմ, կուղարկեմ քեզ:

Վերջերս իմ գրավոր աշխատանքներս շատ դանդաղ են առաջ գնում. նախ ընտանեկան բուսական-կենդանական հոգսերի պատճառով և ապա՝ այժերս շատ են խանգարում, երբեմն ստիպված եմ լինում երկար ընդմիջումներ անել: Եթե դրան էլ ավելացնես հոգեկան այն տազնապը, որն ապրում եմ, պատկերը լրիվ կլինի: Երանի եմ տալիս գնացողներին:

Հրավերքիդ համար շատ շնորհակալ եմ: Եթե մինչև գարուն սաղ-սալամաթ մնամ, հավանորեն օգտվեմ և գամ, եթե մինչ այդ չփոշմանես:

Խնդրում եմ պատասխանես այս հարցերին.

1. Հիշում ես, արդյոք, ինչո՞ւ ահաբեկվեցին Վաղարշապատի գավառապետ Ծ. Մերլինզը և Սուրմալուի գավառապետ Բոզոսյուվսկին:
2. Որքան հիշում եմ, Աշոտ Հովհաննիսյանը Լեզրանի պատվիրակության քարտուղարն էր և Հայաստանի խորհրդային իշխանության օրոք կուսակցական առաջին քարտուղարը, իսկ առաջներում՝ Գևորգյան ձեմարանի ուսուցիչներից: Չե՞մ սխալվում:
3. Դարձյալ, որքան հիշում եմ, Բաքվի Արևելյան ժողովուրդների համագումարի նախագահը Չինովնն էր. այո՞, թե՞ ոչ:  
Վերջացնելով նամակս, նորից խորհուրդ եմ տալիս հնարավորություն ստեղծես և պատասխանես Թուրքիանին:  
Բարևներ Անահիտի և իմ կողմից:

Համբույրներով՝ Արշալույս



19 դեկտեմբերի 65 թ., Բելգրադ

Սիրելի Սիմոն

Գրեթե հիվանդ վիճակում ստացա երկտողդ, որով հայտնում ես Արշամի [Խոնդկարյան.- Վ. Գ.] մահվան մասին: Գիտեի, որ հիվանդ է, բայց չգիտեի, որ այդքան ծանր է վիճակը:

Երբ իմացա, որ գնացել է Երևան և վերադարձել, գրեցի նամակ խնդրելով, որ գրի նախ իր տպավորությունների մասին և ապա թե՛ ինչպես հաջողեցրեց գնալը (դրանից առաջ գրել էր, որ մեծ ցանկություն ունի գնալու, բայց դա իր համար անհնարին քան է՝ դրան չունենալու պատճառով):

Նամակս մնաց անպատասխան: Հետո եկավ քո նամակը, որով հայտնում էիր, որ ըստ երևույթին «ֆրոնտը» փոխել է: Տված տեղեկությունը (300 դոլար վերադարձնելու պարագան) տարակուսանքի տեղիք տվեց: Նորից գրեցի իրեն, ինչպես ասում են՝ «շիպ-շիտակ» գրելով այդ մասին, հիմք ունենալով ժողովրդի այն խոսքը, որ «Բոսն ? Վաթսպ վա ԳՅՈՒՔՅ» (ռուս. «մախաթը ջվալի մեջ չես թաքցնի»): Դարձյալ պատասխան չստանալով՝ մտքովս անցավ, որ հավանորեն հիվանդ է, նամակս անհնարին էր, որ անպատասխան թողներ, եթե գրելու հնարավորություն ուներ: Համենայն դեպս, ստուգելու համար երկտող գրեցի Ար. Փափազյանին՝ խնդրելով տեղեկություն Արշամի առողջական վիճակի մասին: Պատասխանեց, որ հեռախոսով կապվել է տիկ. Հռիփսիկի հետ, որ նամակներս մնացել են անպատասխան Արշամի հիվանդության հետևանքով, որ անպայման կպատասխանի նամակներին, երբ ոտքի ելնի:

Գիտցածս այսքան է:

Արշամի մահը ծանրապես ազդեց վրաս, չդիմացա, սիրտս փոկ եկավ: Այո, տարորինակ ու փշոտ նկարագրի տեր էր, բայց սիրելի անհատականություն էր և լավ հայ՝ այս տեսակետից էսեռների մեջ գուցե միակն է. շատ ավելի բարձր, օրինակ, քան Վահան Մինախոյանը, որ բնավորությամբ շատ ավելի սիրելի էր:

Վերջին տարիներս հաճախ գրում էինք իրար: [Իր] մոտ ուներ իմ մի շատ ընդարձակ նամակը, որը խոստացել էր քեզ ուղարկել, բայց վախենում էր տեղ չհասնի, եթե գալս հաջողվի, կբերեմ հետս, եթե ոչ՝ ուզեմ-չուզեմ ուղարկելու եմ:

Գալով ինձ, մի քանի օր է լավ չեմ: Անահիտը վեր կացավ, ես վատացա, ոչ, իհարկե, մեռնելու աստիճան: Անում ենք բաներ, որ չպետք է անենք, բայց չանենք էլ չենք կարող յուր գնալ տիրող կարգերի հետևանքով: Մեր օրը վատ տեղ սևացավ:

Մախլաս:



Սիմոն ՎՐԱՅՅԱՆ

Համբույրներով՝ Ա. Աստվածատրյան



\*\*\*

Միրելի Միմոն

Քեզ գրած իմ վերջին նամակները (դեկտ. 12 և դեկտ. 18, 65 թ.) մնացին անպատասխան: Առաջինում խոսք կար նաև ինձ ուղարկված գրքի մասին: Խնդրել էի մի երկու տեղեկություններ: Երկրորդով պատասխանել եմ Արշամի մահվան մասին գրածդ նամակին: Մի՞թե նամակներս չես ստացել: Այս նամակովս խնդրում եմ պատասխանել Արամի մասին տրված հարցերին.

1. Ինչո՞ւ Արամը չէր մասնակցում 1914-ի Կարինի ընդհանուր ժողովին:
2. Ճի՞շտ է, որ Արամը բնավ բյուրոյի անդամ չի եղել, և ինչո՞ւ:
3. Ընդհանրապես ինչպե՞ս էին բյուրոյի անդամ լինում և վերաբերմունքը դեպ Արամը մինչև նրա Երևան գալը:

Այս հարցերը տալիս եմ, որովհետև գիտցածս բավարար չեմ համարում, և ինչ վերաբերում է ուղարկած գրքի կապակցությամբ աշխատանքիս, դա վերջացնելու վրա եմ: Միայն մի բան. վերջացնելուց հետո սովորական ձանապարհով չեմ կարող ուղարկել: Այդ ձանապարհը վստահելի չէ: Վերջին ամիսների ընթացքում Բեգլարին և Արտաշեսին ուղարկածներս տեղ չեն հասել: Տասնյակ տարիների ընթացքում նման բան չէր պատահել: Իմ վերաբերմունքը դեպի այս երկրի կարգերը միշտ էլ լավ են եղել, այդ մասին միշտ էլ լավ իմաստով եմ արտահայտվել ու կասկածի ենթակա չեմ եղել: Խ. Միության մասին գրածներս էլ մինչև վերջերս տեղ են հասել: Ինչպես մայիսի վերջին ուղարկածներս (որ Խորհրդային Հայաստանի մասին էին) տեղ չեն հասել՝ երեքից և ոչ մեկը: Բնական է, շատ վատ է ազդել վրաս: Այդ պատճառով իրավունք ունեմ կասկածելու, որ քեզ ևս ուղարկելու դեպքում տեղ չի հասնի:

Ի՞նչ դեր է խաղացել Ա. Սիարոնյանը մեր Հանրապետության առաջին վարչապետ նշանակելու գործում: Ինչո՞ւ ոչ Արամը, այլ Քաջագունին (ես իմ կարծիքն ունեմ, կուզեմ լսել և քո կարծիքը):

**Ա. Աստվածատրյան**

\*\*\*

15 փետրվարի 66 թ., Բեյրութ

Միրելի Միմոն

Ստացա հունվար 17-ի և 31-ի նամակների միաժամանակ, որոնց և ահա պատասխանում եմ: Նախ՝ առաջին նամակիդ: Արշամն իրոք դժգոհ է բաժանվել այս աշխարհից: Դժգոհ մեզնից, իր դաշնակցական ընկերներից: Գրել եմ քեզ, որ քո տված տեղեկության հիման վրա («Ֆրոնտը» փոխելու մասին) բաց սրտով գրեցի իրեն այդ մասին, առանց անունդ տալու: 2-3 օր առաջ ստացա Հռիփսիկին թելադրած իր ընդարձակ (8 էրես), բայց մահվան պատճառով կիսատ մնացած նամակը: Ուղարկողը Հռիփսիկն է, մի քանի անհուն ցավով գրված տողերով: Կարդացի հուզումով, կարդացի երկու անգամ: Ման-



Մրաման գրում է իր Երևան գնալ-վերադառնալու մասին և այդ առթիվ թե մինչև գնալը, թե այնտեղ ունեցած ապրումների, հանդիպումների, ինտերվյուների մասին: Այդ նամակն էլ կբերեմ հետս՝ քեզ մոտ գալու դեպքում:

Սարդարապատի մասին վերջին նամակումս, որքան հիշում եմ, գրել էի, որ վերջացնելու վրա եմ, այժմ էլ հա գրում եմ, որ նույն տեղն եմ: Ավելացնեմ՝ հավատա, որ «ինձնից անկախ պատճառներով»: Բայց, իհարկե, վերջացնելու եմ: Սպիտակի քաշած ունեմ մոտավորապես 70 երես: Այս ամսին չեմ կարող վերջացնել, հույս ունեմ, որ մյուս ամսին կվերջացնեմ, պայմանով, որ «ինձնից անկախ պատճառները» դարձյալ չխանգարեն: Իմ ժամանակը իմ տրամադրության տակ չէ:

Այդ առթիվ Երևանի մեր «բարեկամների» որդեգրած «նոր ուղղագրության» մասին գրածներդ, իհարկե, իրավացի են: Այդ ուղղագրության պտուղներից է և Հ. Թուրջյանի գրած գիրքը:

Ուրեմն «Հին թղթեր նոր պատմության համար»-ի երկրորդ հատորի պատրաստության վրա ես: Կեցցես: Առաջինն այնքան սրտովս էր, որ մի շատ ընդարձակ գրախոսական գրեցի և ուղարկեցի «Հուսաբերին»: Մի մասը լույս տեսավ, մնացածը մկները կերան... Բեզլարը ցավ հայտնեց՝ առանց բացատրելու «մկների» պարագան: Ոչին, պատահում է: Այդպես էլ պատասխանեցի ու մխիթարեցի: Սիրելի մարդ է և շատ լավ խմբագրականներ է գրում: Ի՞նչ կասես: Մեր խելոքները քիչ մնաց նրան կուսակցությունից հեռացնեն:

Արարատյան դաշտի դեպքի մասին, հիշում եմ, դու խնդրել էիր, բայց չեմ հիշում, թե ի՞նչ եմ գրել:

Այժմ, երկրորդ նամակի մասին: Նախ, շնորհակալություն տվածդ տեղեկությունների համար: Մասնավորապես Արամի մասին: Կոմսի և Արամի «ջուրը միևնույն առվով չհոսելու» պատմությունը ծանոթ է ինձ, բայց չնայած դրան Կոմսը, ի պատիվ իրեն, միշտ էլ լավ է արտահայտվել Արամի մասին, որը ես հաստատ գիտեմ:

Չես կարող երևակայել, թե որքան ուրախություն պատճառեց ինձ այդ նամակիդ վերջին նախադասությունը, որում խոսվում է «հնարավորություն ստեղծելու» մասին: Ինձ թվաց, թե իմ բանտի եթե ոչ դուռը, գոնե լուսամուտը բացվեց:

Երբ Սարդարապատը պատրաստ լինի, կիմացնեմ:

### Համբույրներով՝ Արշալույս

\* \* \*

30 մարտի 66 թ., Բելգրադ

Սիրելի Սիմոն

Մի քանի օր առաջ բաց նամակով պատասխանել եմ քո վերջին նամակին՝ հայտնելով, որ տոներին չեմ կարող գալ, ուրեմն՝ չսպասես ինձ: Միաժամանակ խոստացել եմ գրել-պատասխանել նամակիդ «Սարդարապատի» մասին գրությունս վերջացնելուց հետո: Մի երկու օր է, որ այս վերջին «խաթաբալայից» ազատվել եմ: Դուրս եկավ ավելի քան հարյուր տասը էջ: Ոչ մի դեպքում «սովորական»



Ճանապարհով չեմ ուղարկի: Նախորդ նամակումս գրել էի կարո՞ղ ես հնարավորություն ստեղծել ապա-  
հով ձանկով հանձնելու: Հույսս դրա վրա է: Սպասում եմ:

Կգարմանաս, եթե ասեմ «շտապել» եմ շուտ վերջացնել: Բայց չես գարմանա, եթե մոտից ծանոթ  
լինես իմ կյանքի պայմաններին: Աչքի անցկացրի գրածս: Անկեղծորեն ասած այնքան էլ սրտովս չե  
ամբողջության մեջ: Սա ոչ գրախոսական է, ոչ էլ լրիվ պատասխան Հ. Թուրջյանի գրածին, այլ այդ եր-  
կուսի խառնուրդը, այն էլ ոչ լրիվ կերպով: Կան հարցեր, որոնց մասին չեմ գրել, ինչպես օրինակ դի-  
վանագիտական, պատերազմական, հարցեր, որոնց մասին իմ ունեցած տեղեկություններն անբա-  
վարար են: Ուղարկում եմ քեզ իբրև խմբագրի, մինչև իսկ՝ իբրև պատասխանատու խմբագրի: Կար-  
ծում եմ, հասկանում ես միտքս: Եթե հարմար համարես հրատարակության համար: Չմոռանաս ինձ  
ուղարկել թերթերը: Մի բան էլ խնդրեմ. հրատարակության հարմար համարվելու պարագայում, եթե  
հնարավորություն ունիս, պատճենն ուղարկեք ամսագրին և «Հայրենիքին»: Սա աներեսության պես մի  
բան է, բայց մեղավորը աչքերս են: Չես հավատա, եթե ասեմ, որ երբեմն գրածս մեծ դժվարությամբ  
եմ ջոկում, բարեբախտաբար՝ երբեմն:

Այժմ գանք իմ Բեյրութ գալուն: Այս երկու օրս ես տեղեկություններ հավաքեցի իմ այդտեղ գալու պայ-  
մանների մասին և եկա այն տխուր եզրակացության, որ չպիտի կարողանամ գալ: Գլխավորն այս է,  
մանրամասնությունները հետաքրքիր չեն: Ծատ եմ ցավում: Այսբանը:

Կարոտով-սիրով՝ Արշալույս

Հ. Գ. Քաջազնունու «Հետ մահու» հատորը ստացել եմ շնորհակալությամբ:

\*\*\*

17 ապրիլի 66 թ., Բեյրութ

Սիրելի Սիմոն

Ապրիլ 5-ի նամակդ ստացա: Սպասում եմ յուզուլավ առևտրականին, որի հետ քեզ կուղարկեմ թե  
«Սարդարապատը» և թե Արշամի՝ տարիներ անց ինձ գրած նամակը: Այդ նամակով հանգուցյալը հե-  
տաքրքրական տեղեկություններ է տալիս թե սոց. հեղափոխականների և թե բոլշևիկների Հայաստա-  
նի կոմիտեների վերաբերմունքների մասին դեպի մայիսյան շարժումները: Այն ժամանակ, երբ Արմեն-  
կոմը դեմ է եղել այդ շարժմանը, էստռական կոմիտեն առանց տեղեկություն ունենալու Արմենկոմի այդ  
բացասական դիրքի մասին, տրամադիր է եղել մասնակցելու «ապստամբությանը»: Պատահականո-  
րեն այդ բանը տեղի չի ունեցել...

Ցավում եմ, որ այդ բանը իմացել եմ Վ. Մինախորյանի մահից հետո: Սա է եղել ապստամբությանը  
մասնակցելու առաջարկի գլխավոր պաշտպանողը Ջուրջյանի և մյուսների հետ՝ իրենց հետ ունենալով  
կոմիտեի մեծամասնության համաձայնությունը:

Արշամը դեմ է եղել՝ իր հետ ունենալով փոքրամասնությունը: Կկարդաս ու կիմանաս, կարծում եմ  
կգարմանաս:



Սարդարապատի մասին նախորդ նամակովս գրել եմ: Դա իմ բանը չէր, բայց արեցի՝ ընդառաջելով քո ցանկությանը: Եթե հարմար համարվի հրատարակության համար, այնպիսի ձև պիտի ընտրվի, որ երկրում կարդալու քո ցանկությունը կատարվի, ոչ մի կասկած, որ այնտեղ սպասում են այդ պատասխանին: Այդ իսկ պատճառով մեծ հույս ունեմ խմբագրի վրա:

Մեզանում էլ առանձին նորություն չկա: Միայն աչքերիս վիճակը լավ չէ: Այս նամակը դժվարությամբ եմ գրում, բարեբախտաբար, դա մշտական երևույթ չէ:

«Հառաջը» քո հողվածով ինձ կուղարկի տ. Հռիփսիկը:

Արշամի վերջին կիսատ մնացած նամակը չեմ ուղարկում. միտք ունեմ մի հողված գրելու (Արշամ Խոնդկարյանը Երևանում): Կուղարկեմ հետո:

Կարոտով ու սիրով՝ քո Արշալույս

\* \* \*

2 հուլիսի 66 թ., Բելգրադ

Սիրելի Սիմոն

Վերջին նամակիդ ժամանակին պատասխանել եմ՝ ուղարկելով ուզածդ տեղեկությունները իմ «կենսագրության» մասին: Այնուհետև քեզանից տեղեկություն չունեմ: Զգիտեմ գրածս տեղ հասել է, թե ոչ: Ինչո՞ւ ես լռում:

Եթե գրելու լինես, չմոռանաս պատասխանել այս հարցերին:

1. Թերթում կարդացի Հայաստանի Հանրապետության պատվիրակության ՄԱԿ-ին ներկայացրած տեղեկագրի [մասին] և զարմացա, որ մինչև այժմ մեր պատվիրակությունը գոյություն ունի և ո՞վ է վարում այն:

2. Ի՞նչ տեղեկություններ ունես Յակով Սիրունու մասին:

3. Բեզլարի մասին Երևանից տեղեկություն կա՞ և թե այսինքն այդ մասին «դափ և զուռնայի» ձայն լսել եք:

Ինչպե՞ս է առողջությունդ: Իմը այնքան էլ լավ չէ:

Համբույրներով՝ Արշալույս

\* \* \*

11 սեպտեմբերի 66 թ., Բելգրադ

Սիրելի Սիմոն

Մոտ քսան օր սրանից առաջ մի նամակ եմ գրել քեզ՝ խնդրելով, որ եթե «Սարդարապատ» գրքուկը լույս է տեսել, մի օրինակ ուղարկեք ինձ: Միտք ունեմ մի օրինակ էլ կազմել և ուղարկել ամսագրին (բացատրել եմ, թե ինչո՞ւ եմ այդ անում): Մինչև օրս ոչ մի պատասխան չստանալով՝ կրկնում եմ խըն-



Պիիրս: Եթե լույս չի տեսել, երկտողով իմացրու: Այդ դեպքում կպատրաստեն ձեռքիս տակ ունեցած սևագրությունից՝ երկար չսպասելու համար:

Այժմ առողջությունս լավ է, այլապես հուսահատ օրեր քաշեցի:

Համրույրներով՝ Արշալույս

Հ. Գ. Ուղարկել եմ փոփոխությամբ:

\*\*\*

10 հունիսի 1969 թ., Բելգրադ

«Համագգայինի» վարչության սիրելի ընկերներ

Նոր իմացա Ս. Վրացյանի մահվան մասին: Արտասովելով հայտնում եմ իմ խորին վիշտն ու ցավակցությունը այդ անփոխարինելի կորստի առթիվ...

Ա. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Ա. Աստվածատրյանի նամակը Բեգլար Նախասարգյանին Ս. Վրացյանի հորեղյանը նշելու առաջարկով: Նամակը գրվել է 1966 թ. դեկտեմբերի 26-ին Բելգրադից:

Սիրելի Բեգլար

Դու անկասկած հիշում ես, որ սրանից հինգ տարի առաջ Ամերիկայի մեր ընկերները տոնեցին Ռուբեն Դարբինյանի գործունեության հիսնամյա հորեղյանը: Կարդալով այդ մասին մեր թերթերում, մտածեցի, որ լավ կլիներ եթե մեր մյուս վաստակաշատ ընկերոջ, Ս. Վրացյանի, գործունեությունը ևս գնահատվեր ու տոնվեր: Եթե հայրդ կենդանի լիներ, ես անպայման այդ մտքով կդիմեի նրան՝ խնդրելով գործի նախաձեռնությունն անձամբ առնի: Գրեցի Կարոյին (Սասունի), որի հետ նույնպես մոտ եմ, ցանկություն հայտնելով, որ Բեյրութի մեր կուսակցական կամ մշակութային մարմիններից մեկն ու մեկը նախաձեռնությունն իր վրա առնի՝ հիշյալ իմաստով: Միաժամանակ ցանկություն հայտնեցի իմանալ իր կարծիքը: Դա 1959-ի օգոստոսին էր:

Կարոն շատ ջերմ վերաբերմունք ցույց տվեց առաջարկիս և խոստացավ այդ մտածումը իր կողմից առաջարկել տեղի մտավորական շրջաններին: Խոստանում էր այդ քայլն անել: Անցան ամիսներ, Ընդհանուրն էլ տեղի ունեցավ, բայց մեր (իմ և Կարոյի) արձարձած հարցի մասին ոչինչ չսովեց: Նորից այդ մասին գրեցի Կարոյին, գրեցի, որ եթե որևէ պատճառով անհարմար է համարում տեղի հաստատությունների միջոցով հրապարակ հանել այդ հարցը, կարելի է գլուխ քերել այլ ձևնապարհով:





# ՀԵՐԱՎԿԼԵՍԻ

## 5-րդ

### ՍԽԻՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԵՆԸ



**Մ**եր կյանքի իրադրական բազմաթիվ պահեր, անշուշտ, կարող են հիշեցնել հայրենական ու այլոց միջերի այս կամ այն դրվագը: Իհարկե, գայթակղիչ են, կանչող, հմայող դիցաբանության սյուժետային ու իմաստային կաղապարները, սակայն առանց քո ձշգրիտ չափերն իմանալու, և դիցաբանությանը՝ նույնպես, դու իրավունք չունես զբաղեցնելու այդ կաղապարները: Նմանությունը դեռևս նույնությունն է: Մանավանդ՝ նմանությունն էլ, հաճախ, խաբկանք է լինում:

Որքան էլ անհավանական թվա, մեր ժամանակներում էլ դեռևս ապրում են գիրք-գրականության հետ մտերմությունը չկորցրած մարդիկ, որոնց ներկայությամբ, պարզապես, անհարմար է դիցաբանությանը մոտենալ առանց պատշաճ հարգանքի, զգուշավորության, երկյուղածության:

Նրանք՝ գիրք-գրականության հետ մտերմությունը չկորցրած մարդիկ, լսելով «Ավգյան ախոռները» մաքրելու Լևոն Տեր-Պետրոսյանի առաջարկը, պիտի որ տարակուսանքի մեջ ընկած լինեն, թե այդ ինչպե՞ս եղավ, որ Հերակլեսն ախոռը մաքրելու դիմաց, Ավգիաս արքայից ընդամենը 300 գլուխ անասուն պահանջեց (մեկ տասներորդ մասը՝ 3000 գլուխ անասունից), իսկ ինքն, ահա, ողջ արքայությունն է ցանկանում ունենալ:

Սյուժեի այս առաջին խաթարումն արդարացնելու համար, գուցե ասեք՝ մեր ախոռներն ավելի՞ կեղտոտ են: Բայց Ավգիաս արքայի ախոռները չէին մաքրվել ուղիղ երեսուն տարի, մերը՝ տասնհինգ: Եվ այդ տասնհինգ տարվա կեսի արքան էլ ինքը՝ Լևոն Տեր-Պետրոսյանն է եղել: Որևէ մեկը հո չի՞ պնդելու, թե Լևոն Տեր-Պետրոսյանն իր հաջորդին մաքրամաքուր ախոռներ է ժառանգել: Եվ, ուրեմն, գիրք-գրականության հետ դեռևս մտերմությունը չկորցրած մարդիկ պիտի նկատած լինեն, որ դիցաբանության պատումի ոչ միայն սյուժեն է խաթարվել այդ առաջարկով, այլև՝ տրամաբանությունը: Շփոթ է առաջացել. Լևոն Տեր-Պետրոսյանը Ավգիաս է, թե՛ Հերակլես: Կարծես թե Հերակլես է, երբ ուզում է Ավգիասի ախոռները մաքրել, բայց երբ խոսք է գնում իր ախոռների մասին՝ Ավգիաս է: Շփոթն ավելի է խառնաշփոթվում, երբ իր խոսքին հետամուտ լինելով, պարզում են, որ Ավգիաս-Հերակլես-Լևոն Տեր-Պետրոսյանը հերակլեսությամբ ցանկանում է կրկին Ավգիաս դառնալ:

Ամերիկյան, թե մի այլ երկրի հին կինոնկար հիշեցի. տաքսու վարորդը, տեսնելով, որ ուշանում է տուն մտած ուղևորը, ինքն էլ է ներս գնում և դառնում վկա ընտանեկան խձձված մի տեսարանի: Պարզաբանումների կծիկը բացվում է և պարզ-



վում, որ տանտերը իր կնոջ հայրն է, իսկ կինը տատն է իր դստեր, դուստրը մորաքույրն է իր որդու, որդին հայրն է իր հոր և նման անհեթեթ բաներ: Խեղձ տաքսու վարորդը, գլուխը կորցրած, մի ձեռքը կանթում է կոնքին, մյուսին ծորակի տեսք տալիս օդում և հուսահատված ասում. «Իսկ ես թեյնիկ եմ»:

Սակայն շարունակենք դիցաբանությանը Լևոն Տեր-Պետրոսյանի ոչ պատշաճ հարգանքով մոտեցման քննությունը: Հերակլեսը, երբ ստանում է Ավգիասի համաձայնությունը (300 գլուխ անասունի խոստումը), միայնակ է քանդում ախոռների պատերը և երկու գետերի՝ Ալփեոսի ու Պիմոսի ջրերը բաց թողնում երեսուն տարվա կեղտի վրա: Մաքրում է մեկ օրում: Միայնակ: Իսկ Լևոն Տեր-Պետրոսյանը մեր կուտակված կեղտը խոստանում է մաքրել երեք տարում, պայմանով, որ նախ արքա դառնա, հետո՝ Հերակլես: Եվ որովհետև այսօրվա Ավգիասը ոչ 300 գլուխ անասուն է խոստանում տալ և ոչ էլ, մանավանդ, արքայությունը, Լևոն Տեր-Պետրոսյանին օգնողներ են պետք: Ո՞ւմ ասես նա չի կանչում օգնության: Նույնիսկ Դաշնակցությանը: Նույնիսկ Վազգեն Մանուկյանին:


Մոռանանք մի պահ դիցաբանությունը և մերօրյա հարց տանք Լևոն Տեր-Պետրոսյանին. եթե, իրոք, մաքրել է պետք մեր ախոռները և եթե այդ ախոռները հնարավոր է մաքրել բոլոր ուժերի միավորումով, եթե, իրոք, կարևորը ախոռների մաքրումն է և ոչ թե մի այլ բան, ապա ինչո՞ւ եք կարծում, թե այդ գործը չեն կարող անել բոլոր այն ուժերը, ում օգնության եք կանչում: Ինչո՞ւ դուք չեք օգնում նրանց:

Ուշադիր ընթերցեք ձեր իսկ դիմումը այդ ուժերին և կտեսնեք, թե ինչպես եք վիրավորում նրանց, թերևս նաև առանց հասկանալու, որ վիրավորում եք: Իսկ եթե հասկանալով եք ասել այն, ինչ ասել եք, ապա ավելի վատ ձեզ համար:

«Մենք, այսինքն՝ անձամբ ես և իմ կողմնակիցները (արքայական ոճ է, չէ՞), մեզ ամբողջովին դնում ենք ձեր տրամադրության տակ,- հայտարարում եք դուք:- Մեզ պարզապես օգտագործեք որպես գործիք՝ հանցավոր վարչախնդրից ազատվելու և իշխանության ձգտման ձեր օրինական իրավունքն իրացնելու նպատակով, ինչի համար ձեզանից պահանջվում է երեք տարի, գուցե ավելի քիչ»:

Ո՞վ է այսպիսի մեծամիտ գործիք տեսել. թե մուրձ է, թե մուրձ խփող, թե սղոց է, թե սղոցող... Ո՞վ է տեսել, որ հասուն տղամարդկանց ու հասուն կուսակցություններին երեխայի տեղ դնեն, ասեն՝ քեզ լավ պահիր (այսինքն՝ օգնիր ինձ), համբերիր երեք տարի և ես քեզ կոնֆետ կտամ:

Իսկ ես՝ միամիտս, կենդանի մարդկանց, ժամանակակիցների հետ այսպես վարվողից փորձում էի պատշաճ հարգանք, զգուշավորություն, երկյուղածություն ակնկալել հազարավոր տարիներ առաջ ստեղծված դիցաբանության նկատմամբ: Ինչպիսի՞ զուր ջանք...



**Ռուբեն ՀՈՎՍԵՓՅԱՆ**



Ի՞նչ է գրել «Դրոշակը»  
100 տարի առաջ

№ 11—12 (188)

XVII ՅԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ 1907

„Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.

# ԴՐՈՇԱԿ

Adresse:

REDICTION DU JOURNAL

„Droschak”

GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԱԶՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

## Ա Մ Ս Ա Լ ՈՒ Ր Ե Ր

**Հայաստանի մեջ բարենորոգումներ.**— Շատ հատկանշական է, որ առաջին դիմումները, ի նպաստ Հայաստանի բարենորոգումներուն, կըլլան Իտալիո և Գերմանիո դեսպաններուն կողմէն: Վեց օր առաջ, սոյն երկու դեսպանները հանդուգն կերպով Դռան ուշադրությունը հրավիրեցին անհապաղ վարչական բարենորոգումներ մտցնելու պետքին վրա հայկական վեց վիլայեթներուն մեջ, ուր, քան երբեք, կարգը չէ վերահաստատված և ուր մեծ տերություններու միջամտությունը չէ կարող այլևս երկար ուշանալ: Գերմանիո այսպիսի դիմումներու նախաձեռն ըլլալը ցույց կուտա, թե այդ պետությունը կանխապէս համաձայնության եկած է Դռան հետ այդ դիմումի մասին: Նոյնպէս Իտալիո մասնակցությունը

ապացուց է անոր իր դաշնակցին հետ համերաշխ գտնվելուն, առջևը առնելու համար թյուրք կայսրության մեջ եվրոպական ուժ միջամտության:

Սակայն Հայաստանի մեջ կացությունը այնքան ծանր է, որ Դուռը շատ լավ կըմբռնէ այն նոր դերը, որ տերությունները տրամադիր են կատարել և որու մասին իրեն լոր տրված է ժամանակին այն տերության կողմէ, որ սովորություն ունի Թյուրքիո լրատուն ըլլալու (ըսել կուզէ Գերմանիան):

Լուր կա, թե հայկական խումբերը, որոնց մեջ կան քրիստոնյաներ և մյուսյուզմաններ, այնպէս կը գործեն Պիթիսի և Վանի վիլայեթներուն մեջ, որ կրնան վերջ ի վերջո հաղթանակել քրդական ահ ու սարսափները, որ ավելի քան երբեք, զարհուրելի է: Մուշի մոտ, քրդական զորավոր խումբ մը, որ թալա-



նած և ավերած էր երկու մահմեդական գյուղեր, խառն հայ խումբերու մեկեն պարտություն կրելով, կծիկը կը դնե. հայերը հաջողեցան գողցված առարկաները ետ առնել և երկու գյուղերու բնակիչներուն վերադարձնել: Թյուրք իշխանությունները լիովին կը բացակայեն, ժողովուրդը իր ձեռքով կը տեսնե արդարությունը: Ահա թե ինչով է փրկարար հայ խումբերու գործունեությունը:

\* \* \*

Դուռը որոշեր է Անատոլուի ոստիկանության մեջ նույն բարենորոգումները մտցնել, ինչ որ գործադրած է Էտիրնեի և Իզմիրի ոստիկանությանց մեջ: Այդ նպատակով սպայակոյտի բաժնի պետ Օսման Լիզամի փաշան Էրզրում ղրկված է:

\* \* \*

Մինչև դեկտ. 18 Էրզրումի մեջ ձերբակալված են 130 մահմեդականներ, որոնք կը պատկանեին թյուրք կոմիտեին: Երզնկայի մեջ կսպասվի ուրիշ ձերբակալումներու և արտաքսումներու: Սեյֆուլահ փաստաբանին մոտ նորերս գտնված է սուլթանին ուղղած աղերսագիր մը, ծածկված ստորագրություններով, որ կը պահանջեր ազգային Խորհրդարան:


\* \* \*

Կայացավ Ռուսաստանի 2-րդ Դումայի 55 սոց.-դեմոկրատ պատգամավորների դատը: Նրանց մի մասը արդեն աջողել էր

փախչել արտասահման: Հայտնի է, որ ստոլիպինյան կառավարությունը մեղադրում էր նրանց՝ գաղտնի տեռորական միջոցներով պետական կազմը տապալելու ձգտումների մեջ: Չնայած որ այդ մեղադրանքը ինքնին տրամաբանական մի հակասություն էր - քանի որ սոց.-դեմոկրատները առհասարակ հեռու են տեռորական-հեղափոխական միջոցներից - չնայած որ հիմնական և ոչ մի սպացույց կար, այնուամենայնիվ պատգամավորները դատապարտվեցին զանազան պատիժների, սիբիրյան աքսորի, իսկ մի քանիսը տաժանակիր աշխատանքի՝ ամբողջ հինգ տարով...

\* \* \*

Ֆինլանդիայում նորից եռանդով մղվում է ռուսացման հետադեմ արշավանքը: Ընդհանուր նահանգապետ Գերարդը հրաժարական է տվել, հայտարարելով, որ Պետերբուրգի քաղաքականության համակերպել չի կարող: Լուր կա, որ ցարը մտադիր է նրա տեղը նշանակել հռչակավոր գեներալ Կաուլբարսին, որ Օդեսսայի հրեական բոլոր պոգրոմների կազմակերպողն է և որ այժմ իր պաշտոնից հրաժարված լինելով՝ գտնվում է Պետերբուրգ:






**Նյութեր**

**Յ.Յ. Դաշնակցության պատմության համար**

Ե հատոր, Բեյրութ, 2007, 530 էջ:



**Յ**այ Յեղափոխական Դաշնակցության արխիվային նյութերի հրատարակությունը սկսվել է դեռևս 1934-ից: Նախ՝ Սիմոն Վրացյանի անմիջական դասավորումով «Հայրենիք» ամսագրում հավելվածի տեսքով լույս տեսան ՅՅԴ գործիչների եւ մարմինների նամակներ, շրջաբերականներ, ժողովների որոշումներ, մարտական առանձին գործերի կամ գաղտնի բանակցությունների հետ կապված փաստաթղթեր, եւ ապա՝ այդ նյութերը հետզհետե մաս կազմեցին «Հայրենիքի» էջերին՝ որպես սովորական հրապարակումներ: Առաջին անգամ առանձին գրքի տեսքով Յ.Յ. Դաշնակցության Կեդրոնական դիվանի արխիվային հարուստ նյութերը հրատարակվեցին ՅՅԴ Ամերիկայի Կեդր. կոմիտեի կողմից՝ 1934 եւ 1938 թվականներին՝ կազմելով «Դիվան Յ.Յ. Դաշնակցության» երկհատորյակը: Այս աշխատանքին զուգահեռ ՅՅԴ արխիվային նյութերի պարբերական հրապարակումներ կան այն տարիների «Դրօշակի» եւ 1933-1938 թթ. Ս. Վրացյանի կողմից Փարիզում հրատարակված «Վեմ» հանդեսի էջերում եւս:

Երկրորդ աշխարհամարտը, ցավոք, կասեցրեց արխիվային նյութերի հրատարակության աշխատանքները, որոնք, սակայն, նոր թափ ստացան 1965 թվականից, երբ աշխարհով մեկ նշվեց Մեծ եղեռնի հիսնամյակը: Այս անգամ արդեն «Հայրենիքի» հրապարակումները նվիրված էին 1915-ի ձերբակալություններին, ջարդերին ու տեղահանություններին: Արխիվային նյութերի այդ մասնակի հրատարակությունն էլ դադարեց 1966 թ. փետրվարին: Ս. Վրացյանի կողմից հրատարակված «Հին թղթեր նոր պատմության համար» հատորը, որ լույս էր տեսել 1962-ին, փաստորեն վեջին գիրքն էր, որ ՅՅԴ կենսագրության արխիվային հարուստ նյութ էր պարունակում:

«Նյութեր Յ.Յ. Դաշնակցության պատմության համար» շարքը, որի հրատարակմանը ձեռնամուխ եղավ Դաշնակցու-

թյան հայտնի տեսաբան Յրաչ Տասնապետյանը, ՅՅԴ Բյուրոյի համոզմամբ, միանալով «Դիվանի» երկու հատորներին եւ «Հայրենիքում» ու մյուս պարբերականներում հրապարակված նյութերին՝ «յաւելեալ լոյս պիտի սփռէ մեր կուսակցութեան առաջին երեսնամեակին (ապա նաեւ յաջորդող տասնամեակներու) յեղափոխական-քաղաքական-հասարակական գործունեութեան վրայ, իւրան հանդիսանալով ու հնարաւորութիւն ընծայելով ներկայ եւ ապագայ պատմագիրներուն՝ ամբողջական եւ առարկայական գնահատանքը ընելու անոր պատմական մեծ առաքելութեան եւ հերոսական գործունեութեան»: Սակայն Յրաչ Տասնապետյանը կարողացավ կազմել ու հրատարակել ծավալուն շարքի միայն առաջին չորս հատորները, որոնցից վերջինը թվագրված է՝ 1982: «Նյութերի» հիսգերորդ՝ Ե հատորին բախտ էր վիճակված լույս աշխարհ գալու շուրջ քսանհինգամյա ընդմիջումից հետո՝ հայագետ Երվանդ Փամբուկյանի խմբագրությամբ, ով այդ տեսական դադարը՝ Ե հատորի ուշացումը, ներկայացվող հատորի առաջաբանում պատճառաբանել է լիբանանյան քաղաքացիական պատերազմով եւ Յրաչ Տասնապետյանի առողջական վիճակի վատթարացմամբ: Վերջինս, որ զգալի ներդրում է ունեցել նաեւ Ե հատորի նյութերի հավաքման ու համակարգչային մուտքագրման աշխատանքներում, մեծ փափագ է հայտնել հրատարակված տեսնել նաեւ Զորորդ Ընդհանուր ժողովի նյութերի ծավալուն թղթածրարը: Մենք այսօր վկան ենք այդ իղծի իրականացման եւ հնարավորություն ունենք մեկ ամփոփ աշխատությամբ հասու լինելու ժամանակի փաստագրական հարուստ նյութին:

Վավերագրերը, որ մինչեւ այժմ մեծավ մասամբ պեղված չէին, որպես սկզբնաղբյուր հարուստ նյութ են պարունակում ոչ միայն Յ.Յ. Դաշնակցության, այլեւ հայոց նորագույն պատմության ամբողջական ուսումնասիրության համար: Եվ սա այն պատճառով, որ կազմակերպական, քաղաքական, գաղափարական կամ մարտական բնույթի փաստաթղթերի կողքին ամբարված են նաեւ Հայաստանին ու հայ ժողովրդին վերաբերող տեղագրական, ազգագրական, վիճակագրական, մշակութային եւ այլ բազմաազգար վավերագրեր:

Ավելացնենք նաեւ, որ «Նյութերի» Ե հատորը ձոնված է Յրաչ Տասնապետյանի հիշատակին եւ հրատարակվել է տեր եւ տիկին Գաբրիել եւ Անժել Չեմպերճյանների նվիրատվությամբ:





## Մոնի Հովսեփյան

**Ճ**ակատագրի բերումով ես ծանոթ եմ Մոնի Հովսեփյանի արվեստին հենց նրա ակունքներից: Մեծ Պիկասսոն ասում է, որ մեզ համար կարևոր չէ ստեղծագործությունը, կարևորն այն անհատն է, որն արարել է այդ ստեղծագործությունը: Մոնի Հովսեփյանի դեպքում մեծ նկարչի խոսքն ավելի քան դիպուկ է հնչում: Մոնին չափազանց ինքնատիպ մարդ է: Ինքնատիպ իր կենցաղով, իր մտածողությամբ: Եւ ահա այդ մտածողությունից են ծնվում նրա զուտ Մոնիական ստեղծագործությունները:

Երբեմն նրա կտավներում կարելի է զգալ սյուրրեալիզմի կամ ուրիշ մի ուղղության ներկայությունը, սակայն ի վերջո Մոնին այնքան պարփակված է ինքն իր մեջ, որ ստեղծում է լոկ ինքն իրենը, որն առանց չափազանցության ուրույն և նոր

խոսք է:

Ես համոզված եմ, որ Մոնի Հովսեփյանի արվեստին սպասում են նորանոր բարձունքներ: Այստեղ կարևորը դարձյալ նկարչի անհատականությունն է, ինչը, ըստ իս, մեզ շատ ուրախանալու առիթներ կտա:

Վարուժան Վարդանյան





«ԴՐՈՇԱԿ» - ի պատկերասրահ





